



ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊԲՈՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

V—VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

VIII—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐ



ՀԱՅԿԱԿԱՆ

-6 NOV-2001

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԼՈՒԺՈՎՈՐԱԿՈՒՄ-ԱՑ

891.89(07)

Մ-73-

այր

ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

1. ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

V—VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

VIII—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

ԼՈՒԺՐՈՎՈՐԱԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

1940

0 10 17.07.192013

61.905

Պատ. Խոմքիկիր՝ Աս. Աստվածյան
Տել. Խոմքիկիր՝ Հ. Կարապետյան
Մըրազրէ՛ Վ. Պողոսյան
Կոնտրու Մըրազրէ՛ Ս. Շահբագյան

ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒ- ԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Միջնակարգ դպրոցի 5—7-րդ դասարանների գրական ընթեր-
ցանության և 8—10-րդ դասարանների գրականության ծրագրերի
ներկա հրատարակությունը հիմնականում անփոփոխ և նախորդ
հրատարակության համեմատությամբ։ Հանված և նախորդ հրա-
տարակության սկզբի ծանուցումը, վոր վերաբերում եր այդ հրա-
տարակության մեջ կատարված փոփոխություններին, շատ աննշան
խմբագրական փոփոխություն և կատարված 5—7 և 8—10 դասա-
րանների ծրագրերի բացատրականներում և վորոշ հավելում և
կատարված 8-րդ դասարանի ծրագրում (ավելացված և «Ներածու-
թյունը» և լրացումներ ու խմբագրական ձշտումներ են կատարված
հայ գրականության հին և միջին շրջաններին վերաբերող գլուխ-
ներում):

Մյուս բաժիններում (9 և 10-րդ դասարաններ) կատարված հն
միայն խմբագրական ու սրբագրական ուղղումներ և արտադպրո-
ցական ընթերցանության առաջարկվող ցանկերին ավելացված հն
խորհրդային գրողների մի քանի նոր յերկեր, վորոնք հրատա-
րակվել են վերջին տարվա ընթացքում:

8/VII 1940 թ.



3593

40

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5—7 ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Դպրոցում մայրենի լեզվի դասավանդման ընդհանուր խընդիրները վորոշված են Համբկ(բ)կ Կենտկոմի 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշման մեջ. «Մայրենի լեզվի ծրագիրը պետք է ապահովի իրոք սիստեմատիկ և ճշգրիտ շրջագծված գիտելիքների յուրացումը, ինչպես և ճիշտ կարդալու, գրելու և խոսելու կայունակություններ, աշակերտների ուսման աշխատանքի պրակտիկայում մացնելով ինքնուրույն գրավոր աշխատանքներ, քերականական վերլուծություն և այլն, ինչպես դասարանում, այնպես ել տանը»:

Համաձայն այդ խնդիրների, հայոց լեզվի և գրական ընթերցանության դասընթացը բաժանվում է յերեք հիմնական մասերի. 1-ին մաս՝ քերականություն ուղղագրության և կետադրության հետ, 2-րդ մաս՝ բանավոր և գրավոր խոսքի դարգացումը, 3-րդ՝ գրական ընթերցանություն:

Մինչև այժմ դպրոցում հայոց լեզվի դասավանդման խնդիրը լուծվում էր անբավարար չափով: Այդ յերկույթի հիմնական պատճառներից մեկը յեղել է այն, վոր քերականության, խոսքի կուտարայի և գրական ընթերցման մեջ յեղել է արհեստական վնասակար ճեղքվածք: Այդ ճեղքվածքը բացասաբար է անդրադառնում բոլոր բաժինների վրա. քերականությանը տրված պարագանքուն դուրս է մնացել կենդանի լեզվի նյութը, խոսքի կուտարայի գծով տարվող աշխատանքը կտրված է նրա կառուցվածքի և ձևի ուսուցումից, գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրումը հաճախ վերածվել է սխեմատիկ դատողությունների:

Մինչեռ այդ բաժինները, վորոնցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ խնդիրներն ունեն, պետք է որգանական կազմի մեջ լինեն միմյանց հետ և ծառայեն միանական նպատակին.

այն ե՞ւ աշակերտությանը տան քերականության մեջ շարադրված հայոց լեզվի որենքների և յերկույթների մասին գիտելիքների սիստեմատիկ մի ամբողջություն, պատվաստել գիտակցական ընթերցանության, գրագետ գրելու և ճիշտ խոսելու ամուր ունակություններ: Սրա արդյունքը լինելու յե այն, վոր աշակերտությունը պետք է պարզ պատկերացում ունենա հայոց լեզվի նրաշանակության մասին, նրա կառուցվածքի և քերականական ձեմերի, նրա բառապաշտարի հարստության մասին, նրա պատմության մի քանի կարևոր մոմենտների մասին: Աշակերտները պետք է կարողանան հաշիվ տալ կարդացած ամբողջ ստեղծագործության և նրա առանձին հատվածների բովանդակության մասին, հասկանալ նրա իդեական նշանակությունը, քերականական և տրամաբանական տեսակետից ճիշտ կառուցել սեփական բանավոր և գրավոր խոսքը:

Համաձայն ուսումնական պլանի, քերականության սիստեմատիկ դասընթացը վերջանում է 7-րդ դասարանում:

8—10 դասարաններում կրկնվում է հայոց լեզվի այն դասընթացը, վոր անցել են վոշ լրիվ միջնակարգ դպրոցում. տարվում է աշխատանք ուղղագրական ունակությունների հետագա ամրապնդման գծով. այդ պարագանունքները լինելու յեն գլխավորապես հիշյալ դասարանների աշակերտության զանազան տեսակի գրավոր աշխատանքների կապակցությամբ (շարադրություններ, կոնսակետներ, թեղիններ և այլն) և անհրաժեշտ գեպքում քերականական վերլուծության, ուղղագրության և կետադրության առանձին դասերի կապակցությամբ:

Ինչ վերաբերում է լեզվագիտական տարրերին, ապա նըրաւոնք մասնակիորեն տրված են Արարատ Ղարիբյանի և Գ. Սեվակի՝ 5—7 դասարանների քերականության դասագրքերում, և մասնակի կերպով աշակերտությունն անցնում է պատմագրական դասընթացի կապակցությամբ (հատվածներ և Աբովյանից, Մ. Նալբանդյանից, Գ. Աղայանից, Հ. Թումանյանից, Պ. Պողջյանից և այլն):

Հայոց լեզվի՝ վերկում հիշատակված աշխատանքի տեսակների ներքին սերտ կապը բացառում է տարրեր բաժինների մեջ ժամերի մեխանիկական բաշխման ամեն մի հնարավորություն, ուստի դասատուն պարտավոր է ավելի ուշադրությամբ և խստությամբ մոտենալ ծրագրային նյութի պլանավորմանը: Նրա տրա-

մադրության տակ կան հայոց լեզվի և գրական ընթերցանության համար հետևյալ քանակի ժամերը շաբաթվա մեջ.

5-րդ դասարան— 7 ժամ

6-րդ դասարան— 6 ժամ

7-րդ դասարան— 4 ժամ:

Յենելով ժամերի այդ քանակից դասառուն պլանավորում ե ծրագրային նյութը՝ քերականության, գրական ընթերցանության և լեզվի կուլտուրայի համար առանձին-առանձին:

Այդ դեպքում կարելի յե յենել մոտավորապես հետևյալ հաշվից. Հինգերորդ դասարանում հայոց լեզվի և գրականության ընթերցման համար նախատեսնված ժամանակի կեսը՝ այսինքն վոչ պակաս շաբաթական յերեք ժամ պետք է հատկացնել քերականությանը և ուղղագրությանը և նույնքան ժամանակ ել գրականության ընթերցմանը և վարժություններին, վորոնք կապված են բանավոր և գրավոր խոսքի հետ: Նույնպիսի հարաբերություն այդ բաժինների համար մոտավորապես հարկավոր է նկատի ունենալ 6—7 դասարանների համար: Մասնավորապես գրական ընթերցանության համար հարկավոր է միջին հաշվով առանձնացներ յուրաքանչյուր դասարանում, շաբաթվա մեջ յերկու ժամից վոչ պակաս:

ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

5—7 Դ Ա Ս Ա Բ Ա Ն Ե Բ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Նպատակ ունենալով իսպառ լիկիվիդացիայի յենթարկել 5—7 դասարանների հայոց լեզվի և գրականության դասավանդման միջև գոյություն ունեցած ճեղքածքը, այս դասարանների ուսումնական պլանում սահմանվում ե ժամանակի ընդհանուր քանակ՝ այդ առարկաների համար. Հենց առարկայի անվանումը տրվում ե անխղելի կապի մեջ՝ հայոց լեզու և գրական ընթերցանություն:

Առարկայի անվան մեջ նշվում ե և այն տարբերությունը, վոր գոյություն ունի բարձր դասարաններում (8—10) և ցածր դասարաններում գրականության դասավանդման բնույթի մեջ: Արդեն ինքը, դասընթացի՝ գրական ընթերցանություն անվանումը ցուց է տալիս, վոր ուսուցչի աշխատանքի նպատակը պետք է լինի դեռահաս աշակերտի, իբրև զգայուն և գիտակից ընթերցովի, դաստիարակությունը, նրա շրջահայեցողության լայնացումը և ձգտել, վոր նա տիրապետի հայոց լեզվի գեղեցկությանը և հարստությանը:

5—7 դասարանների աշակերտությունը աշխատանք ե տանում ամենից առաջ առանձին ստեղծագործությունների վրա. արտահայտիչ ընթերցում, բովանդակության վերլուծում, ամբողջ և առանձին հատվածների բովանդակության վերապատմում, հասկացողություն գործողության ժամանակի և տեղի մասին, վերլուծել և զնահատել հերոսի վարքադիմք, նրա բնութագիրը, գիտավոր հերոսի հարաբերությունը մյուս անձերի հետ, անհրաժեշտ ցիտատների ընտարություն, — ահա մոտավորապես հարցերի այն շարքը, վորը կապված ե գրական ընթերցանության հետ:

Վոչ լրիվ միջնակարգ դպրոցների ուսուցիչների լավագույն պրակտիկան վկայում ե այն մասին, վոր նրանց աշխատանքի լավ

արդյունքներն արտահայտվում են աշակերտների լրիվ գրագետ լինելու մեջ, վոր աշակերտներն առանց վերապահության անթերի տիրապետում են հայոց լեզվին, կարողանում են խելացիորեն և գիտակցորեն հասկանալ իրենց կարդացած գեղարվեստական ստեղծագործությունները և հիշողությամբ կատարել մեշքերումներ այդ ստեղծագործությունների լավագույն տեղերից։ Այս այդ արդյունքներն ուղղակի հետևանք են ուսուցչի աշխատանքում՝ լեզվի և գրականության դասավանդման միջև հաստատված սերտ կապի։

Այդ կապի անխղելիության մասին խոսում են նաև լավագույն դասագրքերի և ընթերցանության գրքերի անունները, վորոնք պատկանում են մինչ հեղափոխական անցյալի առաջավոր մանկավարժներին (ուսական՝ «Родная речь», «Живое слово», «Русский язык» և նույնատիպ հայկական դասագրքերը)։

Գրականության դասավանդման մեջ վորովար սոցիոլոգների սիրած «մեթոդը» հանդիսացող ամենավնասակար սխեմատիզմը, վոր արտահայտված և կուտողիումատի նախկին տարիների ստեղծած դասագրքերում՝ կենացնակությունից զրկել եր և յերեխաների համար անհետաքրքիր դարձրել խոսքի արվեստագետների գեղեցիկ ստեղծագործությունները։ Չոր և վերացական դասավանդումը քերականության դասերին մի կողմից և սխեմատիկ՝ գատողությունները գրողի «ստեղծագործության» մասին ընդհանուր առմամբ, փաթթելով յերեխաներին, վորոնք դեռևս ինչպես հարկն և զգիտեն գրողի աշխատությունները, հայոց լեզվի և գրականության դասավանդման խնդիրները հավասարեցնում ենին գերոյի և հասցնում այն տիտուր արդյունքներին, վորոնց դեմ մինչև այժմ ել պայքարում են մեր դպրոցը։

Թերապնահատելով գեղարվեստական գրականության նշանակությունը, վորովես յերեխաների դաստիարակության հզոր միջոցի, նրանց մեջ կոմոնիզմի համար պայքարելու լավագույն ձգտումների զարգացման միջոցի, ուսուցիչները հաճախ անտեսել են յերկի բովանդակությունը, աշակերտների ամբողջ ուշադրությունը փոխադրելով յերկուրդական հարցերի վրա, ինչպես, որինակ՝ տվյալ յերկի դերն ու տեղը հեղինակի ստեղծագործության մեջ, նրա ազդեցությունը ժամանակակիցների վրա և այլն։ Այդ և նըման հարցերը պակաս կարենը չեն, բայց այդպիսի հարցեր դպրոցի միջին դասարաններում զնելը վաղաժամ ե, քանի վոր

այդ դասարաններն ունեն իրենց անհետաձգելի և պարտադիր խնդիրները։

Վորապեսվի ուսուցիչը գրական ընթերցանության աշխատանքներին ձիւտ ուղղություն տա, նա պետք է պարզ պատկերացնի միջնակարգ դպրոցում առանձին դասարանների գրականության դասավանդման հեռանկարներն ու խնդիրները։

Միջնակարգ դպրոցում գրականության դասավանդումն ունի հետևյալ ընդհանուր խնդիրները։

1. Սնցյալի կլասիկ գրական-գեղարվեստական ստեղծագործությունների և ժամանակակից գրականության լավագույն լերին բովանդակության յուրացումը։

2. Զեռք բերել գիտելիքներ գրականության տեսությունից, վորն անհրաժեշտ է գրական ստեղծագործությունների հիմնական ձևերի պարզաբանման և աշակերտության խոսքի զարգացման համար։

3. Ուսումնասիրել գրականության պատմության հիմունքները, վորովես գիտության, վորը բացահայտում է գրական-գեղարվեստական ստեղծագործությունների գիտակցական ընթերցում և բովանդակության յուրացումը։ Հանդիսանալով պատահների մտավոր և բարյական զարգացման անսպառ աղբյուր, հայ և խորհրդային մյուս ժողովուրդների գրականություններն իրենց լավագույն նրանուշերով նպաստում են կոմունիզմի համար մարտիկներ պատրաստելու գործին, սովորողների մեջ արթնացնում են հետաքրքրություն, ստեղծագործական յերեխայություն, գեղարվեստական ձաշակ, նույնպես և նպաստում են լեզվի զարգացմանը, աշեկերտության կապակցված և բովանդակալից խոսքին։ Հենց այդպիսի հպատակ է զնում իր առաջ գրականության ընթերցման դասընթացը 5—7 դասարաններում։ Դասատույի զեկավարությամբ կարգալով ընտիր ստեղծագործություն, աշակերտները պետք է վորքան հնարավոր և յուրացնեն այդ ստեղծագործության գեղարվեստական պատկերները, խորանան ստեղծագործության իդեական բովանդակության մեջ, նրանով դաստիարակեն իրենց զգաց-

մունքները և սովորեն հասկանալ ու սիրել մայրենի լեզվի ուժը, դեղէցկությունը և բանաստեղծական ձևերը, վորոնցով գեղագիտքողն զգեստավորել ե՞ր յերկը:

Վերջին խնդիրն անհրաժեշտ է դարձնում տարրական գիտելիքներ տալու աշակերտությանը նաև գրականության տեսությունից: 5—7 դասարանների աշակերտությունն այդ գիտելիքները ձեռք ե բերում կարգացած յերկի վերլուծմանը զուգընթաց, գործնականորեն, կոնկրետ որինակների հիման վրա:

Վերևում հիշատակված բոլոր խնդիրները լինելով հիմնականը 5—7 դասարաններում, ամբողջապես չեն սպառվում վոշ լրիվ միջնակարգ դպրոցում. որինակ՝ յերկի բովանդակության ուշադիր վերլուծությունը շարունակվում է նաև բարձր դասարաններում:

Զարգացնելով այդ ունակությունները, 5—7 դասարանների գրական ընթերցանության դասընթացը միաժամանակ աշակերտությանը տալիս և անհրաժեշտ պատրաստություն՝ յուրացնելու 8—10 դասարանների՝ բովանդակությամբ բարդ և ըստ նյութի ծավալի լայն պատմագրական դասընթացը:

Սակայն 5—7 դասարանների ծրագրում, գրողների ստեղծագործությունների պատմա-ժամանակագրական հաշորդականությամբ յեղած դասավորությունը, չպետք է դասատվին մղի հարցերի ընդհանուր որմանը՝ գրողի ստեղծագործության մասին ամբողջությամբ առած, ստեղծագործության եվլուսուցիայի, եպոխայի ազգեցության մասին և այլն, հարցեր, վորոնք պատահած աշակերտության ուժից վեր ընդհանրացումներ են:

5—7 դասարանների աշակերտության համար անմատչելի պատմագրական տեսակետից չմեկնաբանելով ստեղծագործությունը, ուսուցիչը միաժամանակ չպետք է հրաժարվի ստեղծագործության բովանդակությունը պատմականորեն լուսաբանելուց, վորովհետև ստեղծագործությունների բովանդակության ըմբռնումն անհնարին է քաղաքացիական պատմությունից անշատ վերցրած: Այսպես՝ որինակ՝ 5-րդ դասարանում Հակոբ Հակոբյանի «Մե՛կ ել, մե՛կ ել» բանաստեղծությունը, Դ. Աղայանի «Յերկու քուլը»-ից հատվածները, Պուշկինի «Աքսորյալ դեկաբրիստներին» բանաստեղծությունը, Վիկտոր Հյուկոյի «93»-ից հատվածները, կամ 6-րդ դասարանում՝ Ստ. Զորյանի «Գրադարանի աղջիկը» և Իլյա Ճավաճավածեյի «1871 թ. 23-ին մայիսի»

բանաստեղծությունը և կամ 7-րդ դասարանում՝ «Պեպոն», «Հրդեհնավագործությունը» պատմվածքը, Մ. Գորկու «Մայրը» անցնելիս, ուսուցիչը պետք է տա անհրաժեշտ պատմական տեղեկություններ, բացատրություններ, վորոնք սերտորեն կապված են այդ ստեղծագործությունների պատմելների հետ: Սակայն կարիք չկա դեռ հարցեր Պուշկինի աշխարհայացքի եվլուցցիցիցի մասին կամ՝ որինակ՝ «Յերկու քուլը» վեպի տեղը Աղայանի ստեղծագործության զարգացման մեջ, հարցեր, վորոնք պատմելներու յեն հեղինակի ստեղծագործական ուղին, բայց անմիջականորեն չեն բացահայտում տվյալ ստեղծագործության բովանդակությունը:

Խոսքի զարգացման խճիր պարունակող գրական ընթերցանության պարապմունքները տարվում են սերտորեն կապված հայոց լեզվի հետ: Մի շարք դեպքերում լեզվի և գրականության գասերի մեջ գոյություն ունեցող սահմանը կարող է վերանայ, վորը միանգամայն որինական և այդ դասարանների համար, վորտեղ գրականության ընթերցման նյութը կարող է դիտվել նաև վորպես խօսքի այս կամ այն ձեփ գործածության նմուշ: Այսպես՝ որինակ՝ 5-րդ դասարանում Հ. Թումանյանի «Հառաշանք» պոեմից բերված հատվածները լեզվական-քերականական վարժությունների ամենալայն հնարավորություններ են տալիս: Գրական ընթերցանության հետ կապված շարադրության և ինքնուրույն գրավոր գործնական աշխատանքները, նրանց քննարկումն աշակերտության հետ միասին՝ ձեփ և բովանդակության կողմից, այդ բոլորը նույնպես լեզվի ուսուցման աշխատանքները կապում են գրականության հետ:

Ամեն կերպ ոգտագործելով լեզվի և գրականության կապը 5—7 դասարանների աշակերտության աշխատանքներում, ուսուցիչը պարտավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել աշակերտների բառապաշտիքի հարստացման վրա, մշակել նրանց անթերի կարդալու տեխնիկան և մեծ քանակությամբ գրական նմուշների միջոցով սովորեցնել արտահայտիչ կարդալ: Քանի վորբառապաշտիքի հարստացման և նրա զարգացման լավագույն միջոցներից մեկը հանդիսանում է պոեզիայի և գեղարվեստական արձակի կատարյալ նմուշներից բերանացի սովորելը, ուսուցիչն իրավունք է վերապահվում լայնորեն ոգտագործել ծրագրում յեղած ստեղծագործություններ՝ հանձնարարելով աշխատանքներին բերանացի անելու: Խոսքի գեղարվեստական ստեղծա-

գործությանն ավելի մոտ են նկարչական գործերը, վրձինի գեղարվեստական ստեղծագործությունները: Դրա համար ել դիապոզիտիները, իլուստրացիաները, ինչպես և կինոնկարները պետք է լայնորեն գործադության մեջ դրվեն գրական ընթերցանության դասերին:

Հայ և ոռւս նշանավոր նկարիչների նկարների արտատպությունները պետք է աշակերտության համար ծառայեն վլորպես լավագույն նյութ՝ զարգացնելու նրանց կապակցված և պատկերավոր խոսքը՝ գրավոր թե բանավոր արտահայտությամբ: Մայրենի լեզվի դասատոնն միայն այս ուղիներով կմոտենա իր պարտականությանը, այն է՝ ամեն մի աշակերտից դաստիարակել խորհրդացին քաղաքացի, վորը հիանալի փիտի, հասկանում և իր ժողովրդի լեզուն, գրականությունը և պատմությունը:

Խոսքի զարգացման աշխատանքի բազմազան ու բազմաթիվ տեսակները, վոչ լրիվ միջնակարգ դպրոցներում աշակերտության կողմից կատարված աշխատանքները 7-րդ դասարանում պետք է վորոշ հանրագումարի բերվեն: Միջնակարգ դպրոցների բարձր դասարաններում այդ աշխատանքները պետք է շարունակվեն, բայց այլ նյութի վրա և այլ ձևով:

ԲԱՆԱԳՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

5—7 դասարանների աշակերտության գրավոր և բանավոր խոսքի զարգացումը տարվում է սերտ կապված մի կողմից քերականության հետ, մյուս կողմից գրական ընթերցանության հետ:

5—6—7 դասարաններում բանավոր և գրավոր խոսքի զարգացման համար աշխատանքի հիմնական տեսակները հետևյալներն են՝ ա) բառարանային աշխատանք, բ) պլաններ կազմելը (գրարդ և բարդ), գ) հարցերին ծավալուն պատասխան տալը, դ) կատարել մեջբերումներ, յե) տարբեր տեսակի շարադրություններ, զ) վոչ բարդ բնութագրություններ, ե) շարադրություններ և ինքնուրույն աշխատանք տվյալ նկարի բովանդակության մասին, ը) վոչ մեծ ստեղծագործական շարադրություն՝ կարգացած յերկի և անձնական դիտողությունների ու ապրումների մասին:

Այդ աշխատանքները բաշխվում են հետևյալ ձևով, ըստ դասարանների:

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Նոր բառերի բառարան կազմելը: Աշխատանքներ բառերի արմատների վրա. նրանց ոգտագործումը կապակցված և բովանդակալից խոսքի մեջ:

2. Նազմել հարցերի ծավալուն պատասխաններ:

3. Տեքստը գրել բերանացի:

4. Կատարել մեջբերումներ:

5. Կազմել պատմելու պարզ պլան. ա) հարցերի ձևով, բ) չիշեցնող նախադասությունների ձևով, գ) պարզ նախադասությունների ձևով և դ) խառը ձևով:

6. Բանավոր պատմել և գրավոր շարադրել կարդացած բնագրին մոտ կամ պատմողական բնույթի հատվածների բովանդակությունը (համաձայն տված և ինքնուրույն կազմած պլանի):

7. Շարադրություններ վառ դիմացիկական սյուժե ունեցող նկարի բովանդակության մասին:

8. Ստեղծագործական գրավոր աշխատանք, մեծ մասամբ պատմողական բնույթի:

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Բառարանային և բառարմատների աշխատանքների շարունակումը:

2. Նկարագրելու և պատմելու համար բարդ պլաններ կազմելը:

3. Բանավոր պատմել և գրավոր շարադրել (համառոտ) կարդացած պատմողական տեքստի բովանդակություն՝ ծավալով ավելի մեծ քան 5-րդ դասարանում՝ տրված կամ ինքնուրույն կազմած պլանի համաձայն:

4. Շարադրել բնագիրը նկարագրական բովանդակությամբ (բնույթուն, շրջապատող իրազրություն, պորտրետ):

5. Պատմվածք՝ համաձայն նկարի (պեյզաժ):

6. Նկարագրական և պատմողական բնույթի ստեղծագործական շարադրություն:

7. Պարզ բնութագրեր (մեծ մասամբ բանավոր ձևով):

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Բառարանների սպառագործումը (ենցիկլոպեդիա, ստար լեզուների բառարան):

2. Տվյալ թեմայի վերաբերյալ մի քանի պատմվածքներից ցիտատների ընտրություն:

3. Տվյալ ստեղծագործության մեջ յեղած բնութագրերի շարադրում:

4. Բնութագրերի կազմում՝ համաձայն դասարանում մշակված սլանի: Բնութագրման համար նախորոք ընտրած ցիտատների ուղարկործում:

5. Շարագրություն յերկու նկարի մասին (Համեմատելու նկատառումով):

6. Նկարագրական և պատմովական տիպի շարադրություն քննադատական տուրերով:

Ծանօթություն. 1. Գրավոր աշխատանքների ծրագրը նկատի ունի նրանց տեսակների աստիճանական զարգացումը: Պետք է նկատի ունենալ, վոր յուրացված աշխատանքների տեսակները կրկնվելու յեն հետագա դասարաններում՝ ձեռք բերված ունակություններն ամրացնելու նպատակով:

2. Ամեն մի նոր տեսակի գրավոր աշխատանքին պետք է նախորդի բանավոր աշխատանքը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Կարգացվող ստեղծագործության հետ կապակցված կերպով՝ աշակերտությունը պետք է յուրացնի գրականության տեսարական մասին հետևյալ տեղեկություններն ըստ դասարանների:

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ուղիղ և պատկերավոր խոսք:

Սինոնիմներ (համանումներ), անոնիմներ (նույնանումներ), համեմատություն, եպիտետ (մակդիր): Առակ: Հերիաթ: Հանելուկ: Առած: Ասացվածք:

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մետաֆորա: Սինեկդոխա: Հիպերբոլա: Տավառողկիա (կրկնություններ):

Պատմովականություն: Նկարագրություն: Դիալոգ (յերկախոսություն): Հասկացողություն պատմվածքի ու վեպի մասին:

Պելլաժ: Պորտրետ:

Արձակ և վուանավոր խոսք:

Որիթմ և հանգ (որիթմ): Վուանավորի չափերը (յերկու և յերեք մասերից կամ յերկամանակ և յեռամանակ): Հասկացողություն բանաստեղծական վուացի և տան մասին: Տարրական գաղափար լիրիկական բանաստեղծության, պոեմի և լեգենդի մասին:

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Գալափար գեղարվեստական յերկի թեմայի, սյուժեյի և կոմպոզիցիայի (կառուցվածքի) մասին: Տարրական հասկացողություն գեղարվեստական ստեղծագործության հիմնական ժանրերի (եպոս, լիրիկա, դրամա) մասին:

Տարրական գաղափար դրամատիկական յերկերի (կոմեդիայի) մասին. Հանգուց, կումինացիա, հանգուցի լուծում: Պորտոպություն, տեսարան, գործող անձ, դիալոգ, մոնոլոդ, ոեպիկա, ոեմարկա (հեղինակի նշումը կամ դիտողությունը դրամատիկական յերկում): Հասկացողություն կոմիզմի մասին (արտաքին և ներքին): Սատիրա, յումոր, իրոնիա, սարկազմ: Լիրիկական ստեղծագործության տեսակներ՝ ներբող, ելեկիա, լիրիկական ստեղծագործության տեսակներ: Ալեգորիա: Անտիթեզ: Խնկերսիա (բառերի վոշ սովորական հաջորդականությունը՝ գլխավորապես վուանավորի մեջ): Ծիմիմիկ արձակ: Արձակ բանաստեղծություն: Ֆոլկլոր, աշուղական ստեղծագործություն: Գրականության կապը ֆոլկլորի հետ: Ֆոլկլորի մշակումը և ուստագործումը գրողների կողմից (հ. Աբովյան, Աղալյան, Թումանյան, Խաչակրյան և այլն):

Խորհրդային ֆոլկլորը և խորհրդային աշուղական ստեղծագործությունը:

Սիստեմատիկ կերպով կրկնել գրականության տեսությունից 5 և 6 դասարաններում անցած զիտելիքները՝ համապատասխան գեղարվեստական յերկերի ուսումնասիրության կապակցությամբ:

ՅԵՐԿԵՐԻ ՅԱՆԿ

ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ներկա ծրագրում գրական ընթերցանության համար առաջարկվող գեղարվեստական յերկերի ցանկն զգալի փոփոխության ե յենթարկվել 1937/38 և 1938/39 ուսումնական տարիների ծրագրի համեմատությամբ։ Այդ փոփոխության համաձայն կտրմվել են գրականության նոր քրեստոպատիաները։

Ընթիրցանության նյութերի ցանկում նշվում է նաև թե վոր գրողների կենսագրություններն են ուսումնասիրվելու տվյալ դասարանում:

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Հակոբ Հակոբյան.— Աշխատանքի յերգը, Մե՛կ ել, մե՛կ ել,
Մայիսմեկյան յերգ, Լուսաբացին, Աշխատանքի ելեպիաներից,
Ստեփան Շահովլյանին, Բագու, Զորագեսում:

2. Արագիլ. — Բանվոր Մադաթի Հուշերից, Խորհրդային առավոտը, Լուսերը:

3. Ստեփան Զորյան.—«Մի կյանքի պատմություն» (Յատ-
կաձներ) ա. Մեր տունը, թ. Վրեժիսնդրություն, գ. Ահավոր գի-
շեր և անծանոթ տեղեր:

4. Նայիրի Զարյան.—Մաքու Միկինյան, Բուքը, Մարդը, Մեռինան:

5. Աղավնի. —Մայրը:

6. Վազգրու Աղայան. — Մերմնացան, Ճախարակ, Ճատված-ներ «Յերկու քույր» վիպակից՝ ա. Արդումանի և Ճաղարանց տղերքի կոփվը, բ. Արդումանի մայրը, գ. Կարդանն ու Ճաղա-րանց թաթոսը:

7. Հովհաննես Թումանյան.— Հին որհնություն, Գութանի
յերգը, Խրձիթում, Թագավորն ու շարժին, Վուկե քաղաքը, Ան-
դին քարշ:

8. Արքայի կողմանը.—Բարեսիրտ աղվեսը, Փայտահատն ու մահը, Գայլն ու կատուն, Ժանտախտ, Գայլն ու գառը:

9. ԱԼ. Պուշկին.— Կովկաս, Հուշարձան, Կալանավորը,
Զապայտելին, Աբորյալ դեկաբրիստներին, Հեքիաթ վոսկե

աքլորիկի մասին, թուքը (հատված «Կապիտանի աղջիկը» վեպից):

10. Սահմանադրության մեջ՝ Հատվածներ «Ծառայության մեջ» ինքնակենսագրական վեպից՝ Կոշկեղենի մագաղինում, Վոլգայի վրա «Դոբրի» շոգենավում, Գրքերից վախեցողների շրջանում:

11. Սովեյման Ստալկիի.— Մտորումներ հայրենիքի մասին, կեռների յերկրի աղջկներին, Վորդուա:

• 12. ՞. Աստրովսկին.— Պալել Կորչագինի քաջագործությունները (Հատուկած «Ինչպես եր կոփվում պողպատը» վեպից), Հատվածները «Փոթորկածիններ» վեպից, ա. Փոքրիկ Մոյշեն և իր մոռաքությ Սառան, բ. Փողով Կովալլոյի սենյակում. Այն մասին, թե ինչպես Վասիլյոսկը փրկեց Անդրեյին. գ. Գնդապետ Մոգինիցիու նամակը և նրա պատասխանը, ե. «Պիտի կովենք մինչև վերջին շումը», «Կեցցե՛ կոմունան»:

13. Վիկոնր Հյուզոն.— Բարիկադներում, Բարիկադների վրա, Սոդրեյան անտառը (Հատված «93»-ից):

Գրականության քրեստումատիվում տրված նյութերի ծավալով 5-րդ գասարանում անցնել հետևյալ գրողների կենսագրությունները:

Մաքսիմ Գորկի, Հակոբ Հակոբյան, Արագի, Դ. Աղայան, Հ.
Թումանյան և Ալ. Պուշկին:

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Խաշատուր Աբրվյան.—Ես գրքի ձամբի խրատը, Հայակեր փեշը, «Վերք Հայաստան»-ից՝ ա. Զմեռ, բ. Աղասին, գ. Յերեմիանա բերդը:

2. Պերե Պողյան, — «Հացի խնդիր» վեպից հատվածներ՝
ա. Միկիտան Սաքոն, թ. Յասալուկ, «Հունոն» վեպից հատված-
ներ՝ ա. Վեճ Հունոյի մասին քաղաքի հրապարակում, թ. Անձա-
նոթ ուղեկիցը՝ Նազո անոնով, գ. Յես են մարդու քեռու տղեն եմ,
դ. Քարափին թիկնած մարդը, վորը մենախոսում եր, ե. Նա-
դոյի մենախոսությունը:

3. Կազմակերպությունների մասին.—Տուրք Անդեղ, Քյոլորդինի (Հատվածական)։

4. Մուրացան. — «Առաքյալը» (Հատկածներ)՝ մ. Դիլիջան,
մ. Զիբուխու, գ. Տիրացու Մուսինի պարողը ։ ԲԽԾ ՀՀ 14

5. Վրբանես Փափազյան.— Արտը, Հողի աշխատավորը:
6. Հովհաննիսյան.— Ահա քեզ ձեռս, Աշուղ, Մնաս
բարով, Սարն ի վեր, Ալագյազ բարձր սարին, Ժայռը, Հատիկ:
7. Ալեքսանդր Մատուցյան.— Գիր, Թոփր, այ իմ յերգ,
Զմեռային գիշեր, Նոր սերունդ, Մերմնացան, Բանվորու-
հու որորը, «Գրչի հանաքներ»-ից՝ ա. Փրկության ուղի, թ. Հայ
Հեղինակի կտակը:
8. Հովհաննիս Թումանյան.— Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա, Սա-
սոնցի Դավիթը, Հառաշանք, Անիծած հարսը, Նվեր Վրաստանի
բանաստեղծներին:
9. Հակոբ Հակոբյան.— Ամբոխն իմ աշխարհքը, Յես այն
եմ սիրում, Մեռան՝ շկորան, Զմեռային պալատ, Կրեմլի դահլի-
ճում, Վոլխովստրոյ:
10. Շուշանիկ Կուրենիյան.— Բանվորները, Հանգորեք ջահե-
րը, Գութանի յերգը, Այնտեղ գնացեք:
11. Արագի.— Արև, Ռուզարկում եմ ձեզ այս գլուխը, Խալի-
շայի յերգը, Բարելոնի աշտարակը, Հաղար գլխանի:
12. Ստ. Զորյան.— Գրադարանի աղջիկը, Լիկլայանի
սուցչուհին:
13. Սիրաս.— Ջրանցքը կխոսի:
14. Զամբուլ.— Յերգ ծաղկող ծերության մասին, Յերգ
Բագմի մասին, Պոեմ ժողովուրդների յեղայրության մասին:
15. Ն. Ա. Նեկրասով.— Հայրենիք, Ելեգիա, Աղքատ ծերու-
կի յերգը, Զհնձված արտը, Նոր տարի, Մայրը:
16. Տարաս Շեվչենկո.— Կտակ, Որոր, Ինչու յեմ յես ար-
խուր, Սևացել ես ինչից այդպես, Փողոցի մեջ Հողմն է
փշում, Յեվ Գալիլեյը...
17. Իլյա Ճավինավաձե.— Պոետ, Թեկուղ և մեռնեմ, Ո. Ռ
գեղեցիկ իմ աշխարհ, Գարուն, Ելեգիա, 1871 թ. 23-ն մայիսի,
Նիկոլով Գաստաշաբիշվիլի:
18. Սաբիր.— Բեյնելմիլել, Հողի մշակը, Սուտասան շորտ-
նը, Մեր պարտիզանը, Մոլլայի դարդը, Ե՛յ, ամի, Հարուստը,
Բագմի ֆահլաներին:
19. Դմ. Ֆուրմանով.— Հատվածներ «Չապայեվ» վեպից:
20. Ռոմեն Ռոլան.— Ժան Քրիստոֆի մանկությունը:
«Գրականության քրեստոմատիա»-յում տրված նյութի ծա-
կալով 6-րդ դասարանում անցնել Հետեվլալ գրողների կենսա-

գրովյանները՝ Խ. Արովլան, Պ. Պողյան, Հ. Թումանյան, Հ.
Հակոբյան, Արագի, Զամբուլ, Նեկրասով, Տ. Շեմշենկո, Դմ.
Ֆուրմանով:

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Մ. Նալբանդյան.— Յերգ ազատության, Հովհաննյաց
(Հատված «Մեռելահարցուկ» վեպից):
2. Հակոբ Պարոնյան.— Մեծապատիվ մուրացկաններ (Հատ-
վածներ), Կսմիթներ (Հատվածներ), Հարուստ ըլալու միջոցները:
3. Գարեգի Սունդովյան.— Պեպո (Կրճատ):
4. Շիրվանզադե.— Հրդեհ նավթագործարանում:
5. Հովհաննես Թումանյան.— Անուշ, Քառյակներ, Արեգը սկ
աշխարքում (Հատված «Հազարան բլբովից»):
6. Նար-Դոս.— Նեղ որերից մեկը, Հոգում վրա հասավ:
7. Ավետիք Խահինյան.— Ալագյազի մանկներից, Նորից յե-
կան գարնան անուշ որերը, Անհուն վրեժի և ատելության, Ախ,
մեր սիրուը, Ազատության զանգ, Սահմա Մհեր (Հատված):
8. Վահան Տերյան.— Արևածագ, Վերադարձ, Ստեփան Շա-
հումյանին, Ծշուկ ու շրջուն, Լուսաբացին նա բարձրացավ կա-
խիազան, Քեզ եմ յերգում, Հարյավ հավետ, Յեկավ յերկաթ քայ-
լով, Յե՛լ, դեմոկրատիա, Զարդեցեք անդուզ, Մեր թշնամին բե-
րում ե տանկեր, Արեգակը հով:
9. Դերենիկ Դեմիրենյան.— Մաշիդ (Հատվածներ):
10. Նայիրի Զարյան.— Ստալին, Ռուզանի քարափը (Հատ-
վածներ):
11. Գեղամ Սարյան.— Բալլագ՝ Խորհրդային Հայաստանի
մասին, Տարեդարձի յերգ, Ալվարո:
12. Շորա Ռուտրավելի.— Վագրենավորը (Հատվածներ):
13. Միխայիլ Լերմոնտով.— Մծիրի (Հատվածներ), Պուշկինի
մահը:
14. Մաքսիմ Գորկի.— Մըրկահավի յերգը, Բագեյի յերգը,
Գանկոյի սիրուը, Մայրը (Հատվածներ):
15. Վլադիմիր Մայակովսկի.— 1917 թ. ապրիլին, Բանա-
տեղծություն խորհրդային պասպորտի մասին:
16. Միխայիլ Շոլոխով.— Նագունով (Հատված «Հերկած
խոպան»-ից):

17. Հանրի Բարբյոս.— Կրակ (հատված):

18. Ժողովրդական քանակուսուրյուն.— Սասունցի Դավիթ (կրծատ), Աշխատանքի յերգեր, Առածներ, Ասացվածքներ, Հանելուկներ, Անմահության խնձոր, Լենինի յերգը, Գութի Հայրական, Ստալին, Գովք Ստալինյան շեն աշխարհի, Լենին Հսկան:

«Գրականության քրեստոմատիա»-յում տրված նյութերի ծավալով 7-րդ դասարանում անցնել հետևյալ գրողների կենսագրությունները՝ Մ. Նալբանդյան, Հ. Պարոնյան, Շիրվանզադե, Հ. Թումանյան, Նար-դոս, Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Մ. Գորկի, Վ. Մայակովսկի և Մ. Շոլոխով:

ԱՆԳԻՐ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշակերտների խոսքի հարստացման և լավագույն գրական նմուշները հիշելու նպատակով, աշակերտներն ամեն մի դասարանում պետք է անգիր սովորեն վորոշ քանակությամբ բանաստեղծություններ և ամբողջական արձակ հատվածներ:

Ստորև արվում է ընտիր ստեղծագործությունների ցանկը ըստ դասարանների, վորոշ պետք է զեկավարվեն դասատուները: Նշված արձակ գործերից և պոեմներից կատրների ընտրությունը թողնվում է ուսուցիչների հայեցողությանը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Բ ա ն ա ս տ ե ղ ու թ յ ո ւ ն ե ր

Հակոբ Հակոբյան.— «Աշխատանքի յերգ», «Մե՛կ ել, մե՛կ ել», «Մայիսեկյան յերգ», «Ստեփան Շահումյանին»;

Նայիրի Զարյան.— «Սաքո Միկինյան» (կրծատ):

Հովհաննես Թումանյան.— «Հին որհնություն», «Գութանի յերգը», «Թագավորն ու շարշին» (կրծատ):

Սովեյման Ստալինի.— «Մտորումներ հայրենիքի մասին», «Լեռների յերկրի աղջկներին»:

Ա. Ս. Պուշկին.— «Կովկաս», «Կալանավորը», «Չաղաղայելին», «Հուշարձան»:

Վիկտոր Հյուզոն.— «Բարրիկադներում»:

2. Ա ռ ա կ ն ե ր

Արքեկ Խնկոյան.— «Բարեսիրտ աղվեսը», «Գալլ ու կատուն», «Ժանտախտ»:

3. Ա ր ձ ա կ

Հովհաննես Թումանյան.— «Հատվածներ ովոսկե քաղաքը» Հեքիաթից:

Ն. Ռատրովսկի.— «Պիտի կռվենք մինչև վերջին շոմչը» (կրծատ):

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Բանաստեղծություններ և պոեմներ

Խ. Արովյան.— «Ես գրի ճամբի խրատը»:

Ղ. Աղայան.— «Տորք անգեղ» (կրծատ):

Հովհ. Հովհաննիսյան.— «Ահա քեզ ձեռքս», «Մնաք բարով», «Սալն ի վեր», «Ժայող», «Հատկի»:

Ալ. Խատուրյան.— «Գիր», «Ջմեռային գիշեր», «Սերմնացն», «Բանվորուհու որորը»:

Հովհ. Թումանյան.— «Սասունցի Դավիթ» (կրծատ), «Հառաջանք» (կրծատ), «Նվեր Վրաստանի բանաստեղծներին»:

Հակ. Հակոբյան.— «Ամբոխն իմ աշխարքը», «Յես այն եմ սիրում», «Մեռան՝ չկրան»:

Շուշանիկ Կուրդինյան.— «Բանվորները», «Հանգցրեք շահերը»:

Խ. Ա. Նեկրասով.— «Ելեգիա», «Աղքատ ծերուկի յերգը»:
Տարաս Շեվչենկո.— «Կտակ», «Որոր»:

Իլյա Ճավեավաձե.— «Թեկուզ և մեռնեմ», «Ով գեղեցիկ իմ աշխարհ», «Գարուն»:

Սարիր.— «Բենելմիլել», «Սեր պարտիզանը»:

Զամբուլ.— «Պոեմ ժողովուրդների յեղացրության մասին» (կրծատ):

2. Ա. ր ձ ա կ

Պ. Պոռշյան.— «Նադոյի մենախոսությունը» (կրծատ):
 Վ. Փափազյան.— «Արտը» (կրծատ):
 Դմ. Ֆուրմանով.— «Չապայելվա վեպից կտորներ»:
 Տոնմեն Ռոլան.— «Ժան Քրիստոֆի մանկությունից» կտորներ:

7-ՐԴ ԳԱՍՏԱՐԱՆ

1. Բանաստեղծություններ և պոեմներ

Մ. Նալբանդյան.— «Յերգ ազատության»:
 Ավ. Խահիկյան.— «Անհուն վրեժի և ատելության», «Մորսիրտը», «Ազատության զանդը», «Սասմա Մհեր» (կրծատ):
 Վ. Տերյան.— «Արևածագ», «Վերադարձ», «Ստեփան Շահումյանին»:
 Եայիրի Զարյան.— «Ստալին»:
 Գ. Սարյան.— «Տարեղարձի յերգը», «Ալվարո»:
 Շոքա Ռուարավելին.— «Ավանդիլի կտակը»:
 Մ. Լերմոնտով.— «Մծիրի» (կրծատ):
 Վլ. Մայակովսկի.— «Բանաստեղծություն խորհրդային պատպորտի մասին»:

ԽՈՐՀՈՒՅՑԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

«Լենինի յերգը», «Լենին Հոկան»:
 Աշոտ Աշխույժ.— «Գութի Հայրական, Ստալին»:

2. Ա. ր ձ ա կ

Մ. Գորկի.— «Բագեյի յերգը», «Մրրկահամի յերգ»:
 Գ. Սունդուկյան.— «Պեպո»-ի Հատվածներից:
 Նար-Գոս.— «Նեղ որերից մեկը»:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԲԵՐԻ

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՑՈՒՑԱԿ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
 «Բնտիր յերկեր»
 «Մի կյանքի պատմություն»
 «Հեքիաթներ»
 «Հեքիաթներ և պատմվածքներ»
 «Յերկեր»-ից ուսուցչի Հանձնարարությամբ առանձին գրվածքներ
 «Պոլիկուշկա»
 «Որլորմովի յերազը»
 «Պատմվածքներ»
 «Թոռմ Սոյերի արկածները»
 «Ճ Հազար կիլոմետր զրի տակ»
 «Չապայելվ» (Մանկհրատ)

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

«Հունոն», «Յեցեր»
 «Յերկու քույր»
 «Նոյի ագուավը»
 «Բանաստեղծություններ»
 «Յերկեր»
 «Արձակ պոեմներ»
 «Միջորե»
 «Ռազմի յերգեր»
 «Կապիտանի աղջկեր», «Դուբրովսկի»
 «Յերգեր, պոեմներ»
 «Վոլոսորդի Հիշատակարանը»
 «Հաջի Սուրադ»
 «Մայրը»
 «Յերկաթե Հեղեղ»
 «Ինչպես եր կոփում պողպատը»
 «Բանաստեղծություններ»
 «Կորչի յեղիպտացորենի Հանրապետությունը»
 «Ակիլճելմ Տել»

7-8Դ ԴԱՍԱՐԱՆ

Պ. Պոռշյան
Հ. Թումանյան
Վ. Միքայելյան
Խար-Դոս
Հ. Պարոնյան
Գ. Սունդուկյան
Ավ. Խահակյան

Ա. Շիրվանզադե
Դ. Գևորգյան
Ե. Զարյան
Շ. Ռուսը-ավելի
Սալտիկով-Շեղրին

Մ. Գորկի

Դ. Ֆուրմանով
Ա. Ֆադեև
Մ. Շոլոխով
Ա. Տոլսոտյան

Վ. Շեխապիր
Սերվանտես
Վ. Հյուոգոն
Ռ. Թոլան
Ֆիրդուսի
Ժյուլեն
» »

«Հացի խնդիր»
«Յերկեր»
«Լալվարի վորսը»
«Յերկերի 1-ին հատոր»
» »
«Խաթաթալա», «Պեպո»
«Բանաստեղծություններ» և «Սամացեր»

«Պատվի համար»
«Խիզար», «Խաշիդ»
«Խուշանի քարափը», «Հացավան»
«Լագրենավորը»
«Հերիաթներ», «Մի քաղաքի պատմություն»

«Մանկություն», «Մառայության մեջ»,
«Իմ համալսարաններ»
«Խոռվություն»
«Չախչախում»
«Հերկած խոպան»
«Հացը», «Պետրոս 1-ին»

Լեօնին հայ ֆոլկորում
«Անհետիկի վաճառականը»
«Դոն Կիխոտ»
«93 թիվը»
«Ժան Քրիստոֆ»
«Խուստամ և Զոհրաբ»
«Գրանտ նավապետի վորդիները»
«Խորհրդավոր կողին»

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

8—10-րդ ԴԱՍԱՐԱՆ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի խնդիրները

8—9—10-րդ դասարաններում, ի տարբերություն վոշ լրիվ միջնակարգ դպրոցի՝ գրականությունն ուսումնասիրվում ե պատմական-գրական պլանով։ Գրականության դասավանդումն այդ դասարաններում նպատակ ունի ծանոթացնելու աշակերտներին պատմական-գրական պրոցեսի հիմնական որինաչափությունների հետ։

Ոգուագործելով գեղարվեստական գրականության ընձեռնած մեծ հնարավորությունները, դասատու-գրականագետները պարտավոր են իրենց դասերի ժամանակ դաստիարակել աշակերտների բոլշակիկան աշխարհայացքը։

Ընկեր Ստալինի լոգունգը բոլշակիզմին տիրապետելու մասին գրականության դասատում կարող ե իրականացնել միայն այն դեպքում, յերբ նա կսովորի բոլշակիկորեն մոտենալ գրականության ուսումնասիրության հարցերին և նրա դասավանդմանը պարունակում։

Վերջին ժամանակներս, մանավանդ 1936—37 ուս. տարուց սկսած, յերբ մեր դպրոցը ամբողջ յերկրի հետ միասին լայն կերպով տոնում եր մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի հիշատակը, գրականության դասավանդման մեջ ունենք անկատածելի հաջողություններ, արտահայտիլ ընթերցումը և բերանացի սովորելը լայն տարածված յերեսության, ավելի խորը և մանրակրկիտ կերպով ե անցկացվում գեղարվեստական յերկի բովանդակության վերլուծումը։ Պատրաստված ուսուցիչները տարեցտարի ավելի լավ և հետաքրքիր կերպով են տանում աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը։

Շատ դասատուներ արդեն կոնկրետ կերպով են դնում աշակերտների կոմունիստական դաստիարակության խնդիրները գեղարվեստական գրականության միջոցներով իրականացնելը և լավ՝ արդյունքների յին հասնում:

Սակայն մինչև այժմ ել գեռ գրականության դասերի միջոցին բոլցեփկյան աշխարհայացքի դաստիարակությանն արգելք և հանդիսանում վուզգար սոցիոլոգիզմը, համանման պատմության դասավանդման բնագավառում հայտնաբերված այն թերություններին, վորոնք դատապարտված են ԽՍՀՄ ժողովադիմուրի և ՀամԿ(բ)կ Կենտկոմի կողմից՝ 1934 թ. մայիսի 16-ի՝ «Քաղաքացիական պատմության դասավանդման մասին ԽՍՀՄ դպրոցներում» վորոշման մեջ: Վուզգար սոցիոլոգիզմը գրողների ստեղծագործության շարադրման մեջ խեղաթյուրել և խեղաթյուրում է պատմական հեռանկարը, նա խեղաթյուրում է գրողների պատմական նշանակությունը: Այսպես՝ որինակ՝ վուզգար սոցիոլոգիզմի լույսի տակ այնպիսի գրողներ, ինչպես, Պուշկինը և Լեռմոնտովը, ներկայացվում եյին միայն վորպես ազնվական գրողներ, սքողելով նրանց համաժողովրդական նշանակությունը: Ստացվում եր դրական ստեղծագործության անմիտ քննախոսում (ԵՐԱԿԱ), վորպես դարաշրջանի եկոնոմիկայի ինչ վոր վերացական «արդյունք», գրողի և նրա ստեղծած հերոսների կենդանի դեմքը մահացվում եր և նույնպես վերածվում վերացական սխեմայի: Դրանով իսկ վոշնչացվում եր գրականության դասավանդման նշանակությունը:

Դասատուներից վոմանք ընկնում են այլ ծայրահեղության մեջ, սահմանափակվելով գրողի գեղարվեստական միջոցների, գեղարվեստական վարպետության ձևական ուսումնասիրությամբ:

Այդ պարզամոլությունը (յորոշելու) հակասում ե այն պահանջներին, վորոնց պետք ե բավարարի գրականության դասավանդումը մեր խորհրդացին դպրոցում:

Իսկ այդ պահանջները բղխում են գեղարվեստական գրականության լենինյան-ստալինյան ըմբռնումից և անցյալի կուտուրական ժառանգության վերաբերյալ լենինյան-ստալինյան ուսմունքից: Վ. Ի. Լենինի ուսմունք՝ պրոլետարական կուտուրայի մասին, տեսության և պրակտիկայի միասնության մասին՝ նրանց գարգացման մեջ, գրականության մասին, վորպես

համապրոլետարական գործի մի «մասը» (Վ. Ի. Լենին, «Կուսակցական կազմակերպությունը և կուսակցական գրականությունը», Հատոր 8-րդ, Հրատ. 3-րդ, եջ 386—390), կուտուրական ժառանգության քննադատական յուրացման մասին՝ պետք ե ինքնին վորոշի գրականության դասավանդման ամբողջ ուղղությունը:

Գեղարվեստական գրականությունը պետք ե դիտվի վորպես իմացության, իրականության բացարձական ու գնահատման սպեցիֆիկ ձև: Զի կարելի հասկանալ յերկի թեմատիկան, դեմքերն ու գործող անձերը և գեղարվեստական միջոցները պատմական պրոցեսից դուրս, դասակարգային սլայքարի պատմությունից դուրս:

Հենց գրականության այդպիսի ըմբռնումը նպաստում է այն բանին, վորպեսզի դպրոցական դասավանդման մեջ բավականաշահա առաջ մղվեն գեղարվեստական յերկերի իմացական, հասարակական-դաստիարակչական և գեղարվեստական կողմերը:

Գրականության պատմության դպրոցական կուրսի դասավանդման մեջ պետք ե կիրառվեն այն ցուցումները, վորոնք տրքածած են կուսակցության և կառավարության դիրքեկտիվներում քաղաքացիական պատմության դասագրերը կազմողներին:

Միջնակարգ դպրոցի 8—10-րդ դասարանների աշակերտներին անհրաժեշտ ե տալ՝ նրանց կողմից ուսումնասիրվող հեղինակների՝ աշխատությունների կապակցությամբ, գրականության գարգացման կարեռագույն փաստերի կենդանի շարադրումը, պարզելով ծրագրում մտցված գրողների կյանքի և ստեղծագործության ուղին, ցուց տալով նրանց կատարած դերն իրենց ժողովուրդների ազգացին կուտուրայի ձևավորման, զարգացման և իրենց ժողովրդի պատարական շարժման մեջ:

Այն դեպքերում, յերբ գա թույլ և տալիս ծրագրի նյութը, անհրաժեշտ ե վորոշել հայ գրականության կապը ուսուական և յեկրոպական գրականության հետ, ցուց տալ ուսա. և յեկրոպական գրականության ազգեցությունը մեր գրականության զարգացման վրա (Թումանյան—Պուշկին—Նեկրասով, Սոմդուկյան—Ոստրովսկի, Պարոնյան—Մոլիկեր և այլն):

10-րդ դասարանում, ուսումնասիրելով խորհրդացին գրականությունը, անհրաժեշտ ե մատնացուց անել այն, վոր գաղափարական տեսակետից նա հանդիսանում ե ամենաառաջավոր գրականությունը, վորը մարտի յե կոշում ամբողջ աշխարհի

Ճնշված ժողովուրդներին՝ ընդգեմ մարդը—մարդու միջոցով ամեն տեսակ շահագործման, վոր նա հսկայական նշանակություն ունի պրոլետարական և հեղափոխական-գեմոկրատական գրականության զարգացման համար կապիտալիզմի յերկրներում:

Յուլյո տալ խորհրդային գրականության հսկայական սկզբանքային հատկանշական կողմը և բարոյական-քաղաքական բարձրությունը, սովորեցնել աշակերտներին զոկելու-հսկանալու գրականության զարգացման հիմնական հոտապները՝ առանց պարզաբնության (ցործություն), առանց սխեմատիզմի— աճա այս միջնակարգ դպրոցի 8—10-րդ դասարանների դասընթացի պատմական-գրական խնդիրները:

II. Գրական յերկերի վերլուծությունը

5, 6 և 7-րդ դասարանների խնդիրը՝ հասնել գեղարվեստական յերկի բովանդակության խորը, լրջմիտ ըմբռնմանը— պետք է գրավի նաև 8—9 և 10-րդ դասարանների գրականության դաստվի մեծ ուշադրությունը: Պետք է լավ ընթերցող դաստիարակել, վոր կարողանա վոլ միայն ըմբռնել յերկի ֆարուզան, այլ և համականա նրա մանրամասնությունները, կարողանա ստեղծագործական կարողությամբ վերարտադրել հեղինակի կողմից նկարագրված դեպքերը, գործող անձերին, հասկանա նրանց փոխարարերությունները, յերկի գաղափարական կողմը:

Գրվածքի (կամ նրա առանձին հատվածների) ընթերցումը դասարանում չափազանց կարեոր ե:

Ընթերցումը կարող է ուղեկցվել ուսուցչի մեկնաբանություններով, լուսաբանություններով: Այդ մեկնաբանությունները կարող են բազմազան բնույթ ունենալ: Նրանց նպատակն ե՝ բացարել տեքստի անհասկանալի տեղերը, աշակերտների ուշադրությունը դարձնել գրվածքի կարեոր մանրամասնությունների, գործի վոճի առանձնահատկությունների:

Դասարանում մեծ գրվածքներ կարդալու հնարավորություն է կարիք չկա: Ուստի կարեոր է դաստիարակել նաև տանը ընթերցելու կովտուրան: Դասատվի տված հարցերի պատասխանները, գրվածքի առանձին եպիզոդների վերապատմումը ցույց կտան դաստիլին, թե ինչ չափով ու խորությամբ է յուրացված տեքստը աշակերտների կողմից:

Վերլուծման հետևյալ հոտապն ե՝ աշակերտների հիշողության մեջ վերականգնել յերկի ամենակարեւոր մոմենտները, ամրացնել դրանք, վորոշել թեմատիկան և յերկի հիմնական պրոբլեմները:

Դասարանային աշխատանքի մեջ հիմնականը, ամենահյականը՝ դա գործող անձանց վերլուծումն ե: Այդ աշխատանքը պահանջում է տեքստի լավ յուրացումը, նյութի ընտրելու, այն սիստեմի յինթարկելու, ընդհանրացնելու, դատելու կարողություն:

Վերլուծման ժամանակ պարզվում է ամենագլխավոր գործող անձանց ելությունը, նրանց փոխհարաբերությունները, գրվածքի կոմպոզիցիան, գրողի վոճի առանձնահատկությունները: Աշակերտները պետք է իրենց համար պարզեն հեղինակի տեսակետը, նրա սոցիալ-քաղաքական, գաղափարական-փիլիսոփայական և եսթետիկական հայացքները:

Այս բոլոր ասածները վերլուծման սխեմա չեն հանդիսանում, այստեղ նշվում է միայն այն, ինչ վոր պետք է հասկանալ յերկի վերլուծման տակ: Աշխատանքի ընթացքը և մեթոդները կարող են լինել տարբեր:

Վորոշ դեպքերում յերկի վերլուծությունը նպատակահարմար է սկսել նրա թեման և կոնկրետ պրոբլեմները վորոշելով, այլ դեպքերում՝ ավելի լավ և սկսել պերսոնաֆիլների վերլուծումով և անալիզը վերջացնել յերկի թեման և գաղափարները վորոշելով:

Վերլուծման մեթոդները վորոշվում են նաև գրվածքի ժամանակին առանձնահատկությամբ:

Դրամատիկական յերկի վերլուծությունը տարբերվելու յի եպիկական յերկի վերլուծությունից: Դրամատիկական յերկի մեջ կա հատուկ կոմպոզիցիա, գործող անձանց հատուկ նկարագիր (համարյա ամբողջովին բացակայում են հեղինակային բնութագրերը, հերոսների լեզվի հատուկ նշանակությունը, պեյզաժի հատուկ դերը): Այսպիսով ընթերցումը, վերապատմումը, բնութագրումն այս դեպքում պահանջում է աշխատանքի սպեցիֆիկ պրիորներ:

Յուրահատուկ է նաև լիրիկական ստեղծագործությունների վերլուծությունը: Հուզականությունը, յուրաքանչյուր բառի առավելագույն արտահայտությունը, ոիթմի, հանգի առկայությունը, կերպար-խարակտերի յուրահատուկ ցուցադրումը, բանաստեղծի աշխարհազգացումը— այս ամենը պահանջում է աշխատանքի իր մեթոդները. յեթե դասարանում հարկաւոր է վի-

պական գրվածքներից հատվածներ կարդալ, ապա վուտանավորների ընթերցումը միանգամայն անհրաժեշտ է . բանաստեղծական յերկի վոճի անալիզը հատկապես պետք է լինի նուրբ և խնամքով:

Մակայն 8—10-րդ դասարաններում ուսումնասիրվող յերկի բավականաշափ խոր իմաստավորումը անհնարին և նրանց մեկուսացված ուսումնասիրման դեպում: Անհրաժեշտ է ամենահիմնական գծերով գիտենալ ուսումնասիրվող գրողի կյանքի և ստեղծագործության ուղին: Գրողի փոխհարաբերությունն իր ժամանակակիցների հետ, ուսական և ոտարերկրյա գրողների ազդեցությունը նրա ստեղծագործության վրա, գրողի անըլ գրականության պատմության մեջ, նրա նշանակությունն իր ժամանակակիցների և մեր ժամանակների համար— այս բոլոր հարցերը պետք են լուսաբանվեն, վորքան վոր դա թույլ և տալիս աշակերտների տարիքը, զարգացումը և տվյալ նյութին հատկացված ժամանակը: Դրա հետ միասին ուսուցիչը անհրաժեշտորեն պետք է հենվի աշակերտների արտադպրոցական ընթերցանության վրա, նախապես առաջարկելով նրանց կարդալ գրողի այն ամենագրւիճավոր գրվածքները, վորոնք ավելի բնորոշ են նրա ստեղծագործական ուղղու համար:

Պատմական-գրական նպատակներով շատ կարենոր և նաև, վորպես ինքնուրույն թեմա, տալ աշակերտներին կարենուադույն պատմական-գրական դարաշրջանների ընդհանումը ընութագիրը:

Գրողի առանձին յերկի և ամբողջ ստեղծագործության ուսումնասիրումը կապված է աշակերտների կողմից գրականության տեսությունից գիտելիքներ ձեռք բերելու հետ, գիտելիքներ, վորոնք արվում են զրական յերկերի ուսումնասիրության հետ համընթաց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻԶ-ՆԱԿԱՐԴ ԴՐԱՌՑՈՒՄ

1. Ստեղծել դպրոցականի մեջ գեղարվեստական-գրական յերկի գիտակցական ըմբռնման կուլտուրա:

2. Հաղորդել նրան քննադատական գրականությունը հասկանալու համար անհրաժեշտ հիմնական տերմինոլոգիան:

3. Պատրաստել նրան ինքնուրույն ընթերցման և գրական-գեղարվեստական յերկի վերլուծման համար:

4. Գաղափար տալ գրականության հիմնական առանձնահատկությունների մասին, հասկանալու նրա հասրակական ֆունկցիան:

5. Տալ պատկերացում պատմական-գրական պրոցեսի վերաբերյալ, այսինքն՝ տալ գրական յերկությներն ընդհանրացնելու հմտություններ:

Յուրաքանչյուր յերկի ուսումնասիրությունը պետք է վուշիայն հարստացնի աշակերտների գիտելիքների պաշարը, բարձրացնի նրանց ընդհանուր կուլտուրան, այլև պատվաստի նրանց մեջ կուլտուրական լեզվի, գրքի վրա աշխատելու, հեղինակելու, բանավոր գեկուցումներ անելու ունակություններ:

Աշակերտների հիշողությունը պետք է հարստացնել բերանացի սովորեցնելով նրանց ամենացայտուն գեղարվեստական յերկերը՝ թե՛ վուտմավոր և թե՛ արձակ:

III. Աշխատանքի սխալներ

Նախ և առաջ դասատուն պետք է ապահովի աշակերտների ծանոթությունը գրական աշխատովթյունների մինիմումի հետ, վոր անհրաժեշտ է տվյալ դասարանի դասընթացի համար: Տարվա սկզբին, ավելի լավ և արձակուրդներից առաջ, ուսումնական տարիա վերջին, դասատուն ծանոթացնում է աշակերտներին առաջիկա դասընթացի՝ նրա խնդիրների ու ծավալի հետ, մատնանշում և արտադպրոցական ընթերցման համար պարտադիր և լրացուցիչ գրականության ցուցակը: Խսկ ամբողջ տարվա ընթացքում նա պետք է հետևի աշակերտների սիստեմատիկ ընթերցման:

Գրականության դասերը կառուցվում են տարբեր կերպով, նայած նյութին և ուսումնական աշխատանքի նպատակներին:

Նյութի գգալի մասը, մանավանդ 9—10-րդ դասարաններում, դասատուն շարագրում և աշակերտների համար դասախոսության ծեռվ: Տեղեկությունները՝ դարաշրջանի, գրողի կյանքի ու ստեղծագործական ուղղու, նրա սոցիալ-քաղաքական և փիլիսոփայական հայացքների մասին, գրական հայացքների մասին, պետք է շարագրվեն դասախոսության միջոցով: Խսկ դասախոսության մեջ վորոշ դեպքերում կարելի յեւ տալ և յերկի կամ նրա մի մասի վերլուծությունը, գործող անձանց բնութագրերը և այլն՝ նպատակ

ունենալով վարժեցնելու աշակերտներին պրական տեքստի վրա աշխատելուն:

Ուսուցի դասախոսությունն իր բովանդակությամբ, ծավալով և լեզվով պետք է համապատասխանի յուրաքանչյուր գասարանի աշակերտների գիտական մակարդակին և ունակություններին. պետք է տալ դասախոսության պլանը, ցուց տալ այն գրանցելու յեղանակները: Դրա հետ միաժին մեծ տեղ պետք և բռնեն ոժանդակ-զննական պիտույքները: 8-րդ դասարանում՝ գասարիությունն իր բնույթով մոտ պետք է լինի պատմելու ձևին և պարզորոշ կերպով պետք է բախնչած լինի մասերի: Դաս-դասախոսությունները նայած նյութին, կարող են չինել տվյալ թեմայի ուսումնասիրության սկզբին, միջին կամ վերջին:

Զանազան տեսակի ընթեցանուրյան դասերը, դասատվի ընթեցումը, պատրաստված աշակերտների ընթեցումը, բերանացի ընթեցում, ընթեցում՝ դասատվի մեկնաբանություններով— պետք է նույնպես զգալի տեղ գտնեն:

Դրական թերկի կամ նրա մի մասի վերապատմումը պետք է անցկացվի և բարձր դասարաններում, բայց ավելի բարդ խընդիրներով, քան ցածր դասարաններում: Գրվածքի դասարանային վերլածման դասերը, վորոնք անց են կացնում զրուցի ձևով, նախապես պատրաստված պլանով ու նյութերով, աշակերտների հաղորդման ձևով, պետք է լայն կերպով գործադրել:

Սշակիւրտերի ինքնարույն աշխատանքին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել: Պետք է դաստիարակել ուշադրի ու խոհում կարդալու և տեքստի վրա աշխատելու ունակություններ, տվյալ թեմայի համար անհրաժեշտ մատերիալներ հավաքելու և այն ընդհանրացնելու կարողություն: Սակայն ուսուցի ուշադրության կենտրոնը միայն գեղարվեստական գրքի վրա չըպետք է լինի: Աշակերտը պարտավոր է սովորել յուրացնելու դասագրքի նյութը և ծրագրում ցուց տրված քննադատական հոդվածները:

Դասի ժամանակ ստացած նյութը պետք է յուրացվի և ամրապնդվի դասագրքի ընթեցման միջոցով: Սակայն դասատում չպետք է միայն «Հանձնարարի» դասագրքի մշակած նյութը, Դասագրքի նյութը պետք է որդանապես կապակցված լինի աշակերտի այլ աշխատանքի հետ. տեքստի վրա, պերսոնաֆի բնու-

թագրման վրա, քննադատական հոդվածների վրա կատարված աշխատանքի հետ:

Դասատվի կողմից դասագրքերը կարող են ոգտագործվել և թեմայի սկզբին: Որինակ, գրողի կենսագրությունը կարող է յուրացվել դասագրքով, առանց դասատվի կողմից նախապես պատմվելու, իսկ դասատում հետագայում կարող է միայն լրացնել և ընդլայնել դասագրքից աշակերտի ստացած տեղեկությունները:

Աշակերտների տնային և դպրոցական աշխատանքը, բացի գեղարվեստական յերկի տեքստի յուրացումից, դասատվի, դասագրքի և այլ ձեռնարկների տեղեկություններից, պետք է կայանա նաև զանազան տեսակի բանավոր հաղորդումների և գրավոր աշխատանքների պատրաստման ու կատարման մեջ: Բանավոր վոչ մեծ հաղորդումները և գրավոր աշխատանքները պետք է տրվեն վոչ միայն թեմայի վերջում, վորպես ստուգողական, այլև գրական յերկի վրա կատարված աշխատանքի ժամանակ, վորպես համապատասխան ունակությունների վարժություններ:

8-10-րդ դասարաններում ինքնուրույն գրավոր աշխատանքների (շարադրությունների) գրվածքով գրականության դասատում պետք է աշակերտներին տա հետևյալ ունակությունները: 1) արամաբանորեն, հետևյալականորեն շարադրել յուր մտքերը (կարողանալ գրել պլանով), 2) կարողանալ հիմնավորել, պատճառաբանել զարգացրած մտքերը, 3) կարողանալ յեղբակացություններ և ընդհանրացումներ անել, 4) վոճական տեսակետից ձիշտ ձևակերպել իր մտքերը:

Գրավոր աշխատանքների թեմատիկան և նրանց ծավալը պետք է հետզհետե բարդանա 8-ից 10-րդ դասարան անցնելուն համբնվաց:

Լավագույն ուսուցիչների փորձը ցուց է տալիս, վոր 8-րդ դասարանում գրավոր աշխատանքների ամենանպատակահարթարտիպերը հանդիսանում են, 1) գրվածքի բովանդակության կապակցված շարադրում, 2) մի գործող անձի կամ գործող անձանց մի խմբի, յերկի մեջ պատկերացված միջավայրի կենցաղի պարզ (նկարագրական) բնութագրերը:

9-րդ դասարանում հնարավոր է անցնել բնութագրերը վերլուծելուն՝ ընդհանրացումներ անելով:

10-րդ դասարանում, շարունակելով 9-րդ դասարանի համար

նշված թեմաները, անհրաժեշտ ե առաջադրել աշակերտներին գրավոր շարադրություններ՝ ավելի լայն բնույթի թեմաներով, վորոնք նկատի ունեն վոչ միայն առանձին յերկեր, այլ և գրողի ստեղծագործության ամբողջ մի ժամանակաշրջան. այս դասարանում հարկավոր ե տալ և բնույթագրեր, վորոնք պահանջում են պերսոնաֆիզիկա խորացրած վերլուծություն և վորոշ ընդհանուր բացումներ:

Սկսած 9-րդ դասարանից անհրաժեշտ ե առաջադրել աշակերտներին և գրական-հրապարակախոսական թեմաներ, վորոնք մեծ դաստիարակչական նշանակություն ունեն (որինակ. «Խորհրդային հայրենասիրություն» և այլն):

Տնային աշխատանքների համար հնարավոր ե (հետևյալ պայմանների առկայության դեպքում. արտադպրոցական ընթերցանության սիստեմատիկ կազմակերպում, բավականաշատի քանակությամբ տեքստերի գորությունը՝ դպրոցական գրադարանում) առաջադրել շարադրության թեմաներ, վորոնք նկատի ունեն աշակերտների արտադպրոցական ընթերցանությունը (որինակ. «Հ. Հակոբյանի ստեղծագործական ուղին» և այլն):

Աշակերտներին հնարավոր ե սովորեցնել գրելու շարադրություններ, միայն այն դեպքում, յերբ 8—10-րդ դասարաններում տարվա ընթացքում տրվեն բավականաշատի գրավոր աշխատանքներ: Լավագույն ուսուցիչների փորձը հետեւյալ կերպ ե վորոշում գրավոր աշխատանքների քանակը. 8-րդ դասարանում՝ վոչ պահանջին և 3 տնային շարադրություն. տնային շարադրություններն այդ դասարանում տրվում են յերկրորդ կիսամյակում, առաջին կիսամյակում անց են կացվում դասարանային—վարժողական և ստուգողական շարադրություններ. 9-րդ դասարանում՝ վոչ պահանջին և 4 տնային շարադրություն. 10-րդ դասարանում՝ 6 դասարանային և 2 տնային շարադրություն. տնային շարադրությունները տրվում են առաջին կիսամյակում, վորովհետև յերկրորդ կիսամյակում աշակերտներն զբաղված են գլխավորապես ավարտական բննություններին նախապատրաստվելով:

Դասարանային շարադրությունների համար դպրոցի վարչությունը պետք է սահմանի յերկուական ժամ միանգամմից:

Դասատուն պետք ե աշակերտների աշխատանքի ամենորյա հաշվառում կատարի, գնահատելով նրանց գիտելիքները և հըմ-

տությունը՝ դասընթացի բոլոր հատվածների հիման վրա: Թեման վերջացնելուց հետո պետք ե կրկնել նրա ամենաելական մոմենտները և նույնպես հաշվի առնել, թե վորչափով այդ թեման յուրացված ե աշակերտների կողմից:

Տարվա վերջին կրկնվում են դասընթացի ամենաբարդ բաժինները: Տարին վերջանում ե ստուգողական քննություններով—գրավոր և բանավոր:

Դպրոցական աշխատանքներին ոժանդակելու նպատակով պետք ե ծավալվեն նաև արտադպրոցական աշխատանքները: Դասատուն անպայման պետք ե կազմակերպի գրական խմբակ, վորի պարապմունքների ժամանակ աշակերտներն ստանում են՝ ծրագրով չնախատեսնված լրացուցիչ գիտելիքներ և ունակություններ: Խմբակը կարող ե խթանել նաև աշակերտների անձնական ստեղծագործությանը:

Դպրոցը 10-րդ դասարանի այնպիսի շրջանավարտներ՝ պետք ե տա, վորոնք բավականաշատի գեղարվեստական գրականություններն կարդացել, գիտեն գրականության պատմության հիմնական փաստերը և տիրապետում են ճիշտ գրական լեզվին:

ԾՐԱԳԻՐ

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԸ

Ենրածություն (1 ժամ).— Գաղափար գեղարվեստական գրականության և նրա սպեցիֆիկայի (առանձնահատկությունների) մասին.— Գրականությունը վորպես հասարակական գիտակցության ձևերից մեկը: Գրականության (գեղարվեստական ստեղծագործության) իմացական-ձանալողական նշանակությունը:

Դասակարգային հասարակություններում գրականության դասակարգային բնույթը և միաժամանակ ընդհանուր հասարակական-պատմական արժեքը: Լենինը անցյալի կուտուրական-գրական ժառանգության քննադատական յուրացման և ուսուագործման մասին:

Հայ ժողովրդի ավելի քան յերկհաղարամյա գրականությունը և նրա տեղն ու նշանակությունը համաշխարհային գրականության մեջ:

I. Ժողովրդական բանահյուսություն (2 ժամ)

Ժողովրդական բանահյուսության (Փոլկորի) ընդհանուր բը-նութագությունը: — Ֆոլկորը — աշխատավոր ժողովրդի բանավորգեղարվեստական ստեղծագործություն: Ֆոլկորի առանձնահատկությունը գրավոր գեղարվեստական գրականության համեմատությամբ: Ֆոլկորի ստեղծագործական բազմազանությունը. թեմատիկան, սյուժեները, ժանրերը (լիրիկական յերգեր, հեքիաթներ, զրուցներ, վիպերգություն, առակներ, առածներ, ասացվածքներ, հանելուկներ և այլն): Վ. Ի. Լենինը ժողովրդական բանահյուսության մեջ՝ «Ժողովրդի իզգերի և ակնկալումների» արտահայտությունների մասին: Ֆոլկորը՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ստալինյան տեսության լույսի տակ:

Մ. Գորկին — մարդկության աշխատանքային գործոններության հետ ֆոլկորի ոնքցած կապի, ժողովրդական բանավոր ստեղծագործության իդեալական խորության և գեղարվեստական կատարելության մասին:

«Հերոսների ամենից ավելի խորը և պայծառ, գեղարվեստականորեն կատարյալ տիպերը ստեղծել ե ֆոլկորը, աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործությունը» (Մ. Գորկի): Ֆոլկորի հնությունն ու հարատե կենսունակությունը և նրա՝ «անընդհատ ու վորոշակի ազգեցությունը գրավոր գեղարվեստական գրականության վրա» (Մ. Գորկի): Ֆոլկորի հասարակական-պատմական իմացական նշանակությունը. «Հի կարելի գիտենալ աշխատավոր ժողովրդի բուն պատմությունն առանց գիտենալու ժողովրդական բանավոր ստեղծագործությունը»: «Ֆոլկորն ամենահին ժամանակից անբաժան և յուրահատուկ կերպով հետեւում ե պատմությանը» (Մ. Գորկի):

Հայկական ֆոլկորի հարստությունը և բազմազանությունը (հին հայկական առասպելներ, զրուցներ, եպոս և այլն):

Հայ գուսանները, մեր պատմիչների հաղորդած տիպիկությունները գուսանների ու նրանց արվեստի մասին: Մովսես Խորենացու «Պատմության» մեջ պահպանված գուսանական ստեղծագործության նմուշները: Հայ ժողովրդական առասպելների և եպոսի հնությունը («Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ» և այլն): Հայաստանի հին ժողովրդների՝ ոտար նվաճողների գեմմած պայքարի արտացոլումն այդ առասպելներում: Պարսկական և Հոռմեական տիրապետության դեմ Հայ ժողովրդի մղած հերո-

սական պայքարի արտացոլումը հին առասպելների ու եպոսի ժեց («Տիգրան-Աժդահակ-Վահագն», «Արտաշես, Սաթենիկ», Արտավազդ», «Տորք-Անգեղ» և այլն):

II. Համառոտ ակնարկ հին շրջանի հայ գրականության պատմության վրա. (2 ժամ)

Հայ գրականության սկզբնավորումը: Կովտուրան և գրականությունը Հայաստանում մինչև հայկական տառերի գլուոր: Խալդական սեպագիր արձանագրությունները: Պարսկական գիրն ու գրականությունը Հայաստանում: Հունա-հռոմեական ազդեցությունը:

Հայաստանի քաղաքական վիճակը 4-րդ դարի վերջերին և 5-րդ դարի ընթացքում: Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Նրանց քաղաքականությունը և Հայաստանի ինքնուրույն գոյությանն ու անկախությանն սպառնացող վտանգը: Հայերեն գրի ու գրականության ստեղծման անհրաժեշտությունը և նշանակությունը Հայաստանի անկախության պահպանման գործում: Գրերի գլուոր 5-րդ դարում և դրա հասարակական-կովտուրական պլրոգրեսիվ նշանակությունը. հայերեն գրականության ստեղծվելը: Սկզբնական շրջանում պատմության ուժեղ զարգանալը և նրա խոշոր ներկայացուցիչները (Փավստոս, Խորենացի և ուղիղները): Սշխարհիկ գեղարվեստական գրականության նկատմամբ հայ յեկեղեցականության ժիտական վերաբերմունքը և դրա պատճառները:

Հին շրջանի հայ գրականության ժանրերը. պատմություն, յեկեղեցական բանաստեղծություն, կրօնական-փիլիսոփայական գրվածքները: Դրաբարը — այդ շրջանի տիրապետող գրական լեզու:

1. Մովսես Խորենացի (5-րդ դար) (2 ժամ)

Կենսագրական տեղեկություններ: Խորենացին, վորպես հայ խոշորագույն պատմիչ և իր ժամանակի միջազգային գրականության ամենակուլտուրական գեմքերից մեկը: Խորենացին և Անտիկ աշխարհի կուտուրան: Խորենացու «Պատմությունը» և նրա մեջ արտահայտված իդեաները: Խորենացին վորպես հայրենիքի անկախության ու միասնության գաղափարի չերմ պաշտպան, նրա

Հայրենասիրությունը և ժողովրդամիբությունը: Խորենացու քըն-նադատական վերաբերմունքը դեպի իշխանավորները և Հոգե-Վորականները: Խորենացին և Հայ ժողովրդական բանահյուսությունը: Խորենացու լեզուն և վոճը: Խորենացու «Հայոց պատմության» միջազգային արժեքը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

«Հայոց պատմություն» (Հաստվածներ)

II. Միջին շրջան

2. Հայ ժողովրդական եպոս «Սասունցի Դավիթ» (3 Ժամ):

«Սասունցի Դավիթ» ժողովրդական եպոսի ստեղծման ժամանակաշրջանը: Եպոսի ժանրային առանձնահատկությունները, վարիանտները և առանձին ամբողջական ձյուղերը: Արարական բռնակալ տիրապետության և առհասարակ ոտար նվաճողների ու կեղեքողների դեմ Հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի արտացոլումը «Սասունցի Դավիթ» եպոսում: Դավիթի ձյուղը: Դավիթը, վորպես աշխատավոր ժողովրդի հերոսականության մարմնավորող: Մորա Մելիքը, վորպես բռնակալ և կեղեքիչ: Եպոսի Դավիթի ձյուղի գեղարվեստական կատարելությունը և ամբողջականությունը: Դավիթի բնավորության գծերը: «Սասունցի Դավիթ»-ի զանազան մասերի մշակումը մեր նոր գրականության մեջ (Թումանյան, Ավետիք Իսահակյան և ուրիշները): «Սասունցի Դավիթ» եպոսի 1000-ամյա հոբելյանի կատարումը 1939 թվականութիւն վաղմաթիւվ վարիանտներից ընդհանուր և ամբողջական կանոնավոր տեքստի կազմումը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

«Սասունցի Դավիթ»

3. Գրիգոր Նարեկացի (10-րդ դար) (1 Ժամ):

Կենսագրական տեղեկություններ. Նարեկացու եպոսան. գլուղացիական շարժումներ. թոնդրակեցիներ. այդ շարժումների և նրանց ձնշման արտացոլումը գրականության մեջ:

Յեկեղեցական կրոնական բանաստեղծությունը Նարեկացուց առաջ և նրա շրջանում: Բանաստեղծության աշխարհականացման տարրերը Նարեկացու «Տաղեր»-ի մեջ:

Ժողովրդական բանահյուսության լայն ոգտագործումը: Նա-

րեկացու բանաստեղծական բարձր կուլտուրան-բազմազան շափեր, յերաժշտականություն, Հարուստ և գումագեղ պատկերներ: Նարեկացու խոշոր դիրք Հայկական բանաստեղծության զարգացման պատմության մեջ: Նրա ազդեցությունը հետագա շըրշանների գրողների վրա:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

«Տ ա ղ ե ր»

III. 13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականությունը.

Բանաստեղծությունը Նարեկացուց Հետո մինչև 13-րդ դարը: 13-րդ դարից սկսած գրականության լեզվի և բովանդակության աշխարհականացման ուժեղացումը և դրա հասարակական-պատմական պատճառները: Հայ աշխատավորության դեմոկրատիայի ուժեղանալն ոտար և տեղական ֆեոդալ կեղեքիների դեմ մղած պայքարում: Աշխարհիկ գրականության հիմնական ժանրերն այդ շրջանում՝ առակներ, նովելներ և լիրիկական բանաստեղծություններ:

Ժողովրդական և թարգմանական առակներից ժողովածուներ կազմելը:

1. Վարդան Այգեկցի (3 Ժամ) (XII—XIII դ.): Կենսագրական տեղեկություններ: Այգեկցին վորպես առակների առաջին ժողովածու կազմողներից մեկը: Այգեկցու, ինչպես և Հետազարդում Այգեկցու հետևությամբ ուրիշ հեղինակների կողմից կազմած առակների ժողովածուների մեծ մասի ժողովրդական ծագումը և եյությունը:

Բուն ժողովրդական ստեղծագործություն հանդիսացող առակների, նովելների և անեկոտների բովանդակության հատկանշական գծերը — ուժեղ աստիքա ուղղված հոգևորականության և աշխարհիկ ֆեոդալականության դեմ. ճգնավորների, տերտերների շահամոլության և անառակ վարքի մերկացումը և նույնիսկ շատ զեպքերում ուղղակի ժխտական վերաբերմունքը դեպքի քայլի քրիստոնեյական վարդապետությունը: Առակների, նովելների ժանրային և գեղարվեստական մշակման առանձնահատկությունները: Առակների թեմաների ոգտագործումը Հայ նոր գրողների կողմից (որինակ՝ Թումանյան — «Մի կաթիլ մեղր», «Անըուն կկուն» և այլն):

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

Գող քահանան և այրին
Այրին և կովն
Յեզն ու ձին
Յեկեղեցի և ջրաղաց
Աղքատ և ավետարան
Գառն և փողահար գայլ
Աղվես և խեցգետին
Աղվես և կաքալ
Արծիվ և կաքալ և բղեկ
Աղվես և թղթատար գայլ
Ոձ և հողագործ
Իշխան և այրի
Հիմար և ձմերուկ
Կաշառառու քահանա
Միայնակյաց և գամբո շուն

2. Ֆրիկի (13-րդ դար) (3 ժամ): Կենսագրական տեղեկություններ: Ֆրիկի ստեղծագործության դեմոկրատական բնույթը. Հայաստանը մոնղոլական տիրապետության շրջանում. այդ շրջանի հայ աշխատավորության սոցիալական ծանր վիճակի արտացոլումը Ֆրիկի պոեզիայում: Ֆրիկը վորպես ֆեոդալական հասարակական հարաբերությունների քննադատ, նրա ցասումն ու բողոքն ոտար լծի և սոցիալական անարդարությունների դեմ: Ֆրիկը վորպես հայ աշխարհիկ բանաստեղծության սկզբնավորողներից մեկը. կրոնական աշխարհայցքի որյեկտիվորեն ժխտումը մի քանի վոտանավորների մեջ և բանաստեղծության կրոնական քարացած ձեւերի խորտակումը Ֆրիկի կողմից:

Ժողովրդական բանահյուսության և Ֆրիկի ստեղծագործության սերտ կապը: Ֆրիկի վոտանավորների ուժեղ պաթուը: Ֆրիկի ուսալիկմը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

Ընդդեմ ֆալաքին
Բան ի Ֆրիկ գրքուն (գանդատ):
3. Կոստանդին Յերզնկացի (13—14-րդ դար) (3 ժամ): Կեն-

սագրական տեղեկություններ: Պատմական տեղեկություններ նրա ապրած ժամանակաշրջանի մասին: Կոստանդին Յերզնկացին (Ֆրիկի հետ միասին) վորպես աշխարհիկ բանաստեղծության խոշոր սկզբնավորողներից մեկը: Յերզնկացուց սկսվող՝ սիրո և բնության թեմաները քնարերգության մեջ. դրանց պրոգրեսիվ նըշանակությունը: Յերզնկացու բնապաշտական և սիրային բանաստեղծությունները, վորպես ֆեոդալական իրականության և կրոնական-ուսակցություններուն աշխարհայցքի հակադրություն:

Յերզնկացու վոտանավորների վառ կոլորիտը: Յերզնկացին վորպես վոտանավորների ձեփի խոշոր վարպետ: Ժողովրդական բանահյուսության լիովի ոգտագործումը Յերզնկացու կողմից: Իրանական բանաստեղծություններից կրած ազգեցությունը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

Տաղ սիրո

Տաղ գարնան

Տաղ սիրո ազնիվ

4. Նահապետ Քուչակ (16-րդ դար) (3 ժամ): Կենսագրական տեղեկություններ: Քուչակը, վորպես Ֆրիկից և Յերզնկացուց հետո զարգացող աշխարհիկ բանաստեղծության ամենախոշոր ներկայացուցիչը: Քուչակի ստեղծագործության թեմաները: Քուչակն իբրև սիրո և ղարիբության յերգիչ, նրա հումանիզմը: Քուչակի ստեղծագործության ժողովրդայնությունը: Իրական կյանքի պաշտամունքը նրա վոտանավորներում՝ հակառակ ֆեոդալական կրոնական գաղափարախոսության:

Քուչակի ուսալիկմը: Քուչակի վոտանավորների ուժեղ պատկերավորությունը և վառ կոլորիտը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

Քառյակներ (սիրո, պանդստության, խոհական) (20 հատ)

5. Հայկական ապագրություն (1 ժամ)

Հայկական տպագրության սկիզբը (16-րդ դար): Տպագրության կենտրոնները (Վենետիկ, Հռոմ, Ամստերդամ և այլն): Տպագրության նշանակությունը հայ ժողովրդի կուտուրայի զարգացման պատմության մեջ: Պատմագիրների յերկերի և բառա-

բանների հրատարակությունը: Հայերեն առաջին տպագիր գրքերը. «Տաղարան», «Պղնձե քաղաքի պատմությունը» և այլն:

Հայ գեղարվեստական գրականության ձեռագիր հուշարձանների մեծ մասի անտիպ մնալը մինչև 19-րդ դարը և դրա պատճառները:

6. Սայաթ-Նովա (18-րդ դար) (4 ժամ):

Պատմական տեղեկություններ Սայաթ-Նովայի ապրած ժամանակաշրջանի մասին: Կենսագրական տեղեկություններ: Գ. Հախվերդյանի մեծ ծառայությունը Ս. Նովայի յերկերի հրատարակությունը: 1852 թ. հրատարակությունը:

Սայաթ-Նովան վորպես աշուղական բանաստեղծության ամենամեծ վարպետը. նրա ստեղծագործության ժողովրդական եյությունը: Յերեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն, աղբբեշաներեն գրելու հանգամանքը, վորպես այդ բանի ապացուցներից մեկը: Սայաթ-Նովան իրեն սիրո յերգիչ: Նրա թախիծը, վորպես արդյունք ֆեռովալական տիրող կարգերի նկատմամբ ունեցած խորը դժգոհության: Սայաթ-Նովայի հումանիզմը: Սայաթ-Նովան, վորպես հայկական, վրացական և աղբբեշանական ժողովրդական յերերի գեղեցկությունների հմուտ ոգտագործող: Նրա վոտանափորների յերաժշտականությունը և պատկերավորությունը: Սայաթ-Նովայի լեզվի արևելյան վառ կոլորիտը:

Մ. Նալբանդյանը, Հ. Թումանյանը և Վ. Բրյուսովը Սայաթ-Նովայի մասին: Սայաթ-Նովայի գրական աշուղական դպրոցը. Շամշի Մելքոն. նրա ստեղծագործությունները: Սայաթ-Նովայի այլ հետեւողները:

Ն Յ Ա Ի Թ Ե Ր

Քյամանչա

Դուն են գլխեն

Սրի համով ղովաուղ արա

Աշխարհումս ախ չիմ քաշի

Քանի վուր ջան իմ

Բլբովի հիդ

Ուստի կուգաս

Յես մի դարիք

Մի խոսք ունիմ

13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականության խոշոր նշանակությունը նոր գրականության զարգացման պատմության մեջ: Մեր որերում նրա խոշոր կուլտուրական ժառանգություն լինելու հանգամանքը:

III. ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (19—20 դԱ.Բ)

1. Խաչատուր Աբովյան (1809—1848) (6 ժամ): Կենսագրական: Պատմական տեղեկություններ Աբովյանի ապրած ժամանակաշրջանի հայ հասարակական կյանքի մասին: Աբովյանը վորպես հայ նոր գրականության սկզբանորող և աշխարհաբար վեպի հիմնադիր: Գրաբարի կովտի և կեղծ կլասիցիզմի շահախումը Աբովյանի կողմից: «Վերք Հայաստանի» վեպը իբրև խոշոր գրական-պատմական պրոգրեսիվ յերեւութ: Այդ վեպի գեղարվեստական արժանիքները. ուեալիզմի տարրեր, պլաստիկ պատկերավորություն, վորոշ սկզբունքի համաձայն՝ հետևողական կոմպոզիցիա, ժողովրդական եպոսի և աշուղական բանաստեղծության վոճի ոգտագործումը, տեղական կոլորիտի ստեղծում և մի շարք դեպքերի ու տեսմարանների դիմամիկ նկարագրություն և այլն: Վեպի գեղարվեստական թերությունները — կողմնակի շեղումներ, հրաշապատում դեպքեր և այլն: Պարսիկ շահերի բռնակալական տիրապետության ուժեղ քննադատություն:

Աբովյանի աշխարհայացքի հիմնական գծերը՝ հումանիզմ, լուսավորության քարոզ, բնապաշտություն, ոռաական որիենտացիա, ժողովրդական հայրենասիրություն: Աբովյանը վորպես նոր դպրոցի ու մանկավարժության ուհիիրա: Աբովյանի կրած ազգեցությունները ոռուսական և յելլուպական գրականությունից:

Աբովյանի մյուս գրվածքները («Պարագ վախտի խաղալիք», «Ռվաննա», «Թուրքի աղջիկ», «Հազարփեշեն») և նրանց արժեքը: Աբովյանի թողած աղջիկը հետագա հայ գրողների վրա:

Ն Յ Ա Ի Թ Ե Ր

«Վերք Հայաստանի» (Հատվածներ)

«Թուրքի աղջիկ» (Կրճատ)

2. Միքայել Նալբանդյան (1829—1866) (7 ժամ): Կենսագրական: Պատմական տեղեկություններ Նալբանդյանի ապրած ժամանակաշրջանի մասին: Նալբանդյանը վորպես հայ դեմոկրատիայի խոշոր գործիչ և աշխարհաբար վառ գործիչ հայ գրականության մասին:

Հեղափոխական գաղափարախոսը: Խուսական հեղափոխական դեմոկրատիայի (Գերցեն, Զերնիշևսկի) ազգեցրությունը նալբանդանի վրա: Նալբանդյանի հրապարակախոսության յերկու շրջանի մասին. առաջին՝ «Հյուսիսափայլ»-ին աշխատակցելու շրջանում, նրա տեսակետների եյական տարբերությունը նազարյանից (Փրանս. բուրժ. հեղափոխության, 18-րդ դարի լուսավորիչների, ցարիզմի գնահատման, «ազգ» գաղափարի ըմբռնման նկատմամբ և այլն): Յերկրորդ շրջանում՝ նալբանդյանի՝ վերջնականապես դեմոկրատ հեղափոխական դասնալը: «Յերկու տող» և «Յերկրագործությունը վորպես ուղիղ ճանապարհ» աշխատությունները՝ հողային հարցի հեղափոխական ուղիով լուծելու պահանջ, ազգային հարցում դեմոկրատական տեսակետի պաշտպանում, ֆեռդականության, բուրժուական կարգերի, լիբերալիզմի և ցարիզմի ուղացիոն քաղաքականության, ինչպես նաև սովորական բռնակալության մերկացումը և խիստ քննադատություն: Նալբանդյանի գաղափարական բարեկամները թյուրքահայերի շրջանում (Հ. Սվաճյան և այլն): Յերկրագործության՝ վորպես ուղիղ ճանապարհ, տեսակետի ուսուպիկ բնույթը:

Նալբանդյանի գեղարվեստական ստեղծագործությունները: Նալբանդյանը վորպես աշխարհաբար քաղաքական պոեզիայի և ուելիստական վեպի սկզբնավորող: «Մեռելահարցում» վեպը. բուրժուազիայի քննադատական պատկերը վեպուամ: Նալբանդյանը իբրև քննադատ: Խեալիստական վեպի սկզբունքի արծարծումը «Սոս և Վարդիթեր» վեպի մասին գրած կրիտիկայում: Նալբանդյանի լեզվաշինարարական հայացքները. Նալբանդյանի հրապարակախոսության փայլուն վոճք: Նալբանդյանի թողած ազգեցությունը հայ գրականության վրա:

Ն Յ Ո Ւ Ե Բ

Վազող ջրին
Մանկության որեր
Բանաստեղծ

Յերկրագործությունը վորպես ուղիղ ճանապարհ (Հատվածներ):

Կրիտիկա— Սոս և Վարդիթերի մասին (կրծատ):

3. Պերճ Պոռշյան (1837—1907) (6 ժամ): Կենսագրական:

շյանը վորպես սոցիալական վեպի հիմնադիր: 60-80-ական թվականների հայ գյուղի ծանր վիճակը և դրա արտացոլումը Պոռշյանի վեպերում («Հացի խնդիր», «Ցեցեր», «Հունոն» և այլն): Պոռշյանը, վորպես գյուղական աշխատավոր մասսաների ձեղությունների արտահայտիչ: Կուլակության, վաշխառուների, հոգեվորականության և ցարական շինովնիկների գիշատիչ դեմքի, և ստոր արարքների մերկացումը: Պոռշյանի ուելիզմը և նրա վեպի բարձր գեղարվեստական արժանիքները (գյուղական իրականության հարստ պատկեր, ցեցերի հաջող գծված դեմքեր՝ Միկիտան Սաքոն, Բալասան աղան, Բղդեն և այլն): Ժողովրդական բանահյուսության լայն ոգտագործումը և տեղական վառ կոլորիտի ստեղծումը: Պոռշյանի վեպերի գեղարվեստական թերությունները (ոսմանտիզմի տարրեր՝ հանգուցների լուծման ժամանակ, կողմնակի շեղումներ և այլն):

Դեմոկրատական ապստամբական տրամադրություններ Պոռշյանի վերջին գործերում («Հունոն»): Պոռշյանի թողած ազգեցրությունը հետագա գրողների վրա:

Ն Յ Ո Ւ Ե Բ

Հացի խնդիր (Հատվածներ)
Ցեցեր (Հատվածներ)

4. Ղազարոս Աղայան (1840—1911) (6 ժամ): Կենսագրական: Աղայանը վորպես հայ գյուղացիական դեմոկրատիայի արտահայտիչ: Աղայանի խոշոր դերը գրական լեզվի զարգացման բնագավառում: Նրա ստեղծագործության բազմազանությունը: Աղայանն իբրև բանաստեղծ: Այս բանում համեմատաբար մանկական բանաստեղծությունների ուժեղ լինելը: Աղայանն իբրև մանկական գրականության հիմնադիր: Աղայանն իբրև վիպասան: «Յերկու քուրբ»-ը վորպես առաջին մաքուր գրական լեզվով գրված աշքի ընկնող վեպ մեր գրականության մեջ: Սույնը՝ իբրև առաջին սոցիալական վեպերից մեկը: 60—70-ական թվականների հայ գյուղի հասարակական հարաբերությունների պատկերը վեպում: շահագործվող գյուղացիության պայքարը հողի համար: Վեպի հերոս Արգումանը վորպես ապստամբ գյուղացի: Աղայանի ուելիզմը և նրա վեպի գեղարվեստական բարձր արժեքը: Աղայանի՝ շահագործողների դեմ ունեցած ապստամբական տրամադրությունների արտահայտությունը նաև «Քյորովլի» հեթանում:

Աղայանն իբրև հերիաթագիր. ժողովրդական հերիաթի մշակման նրա մեթոդը (Համեմատել Թումանյանի հետ): Վերլուծել «Տորք Անգեղ»-ը և «Արեգնազան»-ը: Աղայանի սոցիալական ուսուպիան: «Արդար բաժանության» տեսակետը («Բաժանություն»):

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Յերկու քույր (կրօնատ)

Մանկական բանաստեղծություններ (Ճախարակ, Զմեռ, Հիշողություն, Հովկի անկողինը, Մանուշակ, Առավոտը դյուրում, Հնձվորներ):

5. Թափայել Պատկանյան— Գամառ—Քարիպա (1830—1892) (4 ժամ): Կենսագրական տեղեկություններ: Պատկանյանն իբրև առաջին աշխարհաբար գրող բանաստեղծներից մեկը: Նրա ստեղծագործության բազմաժանրությունը: Պատկանյանի ստեղծագործության բովանդակության հիմնական գծերը: Նրա ազգայնականությունը և ոռմանտիզմը: Պատկանյանն իբրև յերգիծաբան, նրա ռեալիզմը. բուրժուազիայի, հոգեորականության ու ցարիզմի քննադատությունը և մերկացումները: Պատկանյանն իբրև մանկական բանաստեղծ: Պատկանյանի վոտանավորների պոետիկական հատկությունները: Պատկանյանի լեզու:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Բանաստեղծություններ

Աղբյուր

6. Սմբատ Շահազիզ (1841—1907) (3 ժամ): Կենսագրական տեղեկություններ: Շահազիզն իբրեւ հայ նոր լիրիկայի սկզբնավորողներից մեկը: Պուշկինի, Բերանժելի, Բալրոնի ազդեցությունը նրա վրա: Շահազիզի բանաստեղծությունների հիմնական մոտիվները: Նրա «Էկոնի վիշտը» պոեմն իբրև առաջին լիրիկական պոեմ հայ գրականության մեջ: Հայ իրականության քննադատությունը պոեմ: Շահազիզի լուսավորական հայացքները: «Էկոնի վշտի» գեղարվեստական արժանիքներն ու թերությունները: Շահազիզի ոռմանտիզմը: Շահազիզի հրապարականության գործերը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Լեվոնի վիշտը (Հատվածներ)

Բանաստեղծություններ

7. Ծերենց— Հովսեփ Շիշմանյան (1832—1888) (3 ժամ): Կենսագրական տեղեկություններ: Ծերենցն իբրեւ պատմավիպասան («Թորոս Լևոնի», «Յերկունք», «Թեոդորոս Ռշտունի»): Հայ ժողովրդի ազատագրական պայքարն արաբական տիրապետության դեմ 9-րդ դարում և դրա պատկերումը Ծերենցի «Յերկունք» վեպում: Խութեցի Հովսենը ժողովրդական հերոսի տիպ: Ծերենցի դեմոկրատիզմը: Նրա պատմահայեցողության իդեալիստական բնույթը և գրական ոռմանտիզմը: Ծերենցի վեպերի արժանիքներն ու թերությունները:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Յերկունք թ. դարու (Հատվածներ)

8. Բաֆֆի— Հակոբ Մելիք-Հակոբյան (1835—1888) (6 ժ): Կենսագրական տեղեկություններ: Բաֆֆու ստեղծագործության ժանրերը: Բաֆֆու ստեղծագործության առաջին շրջանը. Փեղալական հետամնացության, առևտրա-վաշխառուական բուրժուազիայի քննադատությունը նրա այդ շրջանի գործերում («Փունջ», «Ջաճրումար» և այլն): Բաֆֆու «Վոսկե աքաղաղ» վեպը. ոհալիզմի տարրերն այդ վեպում: Մասիսյանի կերպարը:

Բաֆֆու ստեղծագործությունը ոռութուրքական պատերազմի տարիներին («Ջալալեդին», «Խենթ» և այլն). Նրա մարտական նացիոնալիզմը և կապը «Մշակ» թերթի հրապարակախոսության հետ: Բաֆֆու այս շրջանի գրվածքների ծայրահեղ ոռմանտիզմությը և նրանց գեղարվեստական թուղթությունը:

Բաֆֆու ստեղծագործության վերջին՝ պատմական վեպեր գրելու շրջանը: Ցարական ռեակցիային հակաբրվելու տեղեկնեցը նրա պատմական վեպերում («Սամվել» և այլն):

Բաֆֆու պատմական վեպերի գեղարվեստական արժանիքները: Բաֆֆու լեզուն: Բաֆֆու ստեղծագործության խոշոր գերը Հայ վիպագրական ժանրի և գրական լեզվի զարգացման պատմության մեջ: Բաֆֆու կրած և թողած ազդեցությունները:

Վոսկի աքաղաղ (Հատվածներ)
Սամվել (Հատվածներ)

9. Գաբրիել Սունդովյան (1825—1912) (7 ժամ): Կենսագրական: Սունդովյանն իբրև հայ խոշորագույն գրամատուրգ: Սունդովյանի նախորդները: 70—90-ական թվականների հայ առևտրական բուրժուազիայի կյանքի և կենցաղի պատկերը Սունդովյանի կոմեղիաններում: Գաղափար կոմեղիայի մասին, վորպես գեղարվեստական գրականության ժամրի: Սունդովյանի ռեալիզմը և այդ ռեալիզմի ուժեղ քննադատական բնույթը: Սունդովյանի մերկացումները. «Խաթաբալա», «Պեպո» և մյուս պիեսներում հանդես բերած՝ խարդախ միջոցներով հարստացող վաշխառու-առեւտրական կեղեքիչների տիպերը՝ ջամբախով, ջիմզիմով, Փարսիդ և ուրիշներ: Սունդովյանի սատիրան սրանց նկատմամբ և որյեկտիվորեն տրված ժխտական պատկերը: Սունդովյանի ստեղծագործության բարձր գեղարվեստական արժեքը: Սունդովյանի կոմեղիանների ժամրային առանձնահատկությունները: Յելքոպական և ոռուական դրամատուրգիայի խոշոր վարպետների (Շեքսպիր, Մոլիեր, Ռուտրվսկի և այլն) գրական կուտուրայի և փորձի հաջող ոգտագործումը: Սունդովյանի կոմեղիանների: գրամատիկական արժանիքները (գործողության միասնություն, աշխուժ դիալոգներ և մոնոլոգներ, վարպետ խարակտերիստիկա և այլն):

Սունդովյանի համակրանքը դեպի դեմոկրատիայի ներկայացուցիչները: Սունդովյանի կոմեղիանները խորհրդային բեմի վրա և կինեմոտոպրաֆիայի մեջ: Սունդովյանի ստեղծագործության կապակցությամբ համառոտ ակնարկ ուսւածագործ Ռուտրվսկու մասին, հատկապես վերլուծելով նրա «Ամպրոպ» պիեսը:

Խաթաբալա (կրծատ)

10. Հակոբ Պարոնյան (1842—1891) (7 ժամ): Տեղեկություններ Պարոնյանի ապրած ժամանակաշրջանի պոլսահայ հասարակական կյանքի մասին: Կենսագրական տեղեկություններ Պա-

րոնյանի շարունակ նյութական անապահով վիճակը: Սովորական կառավարության և հայ հոգկորականության կողմից կրած հաւածանքները, նրա հրատարակած թերթերի համախակի արգելումը: Պարոնյանը վորպես հայ յերգիծաբանության խոշոր դեմքը: Պարոնյանի խոշոր դեմք հայ գրականության ռեալիստական ուսումնականի մեջ:

Պարոնյանը վորպես ժողովրդի իսկական ազատության և յերջանիկ կյանքի իրականացմանը ձգտող հեղինակ: Բուրժուական ազգայնական ռեակցիոն գաղափարախոսության և այլ գաղափարախոսություն արտահայտող ինտելիգենցիայի ներկայացուցիչների նկատմամբ Պարոնյանի ժխտական յերգիծանքը: Նրանց գործունեյության հակաժողովրդական յերթան մերկացումը Պարոնյանի յերկերում: Մանր բուրժուական ինտելիգենտների և կենցաղի վլորշ յերևույթների նկատմամբ նրա հումորական վերաբերմունքը: Պարոնյանի՝ վորպես յերգիծաբանի՝ միջազգային մեծությունը: Նրա սատիրայի խորը քաղաքական բովանդակությունը. սովորանիզմի, ցարիզմի և առջասարակ յելլոպական կապիտալիստական գիշատիչ պետությունների նվաճողական և ժողովուրդներին ստրկացնելու քաղաքականության, դիալոգամատիայի կեղծության խիստ քննադատությունը և դատապարտումը:

Պարոնյանի կիրառած գրական ժանրերը՝ յերգիծական նովել, վեպ, կոմեդիա և այլն: Պարոնյանի յերգիծաբանական պրիունները: Պարոնյանի կոմեդիանները խորհրդական բեմի վրա: Պարոնյանի ստեղծագործության ոգտագործման խոշոր նշանակությունը մեր այսորվա յերգիծական գրականության մեջ: Համաշխարհային յերգիծական գրական կուտուրայի (Արիստոֆան, Մոլիեր), հաջող ոգտագործումը Պարոնյանի կողմից: Պարոնյանի թողած ազդեցությունը հայ գրողների վրա (Յերվանդ Ռույան): Պարոնյանի ստեղծագործության կապակցությամբ՝ համառոտ ակնարկ ֆրանսիացի խոշոր դրամատուրգ Մոլիերի մասին, վերլուծելով նրա «Քաղքենին ազնվական» և «Ժորժ Դանդան» կոմեդիանները:

Մեծապատիվ մուրացկաններ (կրծատ)
Հոսուի ձեռաւետը (Հատվածներ)
Բաղդասար աղբար (Հատվածներ)

ԲԵՐԱՆԱՅԻ ԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՉՆԱՐԱՐՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ

1. Սասունցի Դավիթ.— (Մի քանի հատված՝ ուսուցչի ընտրությամբ):

2. Ֆրիկ.— «Ընդեմ ֆալաքին»:

3. Քուշակ.— «Քառյակներ» (10 հատ):

4. Սայար-Նովա.— «Քյամանշա», «Դուն են գլխեն», «Քանի վուր ջան իմ»:

5. Մ. Նալբանդյան.— «Վազող ջրին», «Մանկության որեր», «Ապողունին»:

6. Գ. Սունդուկյան.— «Խաթաբալա» (մոնուգներ):

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԲՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԹԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. «Սասունցի Դավիթ»— ամբողջական տեքստը:

2. Ֆրիկ (ժողովածու):

3. Սայար-Նովա.— «Հայերեն խաղերի լիակատար ժողովածու»

4. Խաչատուր Աբովյան.— «Վերք Հայաստանի»:

5. Միքայել Նալբանդյան.— «Յերկու տող», «Յերկրագործությունը»:

6. Գերեն Պոռշյան.— «Հացի խնդիր», «Ճեցեր», «Հունոն»:

7. Ղազարոս Աղայան.— «Յերկու քույր», «Հերիաթներ»:

8. Կաբրիել Սունդուկյան.— «Պեպո», «Քանդած ոջախ», «Վարինկի վեշերը»:

9. Հակոբ Պարոնյան.— «Մեծապատիվ մուրացկաններ», «Կըսմիթներ», «Ազգային ջոշեր», «Բաղդասար աղբար»:

10. Մերենց.— «Յերկունք թ. դարու», «Թողոս Լևոնի»:

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹՅՈՒԽԻՑ

1. Խոսք Իգորի գնդի մասին:

2. Ռուսավելի.— «Վազրենավորը»:

3. Հոմերոս.— իլիականը և Վոդիսականը:

4. Մոլիեր.— Տարտյուֆ, Ագաճը:

5. Շիլլեր.— Վիլհելմ Տելլ:

6. Վ. Հյուգո.— 93 թվականը:

7. Պուշկին.— Հայերեն հրատարակված բանաստեղծություն— ների և արձակի յերկհատորյակը:

8. Լերմոնտով.— Մեր ժամանակի հերոսը, Մծիրի:

9. Գոգոլ.— Տարաս Բուկրա:

10. Տուրգենև.— Հայրեր և վորդիներ, Մումու:

9-րդ ԴԱՍԱՐԱՆ

1. Պետրոս Դուրյան (1851—1872) (4 ժամ): Կենսագրական տեղեկություններ: 60-ական թվականների պոլսահայ աշխատավորության տնտեսական քայլքայումը և նրանց դժգոհության աճումը տիրող կարգերի դեմ: Վերջիշել նալբանդյանի և Սվաճյանի կապը, վորպես այդ իրողության ապացուցներից մեկը: Դուրյանի պոեզիան վորպես անդրագարձում քաղաքային դեմոկրատիայի ծանր դրության: Դուրյանի լիրիկայի թեմաները՝ սոցիալական բողոքի առկայություն, դժբախտ սեր, ըմբոստացում մահվան ու աստծո դեմ և համակերպում: Բանաստեղծության մեջ Դուրյանի բերած նորությունները՝ գրական աշխարհաբար լեզուն, վոճի պատկերավորությունը, իրական, կենդանի սիրո առկայությունը: Դուրյանը խոշորագույն լիրիկ բանաստեղծ և հայկական նոր լիրիկայի հիմնադիր: Դուրյանի թողած ազգեցությունը հայ հետագա լիրիկայի վրա:

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

Տրտումչ

Միրել

Դրժել

Լճակ

Թրքուշին

Ներա հետ

Սկս-սկ

Ինձի կսեն

Իմ մահը

2. Հովհաննես Հովհաննիսյան (1864—1929) (5 ժամ): Հ. Հովհաննիսյանի կենսագրությունը: Անցյալ դարի 80-ական թվա-

կանների գյուղացիության քայլայման արձագանքները Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ:

Հովհաննիսյանի բողոքը կապիտալիզմի դեմ: Գյուղական ցեղերի և վաշխառության քննադատությունը, վորպես հասարակական չարիքի («Գյուղի ժամը», «Հատիկ», «Մնաք բարով, արև, գարուն» և այլն):

Հայ ժողովրդի անազատ, ճնշված վիճակի և ազգային ազատագրական ձգությունների արտահայտությունը Հովհաննիսյանի պոեզիայում («Հավատում եմ», «Հեղիկ կարկաչով», «Ասում են», «Ամենայն անգամ» և այլն):

Հ. Հովհաննիսյանի պեսսիմիզմը, վորպես տիրող հասարակարգի դեմ ունեցած դժողության և քայլայմով շերտերի փորձությունը շտեմնելու արտահայտություն: Բարեգործության և քրիստոնեական սիրո քարոզը, վորպես միջոց հասարակական շարիքի դեմ: Այդ կապակցությամբ Հ. Հովհաննիսյանի աշխարհայացքի պահպանողական տարրերը:

1905 թվի հեղափոխության ընթացքում Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ ըմբոստացման մոտիվներ—«Թրոմեթեսուին»:

Հովհաննիսյանի ստեղծագործությունը նոր, բարձր ետապ և հայկական պոեզիայի զարգացման պատմության մեջ. բանաստեղծական ձեերի բազմազանությունը Հ. Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ: Հովհաննիսյանը վորպես բանաստեղծական լեզվի և տաղաշափության ականավոր վարպետ:

Նրա բանաստեղծությունների խոր հուզականությունն ու անկեղծությունը, ժողովրդական լեզվի և բանահյուսության վարպետ ոգտագործումն ու մշակումը, ժողովրդական մոտիվների հարազատությունը Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ՝ «Արագն եկավ լափին տալով», «Ալագյազ բարձր սարին» և այլն:

Հ. Հովհաննիսյանի կրած ազգեցությունը սուսական պոեզիայից, մասնավորապես՝ Պուշկինից ու Լերմոնտովից: Հովհաննիսյանը, վորպես հմուտ թարգմանիչ և թարգմանական կուլտուրայի առաջին ականավոր ներկայացուցիչներից մեկը մեր պոեզիայում («Յերգչի անեծքը», «Սպիտակ զգեստ», և այլն):

Յերկու հանապարհ
Ելեզիա
Մնաք բարով, արեվ, զարուն,
Վորպես հաղթանդամ
Լինում և րոպե
Յես անմոռնը զնում ելի
Յերբ մատաղ մուսամ
Յես քեզ սիրեցի
Աշուն
Ալագյազ, բարձր սարին
Նոր գարուն
Սարն ի վեր
Արտավազդ
Ասում են

Տիուր յերգիւը
Գյուղի ժամը
Յերանի նորան
Յես քեզ սիրում եմ
Ամենայն անգամ
Թեպետ խեղդված եմ
Արագն եկավ
Արծիվն ու արտուտը
Գու յերևեցար
Անցիր, սև ամպ
Անուշ
Հեղիկ կարկաչով
Հավատում եմ
Վահագնի ծնունդը:

3. Ալեքսանդր Շատուրյան (1865—1917) (4 ժամ): Ալեքսանդր Շատուրյանի կենսագրությունը: Շատուրյանի պոեզիայի դեմոկրատիզմը, աշխատավորի ծանր վիճակի և արդար վաստակի յերգը՝ վորպես Շատուրյանի ստեղծագործությունների հիմնական մոտիվ («Թշվառին», «Ով ես դու, յեղբայր», «Յերկրի մշակներ», «Սերմնացան»):

Ալեքսանդր Շատուրյանի բողոքը կապիտալիզմի դեմ: Նրա մերկացնող քննադատությունը հայ բուրժուազիայի, բուրժուական ինտելիցիայի և հոգևորականության նկատմամբ: Շատուրյանի յերգիծանքը՝ ուղղված հայ մեծատունների և բուրժուական ինտելիցիայի դեմ («Գրչի հանաքներ»): Թախտի առկայությունը Ալեքսանդր Շատուրյանի սիրո և բնության յերգերի մեջ:

Շատուրյանի աշխարհայացքի հետագա զարգացումը ուսուական դեմոկրատական հասարակական մտքի ազգեցության տակ: Շատուրյանի պոեզիայի լավատեսական տրամադրություններն ապագայի նկատմամբ՝ 1905 թվի հեղափոխության շրջանում: Ռուսական հեղափոխության ազգեցությունը Շատուրյանի ստեղծագործությունների վրա: «Բանվորուհու որորը»՝ վորպես Շատուրյանի հեղափոխական տրամադրությունների արտահայտություն:

Ծառուրյանը վորպես հայ լիրիկական պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից մեկը: Նրա շափածոյի բարձր կուտուրան, տաղաշափական վարպետությունը, պարզ կառուցվածքը, պատկերավոր և հարուստ լեզուն, ձեերի բազմազանությունը: Ծառուրյանի քնարերգության խոր հուզականությունն ու անմիջականությունը, զգացումների անկեղծությունը և ժողովրդական կյանքի ու հոգեբանության հարազատ պատկերացումը («Սերմնացան», «Յերկրի մշակներ», «Նալավար» և այլն):

Ա. Ծառուրյանի կրած ազգեցությունները Պուշկինից և Լերմոնտովից: Ծառուրյանը վորպես լավագույն թարգմանիչ և նրա թարգմանությունների խոշոր գրական կուլտուրական նշանակությունը մեր գրականության պատմության համար:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Իմ ուխտը	Յես շեմ յերգում
Տապանագիր	Մի համբուլը
Գետակ	Թշվառին
Այ վարդ	Յերկրի մշակներ
Գնա, ցուրտ ձմեռ	Պոետին
Սեր	Նավավար
Մի վհատիր	Նավորդներ
Յեկ, գարնան անձրեւ	Գիշերամուտի յերգերից
Պանդուխտի յերգը	Բանվորուհու որորը
Թե քեզ ոտար չե	«Դրչի հանաքներ»-ից՝
Խաղ չե	Հեղտ ճամբար
Տուր ձեռքդ, ընկեր	Գայլ բարեպաշտ
Մայր	Հայ հեղինակի աղոթքը:

4. Մուրացան (1854—1908) (8 ժամ).— Մուրացանի կենսագրությունը:

Գյուղացիության և քաղաքի աշխատավորական խավերի տնտեսական-հասարակական ծանր վիճակը կապիտալիստական հասարակության մեջ, վորպես Մուրացանի յերկերի հիմնական թեման: Մուրացանի գյուղացիական դեմոկրատիզմը, «Առաքյալը», «Նոյի ագուալը», Մուրացանի բացասական դիրքը դեպի կապիտալիստական հասարակությունը: Այդ հասարակության

քննադատությունը, «Առաքյալը»: Լիրերալ ինտելիգենցիայի բնույթը տիպի վարպետորեն պատկերումը (Պետրոս Կամսարյան): Մուրացանի խոր ունալիզմը գյուղացիական թեմատիկա ունեցող յերկերում, «Առաքյալը»: Մուրացանի սոցիալական ուսուպիան և նրա ոռմանտիզմը: Ինտելիգենցիայի ունֆորմատորական գործունեյությունը վորպես փրկության միջոց՝ ըստ Մուրացանի. «Խորհրդավավոր միանձնուհի», գյուղի «փրկության» մանր բուրժուական ուսուպիական ծրագրին այս վեպում. քույր Աննայի ոռմանտիկ նկարագիրը: Նրա կերպարի դրական գծերը. անձնագոճություն և նվիրվածություն ժողովրդին:

Միանձնուհին իրեւ առաջին գաղափարական հայ կինը մեր գրականության մեջ: Բուրժուական քաղաքի քննադատությունը Մուրացանի յերկերում: «Լուսավորության կենտրոն»: Մոմացանի հաղանի կերպարը, վորպես բուրժուական ինտելիգենցիայի ծաղրանկարը: Սարյանի դրական տիպը և նրա ոռմանտիկ բնույթը: Մուրացանը վորպես ականավոր յերգիծաբան: Մոմացանի և Պետրոս Կամսարյանի տիպերը վորպես յերգիծաբանական արժեքավոր կերպարներ: Քաղաքացին աշխատավորական խավերի նյութական ծանր վիճակի նկարագրությունը Մուրացանի պատմվածքներում. «Հարուստները զվարճանում են», «Հասարակաց վորդեգիրը»:

Պատմական անցյալը Մուրացանի ստեղծագործության մեջ, «Գևորգ Մարզպետունի». արաբ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատկերումն այս վեպում. հեղինակի պատմացյաց նվաճողության իդեալիստական բնույթը:

Մուրացանը վորպես գրական մաքուր լեզվի և կառուցվածքի խոշոր վարպետ: Նրա նշանակալից դերը հայ գոականության պատմության մեջ վիպագորության ասպարիզում:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Առաքյալը (Հատվածներ)
2. Նոյի ագուալը (Կրծատ)
3. Գեվորգ Մարզպետունի (Հատվածներ)

5. Քննադատական ռեալիզմ

Հասկացողություն քննադատական ռեալիզմի մասին: Քըն-նադատական ռեալիզմը Յելրոպայում և Ռուսաստանում— նրա ազդեցությունը հայ գրականության վրա: Ռեալիզմի գարգա-ցումը հայ գրականության մեջ և. Աբովյանից, Պ. Պոռշյանից մինչև Ա. Շիրվանզադեն:

6. Ավելսանդր Շիրվանզադե (1858—1935) (10 ժամ).— Ա. Շիրվանզադեի կենսագրությունը:

Հայ բուրժուական հասարակության գարգացման պրոցեսի պատկերը Շիրվանզադեի յերկերում: Շիրվանզադեն վորպես քննադատական ռեալիզմի խոշոր ներկայացուցիչ մեր գրակա-նության մեջ: Շիրվանզադեի ռեալիզմը վորպես հայ գրակա-նության գարգացման նոր ետապ. «Թառո»: Գաղափար վեպի մա-սին, վորպես գեղարվեստական գրականության ժանրի: Այդ կա-պակցությամբ Ա. Շիրվանզադեի կատարած պատմական գերը հայ վիպական գրականության գարգացման ասպարիզում: Շիր-վանզադեի ռեալիզմի ոբյեկտիվ քննադատական հյությունը: Բուրժուական հասարակության բարքերի քննադատությունը Շիրվանզադեի յերկերում. «Թառո», «Պատվի համար»: Լիբերալ ինտելիգենցիայի գործունեյության պատկերումը Շիրվանզադեի վեպերում. «Արսեն Դիմաքյան»: Դիմաքյանը վորպես լիբերալ բուրժուական ինտելիգենտ: Հայ հին ասիսկան վաճառականու-թյան քննադատությունը. «Պատվի համար»: Ելիզեարովը վոր-պես վարպետորեն մշակված կերպար: Արդյունաբերական բուր-ժուականի գործունեյությունը և բարեկործության քարոզ. «Թառո». Սմբատ Ալիմյանի, Միքայելի տիպերը: Բարոյական վերածնության խնդիրը, վորպես ինտանիթի փրկության միջոց ըստ Շիրվանզադեի («Թառո» և այլն): Ժողովրդական խավերի կյանքի պարզության դրվագումը, դրա հակադրումը բուրժուա-կան բարքերին: Խաջապետական հետամնացության, սնոտիապաշ-տության և անհատականությունը վոչնչացնող բոնակալական բարքերի քննադատությունը Շիրվանզադեի յերկերում: Բար-խուղարի, Սուսանի, Սելյանի, Ռոստամի կերպարները («Նա-մու», «Զար վոգի»): Բուրժուական եգորիզմի քննադատությունը: Բանվորների մարդասիրությունը, խիզախությունը, ընկերու-թյունը, ինտերնացիոնալ համերաշխությունը Շիրվանզա-

դեյի յերկերում (Կարապետի, Չուպրովի և Ռասովի տիպերը):

Շիրվանզադեյի վեպերը և դրամատիկական յերկերը վոր-պես գեղարվեստական մեծ ընդհանրացումներ: Կյանքի լայն ընդ-գրկումը, բուրժուական կյանքի աղտեղության, բարոյական անկ-ման կլասիկ տիպականացումը: Տիպերի բազմակողմանիությունն ու տիպականությունը, հասարակական և անձնական կոնֆլիկտի որդանական միավորումը սյուժեյի մեջ: Հակագրություններն ու բաղնաւմները, կուռ կոմպոզիցիան, ուժեղ դրամատիզմը վորպես վիպական խոշոր կուտարայի արտահայտություն («Թառո»): Շիրվանզադեյի լիրիզմը «Արտիստ» գրվածքում. Առնի կերպարը:

Գաղափար դրամայի մասին, վորպես գեղարվեստական գրա-կանության ժամանակ:

Շիրվանզադեն վորպես դրամատուրգ: Սունդուկյանի դրամա-տուրգիական ռեալիստական գծի շարումակությունը Շիրվան-զադեյի դրամաներում («Պատվի համար»): Շիրվանզադեյի գրա-կան լեզուն, վորպես դրամատուրգիայի գարգացման նոր ետապ:

1905 թվի հեղափոխությունից հետո Շիրվանզադեյի կատա-րած եվոլյուցիան, ռեալիզմիայից կրած ազդեցությունը («Կոր-ծանվածը»): Ռոմանատիզմի բնորոշ արտահայտությունները Շիր-վանզադեյի «Ավերակների վրա» և «Արմենուհի» դրամաներում:

Շիրվանզադեն խորհրդային շրջանում: Նրա գրական գործու-նեյությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո («Մորգանի խնամին» և այլն): Շիրվանզադեյի հոբելյանը: Շիրվանզադեն ժողովրդական գրող:

Շիրվանզադեյի կրած ազդեցությունը Բալզակից, Ֆլորերից, և. Տուստոյից և ավելի ուշ շրջանում՝ Գոլայից:

Ն Յ Ո Ւ Բ Ե Ր

1. Թառո (Հատվածներ)

2. Նամու (Հատվածներ)

3. Պատվի համար (Հատվածներ)

4. Արսեն Դիմաքյան

5. Մորգանի խնամին

6. Արտիստը

7. Նար-Դու (1867—1933) (8 ժամ): Նար-Դուի կենսագրու-թյունը:

19-րդ դարի վերջերի հայ հասարակական կյանքի արտացոլումը նար-Դոսի ստեղծագործության մեջ: Քաղաքային աշխատավորական խավերի և մանր բուրժուական ինտելիգենցիայի քայլայումն ու անկումը, վորպես նար-Դոսի ստեղծագործությունների համար նար-Դոսի քննադատական վերաբերմունքը դեպի վերոհիշյալ խավերի պակասությունները: Բուրժուական հասարակության մեջ մենակության՝ դատապարտված ինտելիգենցիայի՝ «ավելորդ մարդկանց» ներքին հոգեբանական յերկվությունը, այդ խավերի՝ դեպի բուրժուական հասարակությունը տածած ներքին ատելությունը և բուրժուական հասարակական կարծիքին ստրկանալն ու բարոյական անկումը, վորպես նար-Դոսի հոգեբանական ոռմանի առանցքը: Աննա Սարոյանի, Պատրիկիանի, Մանելի գեղարվեստական խոշոր կերպարները, նրանց հոգեբանության և ներքին յերկվության խոր վերլուծությունը: Բուրժուական հասարակության մեջ այլասերված ինտելիգենցիայի մերկացումը նար-Դոսի յերկերում (Բազենյանի և Թուսյանի տիպերը):

Նար-Դոսը վորպես դեմոկրատ և բուրժուական հասարակության հակառակորդ: Այդ հասարակության այլասերման մերկացումը նար-Դոսի վեպերում. «Մահը», «Փայքար»: Նար-Դոսի հերոսուհիների վողբերգությունը, վորպես բուրժուական այլասերված բարքերի արդյունք: Սառայի տիպը («Սպանված աղավնի»):

Լիբերալիզմի և լիբերալների քննադատությունը («Փայքար»): Նար-Դոսը վորպես ականավոր ռեալիստ: Նրա ռեալիզմի տարբերիչ գծերը Շիրվանզադեյի ռեալիզմից: Մարդկային հոգեբանության հակասությունների վարպետ արտացոլումը: Ուժեղ դրամատիկական վիճակներ, պարզ նկարագրությունը և կուռկոմպոզիցիան («Սպանված աղավնի»): Նար-Դոսը նովելի վարպետ. «Մեր թաղը» ժողովածուն:

Նար-Դոսի լեզվի մաքրությունն ու պարզությունը:

Նար-Դոսի կրած ազգեցությունը ուսւագությունը դոստունկուց, լ. Տուստոյից, Տուրքենից:

Նար-Դոսը վորպես խորհրդային գրող («Վերջին մոհիկաններ») և քաղաքացի. Նար-Դոսի հոբելյանը. Նար-Դոսը — ժողովրդական գրող:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

- Հոպուպ
- Սպանված աղավնի (Հատվածներ)
- Մահը (Հատված)
- Փայքար
- Վերջին մոհիկաններ

8. Վրբանես Փափազյան (1866—1920) (6 ժամ). — Վրբանես Փափազյանի կենսագրությունը:

Վ. Փափազյանի ստեղծագործական եվոլյուցիան—ազգայնական մտայնությամբ տոգորված ոռմանտիկական պատմվածքներից դեպի գյուղացիական դեմոկրատիզմն ու ռեալիզմը: Գյուղացիության քայլայման ու հողագորկման պրօցեսի արտացոլումը Վ. Փափազյանի յերկերում: Փափազյանի քննադատական վերաբերմունքը դեպի ժամանակակից իրականությունը և տիրող կարգերը: Գյուղացիական դեմոկրատիայի պաշտպանությունը Փափազյանի մի շարք ստեղծագործություններում: Բողոք և ցասում ցարիզմի և կուլակության դեմ. «Ժայռ» և գյուղական պատմմարզածքների շարքը: Այդ բողոքը վորպես ագրարային-գյուղացիական շարժման արտահայտություն Անդրկովկասյան գյուղում:

1905 թվի հեղափոխության ազդեցությունը Վ. Փափազյանի յերկերի վրա. «Վիշապ»: Վ. Փափազյանի պարսկական կյանքից վերցրած վեպերում արտահայտած քննադատական վերաբերմունքը կը երա-ֆեոդալական մտայնության և միապետության նըկատմամբ: Ժողովրդական բունտարական տրամադրությունների արտահայտությունները «Ալեմդիր» գրվածքում: Լիբերալիզմի բննադատությունը Վ. Փափազյանի ռեալիստական գրվածքներում: Փափազյանի ստեղծագործության բազմաժանրությունը. նովել, ժամանակակից և պատմական վեպ, դրամա, նամականի: Փափազյանը վորպետ վարպետ նովելիստ: Փափազյանի լեզվի պարզությունը, գունագեղությունը և պատկերավորությունը: Փափազյանը—դրականության պատմաբան. «Պատմություն Հայոց գրականության» աշխատությունը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

- | | |
|-----------------|-------------------------|
| 1. Արտը | 5. Զըռչութար |
| 2. Վիշապ | 6. Կորսված արդարություն |
| 3. Բմբուտի մահը | 7. Մերկ գերվիշը |
| 4. Լուր-դա-լուր | 8. Հողի աշխատավորը |

9. Գրիգոր Զոհրապ (1860—1915) (4 ժամ).— Գ. Զոհրապի կենսագրությունը. Զոհրապը «Մասիս» հանդեսի խմբագիր (1892): Զոհրապը, վորպես արեվմտահայ ռեալիստական արձակի և հատկապես նովելի խոշոր ներկայացուցիչ: Զոհրապը ռեալիզմի տեսաբան:

Նրա ստեղծագործությունների ժողովածուները.— «Խղճմը-տանքի ձայներ» (1908), «Կյանքը ինչպես վոր ե» (1911), «Լուռ ցավեր» (1911): Բուրժուական ընտանիքի ու բարքերի նկարագիրը. Գ. Զոհրապի նովելներում: Սիրո և կնոջ պրոբլեմը. «Անդրշիմի սերը», «Յերշանիկ մահ», «Ալրին»: Սոցիալական հարցեր արծարծող նովելները. «Ճիտին պարտքը», «Ժամանուն», «Ալինկա»:

Գր. Զոհրապի նովելների գեղարվեստական արժանիքները—սեղմ ու հստակ վոճ, պատկերավորությունը, լիրիզմը, կոմպոզիցիայի վարպետությունը: Զոհրապի լեզուն:

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

1. Զաբուղոն
2. Թեփարիկ
3. Ալինկա
4. Ֆուրթանա

10. Հովհաննես Թումանյան (1869—1923) (12 ժամ).— Թումանյանի կենսագրությունը: Թումանյանի եպոխան:

Թումանյանը վորպես հայ ժողովրդի մեծ գեմոկրատ բանաստեղծը: 19-րդ դարի վերջին քառորդի և 20-րդ դարի սկզբի հայ հասարակական կյանքի մի շարք եյական կողմերի ընդհանուրացումները Հ. Թումանյանի ստեղծագործության մեջ: Թումանյանի մեծ ժողովրդական գործականությունը: Ժողովրդական զանգվածները, վորպես Թումանյանի յերկերի հավաքական հերոսը: Աշխատավորական լայն զանգվածների ազգային և դասակարգային ճնշման

ու հարատաշաբության և տիրող կարգերի դեմ ժողովրդական ըմբռության ու բողոքի ցայտում արտահայտությունը, վորպես թումանյանի դեմոկրատիզմի հատկանշական գիծ: «Սասունցի Գավիթը», «Հառաշանք», «Պարողիա», («Իմ հայրենիքը տեսե՞ւ ես, ասա՛»): «Հին որդնություն», «Թագավորն ու չարչին»:

Հ. Թումանյանը վորպես բուրժուական հասարակության հակառակորդ: Բուրժուազիայի, գյուղական ցեցերի, հոգեվորականության դիմագծումը թումանյանի յերկերում: «Գիքորը»: Գիքորի և բազագ Արտեմի տիպերը: «Տերն ու ծառան», «Պոետն ու մուսան»:

Թումանյանի հումանիզմը, խաղաղասիրությունը և ժողովրդների յեղացրության քարոզը:

Թումանյանը 1905 թ. ոռաւական հեղափոխության համակիր և ժողովրդների յեղացրական համերաշխության ջատագով: Թումանյանի պայքարը հայ-թուրքական ընդհարումների դեմ և նրա հաշտարար գերը («Մենք այս ցած, տմարդի կովով միանցամայն դուրս մնացինք Թուսաստանի ազատագրման մեծ կը ուղի»— Թումանյան):

Ժողովրդի յերշանկության իդեալի, աշխատավորի արդար վաստակի, հալալ հացի, սիրո, պարզության, ազատության, մարդասիրության հակագրումը բուրժուական բարքերին: «Փարվանա», «Հաղարան բլբուլ», «Քայլակներ», «Հեքիաթներ»:

Հետամնացության, տգիտության, ընտանեկան բռնակալության և կնոջ ստրկության խիստ քննադատությունն ու լուսավրականության քարոզը Թումանյանի յերկերում. «Մարոն», «Անուշ», «Լոռեցի Սաքոն», «Անիծած հարսը», «Նեսոյի քարաբաղնիսը»:

Մարոյի, Մոսիի կերպարները վորպես հին գյուղի գյուղացիության տիպական ներկայացուցիչներ: «Անուշ»-ը վորպես 90-ական թվականների հայ կյանքի գեղարվեստական հանրագիտարան: «Անուշ»-ի սերտ կապը ժողովրդական սիրավեպերի հետ: Գաղափար պոեմի մասին, վորպես գեղարվեստական գրականության ժանր: Ժողովրդի կյանքն ու բանահյուսությունը վորպես Թումանյանի ստեղծագործությունների ակունքը: Հայկական ժողովրդական եպոսի բարձրարվեստ մշակումը. «Սասունցի Գավիթը»: Ժողովրդի ազատության և հայրենիքի պաշտպանության գաղափարը, վորպես «Սասունցի Դավիթ» պոեմի իդեական առանցքը: Թումանյանի պոեզիայի պարզությունն ու ժո-

զովրդաշնությունը, վորպես նրա ստեղծագործությունների ամենաարժեքավոր կողմը: Թումանյանի պոեզիան, վորպես մեր գրականության մեջ նոր ու բարձր ետապ՝ իր թեմատիկայով և արվեստով: Թումանյանի ստեղծագործության բազմաժանրությունը: Պարզ ժողովրդական լեզուն, բացառիկ պատկերավորությունը: Թումանյանի արձակը. նրա նովելները վորպես սեղմ, պարզ արձակի կլասիկ նմուշներ («Գիքորը»):

Ժողովրդական հերիաթների մշակումը. Թումանյանը վորպես հայ մանկական գրականության մեծ վարպետն ու հիմնագիրներից մեկը: Թումանյանի կապը Աղայանի և Հովհաննիսյանի հետ— հայ գրականության գծով: Թումանյանի կրած ազդեցությունը ուստական պոեզիայից՝ Պուշկինից և Լերմոնտովից: Թումանյանը և իրանի մեծ բանաստեղծները (Ֆիրդուսի, Խայամ, Խաքանի): Թումանյանը վորպես կլասիկ թարգմանիչ ուստական և յելքոպական հեղինակներից: Հոկտեմբերյան հեղափոխության ընդունումը Թումանյանի կողմից և նրա անցումը խորհրդացին իշխանության կողմը: Նրա գործունեյությունն այս շրջանում: Ս. Շահումյանի բարձր գնահատականը Թումանյանի ստեղծագործությունների մասին: Թումանյանը հայ ժողովրդի ազգային հանճարեղ բանաստեղծ: Նրա ստեղծագործության միջազգային նշանակությունը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

Պոեմներ յեվ բանաստեղծություններ

1. Հառաշանք (Հատված)
 2. Պոետն ու մուսան
 3. Անուշ
 4. Փարվանա
 5. Թմբկաբերդի առումը
 6. Սասոնցի Դամիթը
 7. Թագավորն ու շարշին
 8. Հազարան բլբուլ (Հատվածներ)
 9. Լոռեցի Սաքոն
 10. Մարտ
11. Պարողիա
 12. Գուլթանի յերգը
 13. Համերգ
 14. Հին որհնություն
 15. Վրաստանի համար
 16. Քոշաքարում յես վազել եմ
 17. Քառյակներ
 18. Մանուկն ու ջուրը:

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

1. Գիքորը
2. Յեղերուն
3. Նեսոյի բարաբաղնիսը

ՀԵՔԻԱԹՆԵՐ

1. Տերն ու ծառան

11. Ավետիք Խահակյան (ծնվ. 1878 թ.) (5 ժամ).— Ավետիք Խահակյանի կենսագրությունը:

Ա. Խահակյանի քնարերգության հիմնական մոտիվները— աշխատանք, սեր, գյուղական բնություն, բմբոստացում և բողոք սոցիալական անհավասարության և անարդարության դեմ. «Ախ, մեր սիրտը»:

Խահակյանի խոր թախիծը և հուետեսությունը, վորպես կապիտալիզմի պայմաններում քայլայվող աշխատավորական շերտերի համար փրկության հեռանկար շահսնելու արտահայտություն, անելություն դեպի բորժուական հասարակությունը, բուրժուական հայրենիքը, իրավունքը, ընտանիքը, և այլն («Երու-Լալա-Մահարի»):

Խահակյանի խոր թախիծը և հուետեսությունը, վորպես անհատապաշտություն՝ 1905 թվի հեղափոխությանը հաշորդող ռեակցիայի տարիներին. «Աբու-Լալա-Մահարու կերպարը: Այս պոեմի գեղարվեստական բարձր արժանիքները՝ ճոխ և մաքուր լեզու, հիանալի պատկերավորություն, խորը լիրիզմ»:

Ավետիք Խահակյանի պոեզիայի ժողովրդականությունն ու պարզությունը: Հայ ժողովրդական եպոսի մշակումը Ավ. Խահակյանի կողմից. «Սասմա Մէեր» վիպերգի յուրահատուկ լեզուն: Մէերի ուամկության իդեալը՝ «ուամկի որենք և իրավունք»: Խահակյանի պոեզիայի որգանական կապը ժողովրդական բանահյուսության հետ: Ա. Խահակյանը հայ քնարերգության մեջ վարպետ. նրա պարզ լեզուն, բանաստեղծության պարզ կառուցվածքը, բացառիկ պատկերավորությունը, կենցաղային վառ կոլորիտը, բանաստեղծական ձեմերի բազմազանությունը, նրա

սիրային լիրիկայի բարձր կուտուրան, վարպետ տաղաչափությունը և խոր հուզականությունը:

Ավետիք Իսահակյանի արձակը, վորպես արձակ բանաստեղծություն. «Լիլիթ» և «Արձակ Եցեր»:

Իսահակյանի կրած ազդեցությունը ոռւսական և յելլուպական գրականությունից — Հայնրիմ Հայնե և Լերմոնտով:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անհայտ, անորոշ, անժեռ տենչերով
2. Գիշերն եկավ, զով-հովն ընկավ
3. Յես յեգիլ եմ — յերկնի թիթեռ
4. Յել արծիվ մի սել իջավ սրարշավ
5. Քեզ շտեսնել ուխտել ելի
6. Ե՞ս, դու ջահել հպարտ հասակ
7. Մի՛րտ իմ, սպասիր
8. Շափաղ կուտաս բաղի միջին
9. Մաճկալ ես, բեղարած ես
10. Անհուն վրեժի և ատելության
11. Ազատության դանդ
12. Ախ, մեր սիրու
13. Կյանքի կովում ամենքը դեմ ամենքի

ԱԼԱԳՅԱԶԻ ՄԱՆԻՒՆԵՐ

1. Իմ բախտին
2. Նախերդ
3. Արագածին
4. Մանթաշին
5. Զարուի յերգը
6. Ու համբուրեց ինձ մեղմով
7. Ամպն ե կախել շուրթը տրտում
8. Շող-շաղափին յեկավ կանդմած
9. Յերազիս մեջ լիճը տեսա

ԼԵԳԵՆԴՆԵՐ ՅԵՎ ՊՈԵՄՆԵՐ

1. Մոր սիրու (լեգենդ)
2. Ասպետի սերը
3. Աբու-Լալա-Մահարի (Հատվածներ)
4. Սասմա Մէկը

12. Յերվանդ Ույան (1869—1926) (3 ժամ): Յերվ. Ույանի կենսագրությունը. նրա ժուրնալիստական-հրապարակախոսական գործունեյությունը — Ույանը խմբագիր մի շարք թերթերի ու գրական հանդեսների («Հայրենիք», «Արեվմէլք», «Միություն», «Ազատ խոսք», «Ազատ բեմ», «Կառավինատ» և այլն):

Ույանի աշխարհայացքը — լիբերալիզմն ե. Ույանը տաղանդավոր յերգիծաբան ու վիպագիր. նրա յերգիծանքն ուղղված ազգայնական-բուրժուական կուսակցությունների («Դաշնակցություն», «Հնչակյաններ») դեմ. «Հեղափոխության մակարուցները» (1899—1900), «Արտասահմանյան գործիչը», «Վոր մենք հեռու», «Անվավեր հերոսներ» և այլն:

Ույանի վիպական գործերը. արեվմտահայ առեվմտրական բուրժուագիալի և հոգևորականների շահամոլության և բարոյական այլասերվածության մերկացումը. — «Ծննդանիք, պատիվ, բարոյական», «Միջնորդ տեր-պապան», «Ազգային բարերար», «Վաճառականի մը նամակները»: Ույանի յերգիծական գործերի ճանաշուղական արժեքը. Ույանի ռեալիզմը, յերգիծական գործերի հատկությունները. ռեալիստական կերպարներ. Դուկաս հֆենդի, Կողմա Դամբիանոսյան, Տեր-Միքիաս և այլն:

Ույանի յերգիծանքը բուրժուական մամուլի նկատմամբ («Ազգային բարերար», «Թաղականին կնիկը», «Ծննդանիք, պատիվ, բարոյական»): Ույանի մեմուարները — «12 տարի Պոլսեն դուրս»:

Ույանի կրած ազդեցությունները Հ. Պարոնյանից, Դիկենսից, Եմ. Զոլայից:

Ույանը թարգմանիլ. Լ. Տոլստոյից՝ «Աննա Կարենինա», «Հարություն», Ե. Զոլայից՝ «Արգասովություն»:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Ազգային բարերար
2. Հեղափոխության մակարուցները
3. Վաճառականի մը նամակները

13. Դանիել Վարուժան (1884—1915) (3 ժամ): Դ. Վարուժանի կենսագրությունը. «Գողգոթայի ծաղիկները» և «Հացին յերկը» ժողովածուները: Ընդգրումներ ցարական և սովորական ոեմիմի գեմ: Յելուպայի բանվորական շարժման և եմիլ Վերհարսի պոեզիայի ազդեցության արտահայտությունները Վարուժանի ստեղծագործության մեջ: Կապիտալիստական քաղաքի, բանվորների կյանքի ու պայքարի պատկերումը և համակրանք կապիտալիզմի զոհերի նկատմամբ. «Դադար», «Մայիսի մեկը», «Մեռնող բանվորը», «Բանվորուհին», «Մեքենաները»:

Գուրզական բնաշխարհի, գուրզացու աշխատանքի պատկերումը Վարուժանի ստեղծագործության մեջ. «Հերկեր», «Ցորյանի ծովեր», «Հասուն արտ», «Հունձք կծողվեմ», «Աղորիք»:

Ազգային ազատագրական պայքարի մոտիվները Վարուժանի մոտ. նացիոնալիզմի ուժեղ ազդեցությունը. «Յեղին սիրու» մոլեռանդ ազգայնականության, ցեղամոլության արտահայտություն: Հին հեթանոսական աշխարհի ու հայ նախնիների-իշխանների փառաբանությունը Վարուժանի մի շարք յերկերում. «Հարձը» և այլն:

Վարուժանի վոճը, լեզուն, տաղաշափական արվեստը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Հարձը
2. Դադար
3. Մայիսի մեկը
4. Մեռնող բանվորը
5. Բանվորուհին
6. Հերկեր
7. Ցորյանի ծովեր
8. Հասուն արտ

14. Սիմվոլիզմ (1 ժամ): Ընդհանուր հասկացողություն սիմվոլիզմի մասին: Սիմվոլիզմի առաջացման ու զարգացման եպուստան և սոցիալական դասակարգային հիմքերը: Սիմվոլիզմի պոետիկան: Սիմվոլիզմը Յելուպայում և Ռուսաստանում: Ռուսական սիմվոլիզմի ականավոր ներկայացուցիչների՝ Վ. Բրյուսովի և Ա. Բոկի անցումը Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափո-

խության կողմը: Սիմվոլիզմը հայ գրականության մեջ (Մ. Մեծարենց, Վ. Տերյան):

15. Միսակ Մեծարենց—Մեծատուրյան (1886—1908) (2 ժամ): Մ. Մեծարենցի կենսագրությունը. Մեծարենցի ստեղծագործությունը. «Փոնչերը» առաջին բանաստեղծության տպագրումը 1903 թ. «Հանրագիտակ» հանդեսում: «Ծիածան» և «Նոր տաղեր» ժողովածուները 1907 թ.— Բանակոփև Մեծարենցի ստեղծագործությունների շուրջը. նրա պատասխանն իր քննադատներին («Քննադատությունը» հոդվածը):

Մեծարենցը վորպես արեվմտահայ սիմվոլիզմի ամենացայտում արտահայտիչներից մեկը.— միստիցիզմը և պանթեիզմը Մեծարենցի պոեզիայում: Մեծարենցի հոռեալեսության ու թախծի սոցիալական աղբյուրը. Համիդյան սովորական ծանր ոեմը և ոեակցիան:

Մ. Մեծարենցի արվեստը, վոճը, լեզուն, պատկերագործությունը և յերաժշտականությունը:

Մեծարենցի կրած գրական ազդեցությունները— Պոլ Վերլեն, Շարլ Բոդեր, նաև Պ. Դուրյան: Մեծարենցի և Վ. Տերյանի ստեղծագործության փոխհարաբերության հարցը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Զմռան պարզ գիշեք
2. Սիրերգ («Գիշերն անուշ ե...»)
3. Աքասիաներու շուրին տակ
4. Վերադարձի յերգ
5. Արեվին
6. Զրտուք
7. Բլլայի, ըլլայի («Իրիկուներ», «Հյուղը»)
8. Զուրեն դարձին
9. Այգերգ
10. Փետրոս Դուրյան
11. Հովը
12. Վարկյան
13. Գետագի յերազանք
14. Տապի նոպաներ
15. Անանոն

16. Վահան Տերյան (1885--1920) (5 ժամ), — Վ. Տերյանի կենագործությունը, Տերյանը, վորպես սիմվոլիզմի արտահայտիչ: Առաջին ժողովածում՝ «Մինչաղի անուրջներ»-ը (1908). այս ժողովածվում արտահայտված հիմնական տրամադրությունները. մենություն, մոռացում, անրշանք: 1905 թվի հեղափոխության ազգեցությունը Վահան Տերյանի ստեղծագործությունների վրա. «Յերանի նրանց, վոր մութ բանտերում», «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան»:

Վ. Տերյանի անհատապաշտությունն ու հոռետեսությունը, սիրո և մենության յերգեր. պատրանք և յերազանք, վորպես ոեակցիայի ժամանակաշրջանի ազդեցության արտացոլում («Մինչաղի անուրջներ»): Յերկրորդ ժողովածում — «Բանաստեղծություններ» (1912 թ.), հեղափոխական շարժման վերելքի անդրադարձումը. «Վերադարձ»:

Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը Վ. Տերյանի ստեղծագործությունների վրա: «Քեզ եմ յերգում», «Գաղել խնդության»: Տերյանի անցումը սոցիալիստական հեղափոխության կողմը:

Վ. Տերյանի պոեզիայի մեծ կուտուրան: Տերյանը վորպես լիրիկայի մեծ վարպետ: Ավետիք Խաչակյան և Տերյան: Տերյանի բանաստեղծությունների բարձր արվեստը, յերաժշտականությունը, խոր հուզականությունը, տաղաշափական բարձր կուպուրան, մշակված մաքոր լեզուն, կառուցվածքի կատարելությունը. Տերյանի լեզուն—նորություն հայ գրական լեզվի զարգացման մեջ:

Բանաստեղծական ձևերի մեծ բազմազանությունը (սոնետ, գաղել, ելեգիա և այլն): Վ. Տերյանի կրած ազդեցությունները ուսաւական և ֆրանսիական սիմվոլիստներից (Վ. Բրյուսով, Ա. Բլոկ և այլն):

Տերյանը թարգմանիլ. նրա բարձրարվեստ թարգմանությունները — Ռուսավելուց, Բողերից, Վ. Բրյուսովից և ուրիշներից:

Տերյանը լենինի մի քանի յերկերի («Պետություն և հեղափոխություն» և այլն) թարգմանիլ: Տերյանը գրականագետ և հրապարակախոս:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Տիրություն
2. Հրաշք աղջիկ
3. Լինելի չոքան սարերում հեռու
4. Աշնան յերգ
5. Կարուսել
6. Մինչաղ
7. 14 տող
8. Շշուկ և շրջում
9. Գարնանամուտ
10. Գարում
11. Առավոտ
12. Ինձ թաղեք, յերբ կարմիր վերջալուսն և մարում
13. Հրաժեշտի գաղել
14. Վերադարձ
15. Պետերբուրգ
16. Արեվածագ
17. Գարնան քաղաքում
18. Լուսաբացին նա բարձրացավ կախաղան
19. Վողզուն քեզ, տանջանք
20. Լուել են արդեն յերգերը հզոր
21. Քեզ եմ յերգում կարմիր
22. Գաղել խնդության
23. Յերանի նրանց, վոր մութ բանտերում:

IX ԴԱՍԱՐԱՆ

ՔԵՐԱՆԱՑԻ ՍՈՎՈՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՍՏԵՂԾԱ-
ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պետրոս Դուրյան
Տրառմշք
Լճակ
Իմ մահը
2. Հովի. Հովիաննիսյան
Յերկու ճանապարհ
Արտավազգ

Վահագնի ծնունդը
Արագն եկալ

3. Ալ. Ծատուրյան

Իմ ուխտը
Մի վհատիր
Բանվորուհու որորը
«Գրչի հանաքներ»-ից՝
Հեշտ ճամբա

4. Հովի. Թումանյան

Սասունցի Դամիթ (Կրճատ)
Փարվանա (Կրճատ)
Պարողիա
Վրաստանի համար
Հազարան բլբու (Հատված)

5. Ա. Խահիակյան

Անհուն վրեժի և ատելության
Աղատության զանդ
Ա՛մ, մեր սիրուը
Աբու-Լալա—Մահարի (Հատվածներ)

6. Վահան Տերյան

Վերադարձ
Արեվածագ
Մեր թշնամին բերում և տանկեր
Լուսաբացին նա բարձրացավ կախաղան
Քեզ եմ յերգում կարմիր
Գաղել խնդության

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՉԱ-
ՐԱԲՈՂ ՅԵՐԿԵՐԻ ՅԱՆԿ

1. Շիրվանզադե

Հրդեհ նավթագործարանում
Քառս
Պատվի համար
Նամուս
Մորգանի խնամին
Արսեն Դիմաքսյան

2. Հ. Թումանյան

Յերկեր

3. Մուրացան

Ընտիր յերկեր 1-ին, 2-րդ և 4-րդ հատորները

4. Վ. Փափազյան

Գյուղից
Տուրիստի հիշողություններ
Ընտիր յերկեր

5. Ա. Խահիակյան

Բանաստեղծություններ
Սամա Մհեր

6. Նար-Դոս

Ընտիր յերկեր— 1-ին և 2-րդ հատորները

7. Գր. Զոհրանպ

Խղճմտանքի ձայներ
Կյանքը ինչպես վոր և

8. Պ. Դուրյան— Տաղեր

9. Հ. Հավիաննիսյան— Բանաստեղծություններ

10. Ալ. Ծատուրյան— Բանաստեղծություններ

11. Յերվ. Ռոյան— Յերկեր

12. Ա. Պուշկին

Յերկերի յերկհատորյակը

13. Շշեղրին

Հեքիաթներ

14. Լ. Տոլստոյ

Կողակներ
Հաջի Մուրադ
Պատմվածքներ

15. Մ. Գորկի

Իմ համալսարանները

Մայրը

Հեքիաթներ

16. Ֆուրմանով

Զապահ
Խոռվություն

17. Զամբուլ

Բանաստեղծություններ

18. Շեխավիր
Լիր արքա
Մակրեթ
Վենետիկի վաճառականը
19. Գյորե
Ֆառւաթ 1 մ.
20. Ե. Զոլա
Ժերմինալ
21. Բալգակ
Հայր Գորիո
22. Ֆլոբեր
Տիկին Բովարի
23. Ռ. Ռուլան
Ժան Քրիստոֆ
24. Ա. Բարբյուս
Կրակը

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Պրոլետարական հեղափոխական գրականություն.— Պրոլետարական հեղափոխական գրականության սկզբնավորումը, վորպես ոռուսական ու միջազգային բանվորական շարժման արտացոլումը գրականության ասպարիզում:

Բոլշևիկյան մամուլի պայքարը բոլորուական ռեակցիոն գրականության դեմ, մարքսիստական քննադատությունը. Լենինի հոգվածները գրականության մասին: Լենին և Մաքսիմ Գորկի: Պրոլետարական գրական շարժման ծավալումը առաջին հեղափոխությունից հետո, ոռուսական իրականության մեջ Մ. Գորկու վլխավորությամբ:

Բոլշևիկյան մամուլը մեզանում («Կայձ», «Նոր խոսք», «Պայքար») և նրա խոշոր դերը պրոլետարական գրականության զերպացման գործում: Ընկ. ընկ. Ս. Սպանդարյանի և Ստ. Շահումյանի պայքարը նացիոնալիզմի դեմ նաև գրականության բնագավառում:

Պրոլետարական հեղափոխական գրականության սկզբնավորումը Հ. Հակոբյանի գլխավորությամբ. Արագու, Մադաթ Պետրոսյանի, Անուշավան Վարդանյանի, Կամարու և Մելիք Մելիք-

յանի (Դեղուշկայի) ստեղծագործությունները ոռու. առաջին հեղափոխության և մինչ պատերազմյան շրջանում. «Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալբոմ» ժողովածուները Հ. Հակոբյանի նախաձեռնությամբ, ու խմբագրությամբ (1914 թ.):

Թարգմանություններ Մ. Գորկուց. Մ. Գորկու ազդեցությունը հայ գրականության վրա մասնավորապես 900-ական թվականներին:

Հասկացողություն հեղափոխական ոռմանտիզմի և սոցիալիստական ռեալիզմի մասին Մ. Գորկու և Հ. Հակոբյանի ստեղծագործությունների հիման վրա:

Հ. Հակոբ Հակոբյան (1866—1937) (8 ժամ): Հակոբ Հակոբյանի կենսագրությունը:

Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունների առաջին շրջանի (90-ական թվականներ) աշխատավորական մոտիվները՝ «Նամուս ու դեյրաթ»:

Խուսական և Անդրկովկասյան պրոլետարական հեղափոխական շարժման ազդեցության տակ Հ. Հակոբյանի հեղափոխական աշխարհայցքի կազմակերպումը և ստեղծագործական եվլոյուցիան առաջին ժողովածվից (1899 թ.) հետո: Թարգմանություններ Արա Նեգրուց (1903 թ.) և «Աշխատանքի յերգեր» (1906 թ.) ու «Հեղափոխական յերգեր» (1907 թ.) ժողովածուները:

Հակոբյանը վորպես հեղափոխական պրոլետարիատի առաջին բանաստեղծը հայ գրականության մեջ: 1905 թվի հեղափոխության անմիջական արտացոլումը Հ. Հակոբյանի ստեղծագործություններում: Պրոլետարիատի հեղափոխական պայքարը բոլորուագիշի և ցարիզմի դեմ, վորպես այդ շրջանի բանաստեղծությունների լեյտամուտիվը. «Մեկ ել, մեկ ել», «Հեղափոխություն»: Ռեակցիայի տարիներին Հ. Հակոբյանի պոեզիայի մեջ հնչող խոր հավատը դեպի գալիք պրոլետարական հեղափոխության հալթանակը: Հեղափոխական ոռմանտիզմը Հակոբյանի ստեղծագործության մեջ: Արա կապակցությամբ նրա հեղափոխական աղիկության և մարտի կոչող բանաստեղծությունները, վորպես Լենինյան-Ստալինյան կուսակցության մղած պայքարի արտացոլումը՝ մենցեկիզմի, տրոցկիզմի և լիկվիդատորության դեմ («Մաքառման ժամին», «Մեռան՝ չկորան», «Նահատակները»): Հակոբյանի մինչհոկտեմբերյան շրջանի պոեմները. «Նոր առա-

72

73

վոտ» (1908), «Կարմիր ալիքներ» (1911) և «Հավասարություն» (1916—1917): Բանվոր դասակարգի կյանքի ու պայքարի հարազատ արտացոլումը Հակոբյանի առաջին յերկու պոեմներում և Հեղափոխական յերազանքը սոցիալիզմի-կոմունիզմի մասին՝ «Հավասարություն» պոեմում:

Հ. Հակոբյանի պայքարը նացիոնալիզմի և սպեցիֆիզմի դեմ. «Ազգայիններին»:

Հ. Հակոբյանի ստեղծագործությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Հեղափոխությունից հետո.— Հակոբյանը— խորհրդային հայկական պոեզիայի սկզբնավորող: Հակոբ Հակոբյանի ստեղծագործության նոր մոտիվները, սոցիալիստական շինարարություն. «Բոլշևիկ և Շիրկանալլ», «Աղլիսովստրոյ» պոեմները:

Հ. Հակոբյանը վորպես հեղափոխական քաղաքական լիրիկայի հիմնադիրն ու վարպետը մեր գրականության պատմության մեջ: Նրա ստեղծագործությունների հեղափոխական թափն ու մարտունակությունը, վորպես պրոլետարական հեղափոխության տարբերքի հարազատ ունալիստական արտահայտություն. «Մե՛կ ել, մե՛կ ել», «Հեղափոխություն»: Հակոբյանի աշխատանքային յերգերի բարձր արժեքը, վորպես աշխատանքի նկարագրության լավագույն նմուշներ: Հակահեղափոխական ազգայնական-բուրժուական քննադատության թշնամական վերաբերմունքը դեպի Հակոբյանի պոեզիան: Ստեփան Շահումյանի և Սպանդարյանի բարձր գնահատականները Հ. Հակոբյանի ստեղծագործությունների մասին: Ռոմեն Ռոլանը և Լունաշարսկին Հ. Հակոբյանի մասին: Հ. Հակոբյանը վորպես թարգմանական գրականության ականավոր ներկայացուցիչ: Հ. Հակոբյանի՝ Աղա Նեղոսուց կատարած թարգմանությունների բարձր արժեքը: Հակոբ Հակոբյանի կրած ազդեցությունը Մ. Գորկուց, Աղա Նեղոսուց և Եմիլ Վերհարնից:

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

1. Նամուս ու դեյրաթ
2. Հեղափոխություն
3. ՄԵ՛Կ ել, մե՛կ ել
4. Մեռան, շկորան
5. Մաքառման ժամին
6. Նահատակները
7. Լոեց սոխակը
8. Ազգայիններին

9. Քաղաքը
10. Աշխատանքի յերգը
11. Նոր առավոտ
12. Հավասարություն

13. Աստվածները խոսեցին
 14. Բոլշևիկ և Շիրկանալլ
 15. Վորխովստրոյ
3. Շուշանիկ Կուրդինյան (1876—1927) (4 ժամ): Շ. Կուրդինյանի կենսագրությունը: Կուրդինյանի առաջին շրջանի (մինչև շեղ 1905 թ.) ստեղծագործությունը, վորպես գյուղի և քաղաքի աշխատավոր խավերի ծանր վիճակի արտահայտություն:

- Կուրդինյանի բուռն ստեղծագործական վերելքը 1905—1907 թվերին. «Արշալուլսի զողանջներ» ժողովածուն (1907 թ.): Բանթիկայի պոեզիայի սկզբնավորող: Հակոբ Հակոբյանի ստեղծագործության նոր մոտիվները, սոցիալիստական շինարարություն. «Բոլշևիկ և Շիրկանալլ», «Աղլիսովստրոյ» պոեմները:

- Կանանց ստրկական վիճակի արտացոլումը և ազատագրման Կուրդինյանի պոեզիայում. «Գեղջկուհու մորմոքը», «Արծիկեան Կուրդինյանի պոեզիայում. «Գեղջկուհու մորմոքը», «Արծիկեան Կուրդինյանի պոեզիայում. «Արծիկեան Կուրդինյանի ստեղծագործության մեջ. «Այստեղ գնացեք», «Գութանի յերգը», «Գյուղածության մեջ. «Այստեղ գնացեք», «Գութանի յերգը» (նվեր Շիրակի գեղօպկին): Ռեակցիայի ազդեցության տակ Շ. Կուրդինյանի ստեղծագործության հոգետեսական մոտիվները, իսկ պատերազմի տարիներին՝ նացիոնալիստական մտայնությունից կրած ազդեցությունը: Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ, հեղափոխության Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ, հեղափոխության մեջ: Շ. Կուրդինյանի գործերության խորը հուզականությունը, ձեռքի բազմագանությունը, լեզվի ճոխությունը ու պատկերավորությունը: Կուրդինյանի բանաստեղծությունների պարզությունն ու ժողովողայնությունը:

- Շ. Կուրդինյանի կրած ազդեցությունը Մ. Գորկուց, Հ. Հակոբյանից և Աղա Նեղոսուց: Հ. Հակոբյանի և Շ. Կուրդինյանի պոեզիայի տարբերություններն ու նմանությունները: Առաջինը վորպես հետևողական հեղափոխական պոետ, յերկրորդի տատա-

նումներն ու անհետեվողականությունը. պայքարի և ըմբռստացման յերգերի հետ միասին բարեկործության քարոզ:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

- | | |
|-------------------------|------------------------|
| 1. Ազատության դողանջներ | 8. Յես ըմբռստացա |
| 2. Յետ տար քո խալը | 9. Գովանի յերգը |
| 3. Հանգըրեք ջահերը | 10. Ծաղիկ ծախող աղջիկը |
| 4. Բանվորները | 11. Բանվորուհին |
| 5. Այստեղ գնացեք | 12. Սիրելուս |
| 6. Գեղջկուհու մորմոքը | 13. Աստղակիր |
| 7. Արծվի սերը | |

4. Խորեգային գրականության զարգացման հիմնական ետապները (2 ժամ դասախոսություն): Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության հաղթանակը, վորպես նոր, սոցիալիստական կուլտուրայի, արվեստի ու գրականության նախադրյալ:

Վ. Ի. Լենինի ուսմունքը պրոլետարական կուլտուրայի ու գրականության մասին, վորպես «համապրոլետարական գործի մի մասը» (Վ. Ի. Լենին, «Կուսակցական կազմակերպությունը և կուսակցական գրականությունը» հատոր 8-րդ, էջ 386—390, 3-րդ հրատ.), կուլտուրական ժառանգության քննադատական յուրացման մասին:

Խիստ դասակարգային դիֆերենցիացիան գրական ինտելիգենցիայի միջավայրում 1917 թ. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո (վոմանց գնալը դեպի հակահեղափոխություն ու վտարանդիմություն, իսկ մյուսների կողմից հեղափոխության ընդունումը— որինակ՝ Ա. Բլոկ, Վ. Բրյուսով, Ա. Տոլստոյ, Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Դ. Գեմիրճյան, Ս. Զորյան, Պավլո Տիշինա և այլն):

Մ. Գորկու— Խորհրդային գրականության հիմնադրի— դերը գրական կադրերի համախմբման ու դաստիարակման գործում:

Վ. Մայակովսկու պայքարը հեղափոխության ագիտացիոն արվեստի համար քաղաքացիական պատերազմի շրջանում:

Պրոլետարական արձակագրության (պրօզա) աճումը վերականգնման շրջանում: Քաղաքացիական պատերազմի և արդյունաբերության վերականգնման համար մղվող պայքարի թեմա-

հերը Դ. Ֆովոմանովի, Ա. Սերաֆիմովիչի, Ա. Ֆադեյևի ստեղծագործության մեջ:

Դյուղացիության և ինտելիգենցիայի, հեղափոխության մեջ նրանց ունեցած դերի մասին թեմաները Վ. Իվանովի, Ա. Զորյանի, Արագու, Դեմիրճյանի յերկերում:

Խորհրդային պոեզիայի զարգացումը— Վ. Մայակովսկի, Ն. Ասելյան, Հ. Հակոբյան, Յանկա Կուպալա, Մաշավիլի, Վուրդում և այլն:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի 1925 թ. բանաձևը «Կուսակցության քաղաքականության մասին գեղարվեստական գրականության բնագավառում»:

Անկուսակցական խորհրդային գրողների ճնշող մեծամասնության շրջադարձը դեպի պրոլետարիատը և կոմոմիստական կուսակցությունը՝ ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության վճռական հաջողությունների հետևանքով:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի վորոշումը՝ գրական գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին և նրա հսկայական նշանակությունը խորհրդային գրականության հետագա բուռն աճման համար:

Խորհրդային գրողների առաջին Համամիութենական համագումարը: Ա. Ա. Ժդանովի և Մ. Գորկու ճառերը համագումար: Համագումարի միջազգային քաղաքական և կուլտուրական նշանակությունը:

Խորհրդային գրականության անդադար աճը, վորը վճռականորեն դուստ և զպրոտում իր շրջանից գրականության մեջ խցկրված ժողովրդի թշնամիներին:

Մ. Գորկու հսկայական նշանակությունը սոցիալիստական ուսալիզմի արվեստի ստեղծման գործում:

Խորհրդային գրականության թեմաների և պրոլետարիատի բազմազանությունը: Գրականություն պատերազմի և խորհրդային հայրենիքի պաշտպանության թեմայով (Ա. Ն. Տոլստոյ՝ «Հաց», Պ. Պավլենկո՝ «Արևելքում» և այլն): Գրականություն՝ սոցիալիստական շինարարության վերաբերյալ (Մ. Զորյան, Ա. Բագի, Դեմիրճյան): Գրականություն՝ հեղափոխական գյուղի և կոլտնտեսային շինարարության մասին (Մ. Շոլոխով, Ֆ. Պանֆերով, Ն. Զարյան): Խորհրդային պատմական վեպ (Ա. Տոլս-

առով): Սոցիալիստական լիրիկայի աճը (Ասելել, Տիխոնով, Գ. Տաբիձե, Կուպալա, Ն. Զարյան, Գ. Սարյան և ուրիշներ): Խորհրդային յերգը (Վ. Լեբեդեվ-Կումաշ): Ժողովրդական հերոսի պատկերի կերտումը (Ն. Ռոմեռովսկի):

Պայքար սոցիալիստական ժողովրդական արվեստի համար և խորհրդային գրականության զարգացման խնդիրները: Բնկ. Ստալինը խորհրդային գրողի մասին. «Դրողը — մարդկային հոգու հարտարապետ»: Սոցիալիստական ռեալիզմը և հեղափոխական ոռմանտիկան, վորպես խորհրդային գրականության ստեղծագործական ուղղություն:

Գրականության նշանակության բարձրացումը անդասակարգ սոցիալիստական հասարակարգի կառուցման ավարտման և աստիճանաբար սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում:

Դրողի դերը յերկրի հայարակական կյանքում: Գերագույն խորհրդի գրող-դեպուտատներ: Խորհրդային գրողների պարզեցումը շքանշաններով:

5. Խորհրդային հայկական գրականությունը: Ընդհանուր ակնարկ խորհրդային հայկական գրականության զարգացման հիմնական մոմենտների մասին (2 ժամ):

Հայաստանի խորհրդայնացումը և հայ ժողովրդի ազգային վերածնունդը՝ կենինի-Ստալինի կուսակցության ազգային քաղաքականության շնորհիվ:

Զեռվ ազգային, բովանդակությամբ սոցիալիստական հայկական կուլտուրայի ու արվեստի զարգացումը:

Խորհրդային հայկական գրականությունն ընդհանուր միութենական բազմալեզու խորհրդային գրականության անբաժանելի որդանական մասը:

Խորհրդային հայկական գրականության սկզբնավորումը և զարգացման առաջին շրջանը. «Դարբնոց» (Հ. Հակոբյանի խըմ-բագրությամբ. 1921—1923 թ. թ.) և «Մուրճ» (Ազ. Վշտունու խմբագրությամբ. 1922—1923 թ. թ.) ամսագրերը. նրանց դերը պրոետարական խորհրդային գրականության ստեղծման ու զարգացման համար մղված պայքարում:

Սոցիալիստական շինարարության պրոցեսների, ինդուստրացման ու կոլեկտիվացման, նոր, սոցիալիստական մարդու,

մարդկային նոր հարաբերությունների ու կենցաղի ձևավորման արտացոլումը գրականության մեջ:

Խորհրդային արձակի զարգացումը. Արագու, Ստ. Զորյանի, Գ. Դեմիրճյանի, Մ. Մանվելյանի, Միրասի, Հր. Քոչարի, Թր. Թամիկացյանի և մյուսների յերկերը:

Խորհրդային պոեզիայի զարգացումը. Ն. Զարյանի, Գ. Սարյանի, Ազ. Վշտունու, Մ. Վարոնցու, Ս. Վահոնու, Հ. Շիրազի, Սարմենի, Աղավնու և մյուսների ստեղծագործությունները:

Գրամատուրգիայի զարգացումը. Գ. Դեմիրճյանի, Վ. Վաղարշապետյանի, Միքայելյանի, Լ. Միքայելյանի և մյուսների դրամատիկական գործերը:

Խորհրդային հայկական գրականության հետագա զարգացումը սոցիալիստական շինարարության ծավալման ու սոցիալիզմի հաղթանակի պայմաններում: Ժողովրդի թշնամիների մերկացումը և լիկվիդացիան գրականության բնագավառում:

Ստալինյան Սահմանադրությունը և գրական ստեղծագործության հետագա բուռն զարգացումը սոցիալիստական ռեալիզմի ուղղություն: Գրական նոր կադրերի աճումը արձակի ասպարիդում. Հր. Քոչար («Ուսեն Վասպուղի ճանապարհորդությունը»), Թր. Թամիկացյան («Վիկտորիա», «Կյանքի արշալույսը»); Պոեզիացում—Սարմեն, Հով. Շիրազ, Գ. Բորյան, Աղավնի և մյուսները; Գրամատուրգիայում—Լ. Միքայելյան («Գոշ»), Ա. Արաքսյան («Եմմանվել»):

Խորհրդային Միության ժողովուրդների ամենաառաջավոր գրողների թվում, նաև հայ խորհրդային գրողների (Նայերի Զարյան, Դեր. Դեմիրճյան, Արագի, Ստ. Զորյան, Գեղ. Սարյան, Հովհ. Շիրազ, Գուրգեն Բորյան) պարզեցումը Միության շքանշաններով:

6. Արագի (Ծնվ. 1878 թ.) (5 ժամ): Արագու կենսագրությունը. Արագին շքանշանակիր գրող:

Արագու մինչհօկտեմբերյան շրջանի ստեղծագործությունը, բոլոր սոցիալիստական անհավասարության, բռնության և իմակերիալիստական պատերազմի դեմ: Երա արձակ բանաստեղծությունները և պատմվածքները («Արեր», «Կիսատ տունը», «Վանքառները», «Կարմիր համբուլը»): Հեղափոխական բանվորներական շինարարության պայքարում:

րի և ընդհատակի նկարագրումը Արագու յերկերում («Կարմիր հարսնացուն», «Ողակում»):

Արագու գրական գործունեյությունը խորհրդացին շրջանում.
Արագու թեմատիկա. կոլտնտեսական շինարարությունն ու նոր կեն-
ցաղի հաջող պատկերումը Արագու յերկերում («Հազար գըլ-
խանին», «Մոլախոտը», «Դավադրություն»); Սոցմրցման պատ-
կերումը և վերափոխվող ինտելիգենտի տիպը «Զրվեժի ցոլքում»
վիպակի մեջ. Թարյանի տիպի վերլուծումը: Իրականության ռեա-
լիստական պատկերումը Արագու յերկերում:

լիստական պատկերումը Արագու յարկուն
Յերևութիւնների արտաքին նկարագրության ժլատությունը
Արագու գրվածքներում— դիմունների և հոգեբանական դրու-
թյունների պատկերման գերակշռությունը; Նկարագրվող յերե-
վութիւնների սոցիալական-քաղաքական կողմի ընդգծումը; Արագին
մանկական գրող:

Արագու լեզվի պարզությունը:

U 3 n h β b P

Արևը, Կիսատ տուն, Վանդակներում, Զրվեծի ցոլքում, Կարմիր հարսնացուն, Դավագրություն, Ընկեր Մուկուչը:

7. Գ. Գեմիրնյան (Ծնվ. 1877 թ.) (5 տաս). — Հասրավա-
կենսագրությունը:

Դեմիրճյանը — շքանշանակիր գրող: Իրավաս գործական պատմությունը՝ մինչհոկտեմբերյան շրջանում, բանաստեղծություններ, պատմվածքներ, դրամա:

Աշխատավորական շերտերի ձևված վիճակի սկարագրը՝ և Աշխատավորական պատերազմի դեմ ուղղված բողոքը Դեմիրճյանի մինչհօկաներից աշխատական պատմվածքներում («Ավելորդը», «Ժայռը», «Խանովթպանը»):

Դեմիքյանը վորպիս դրամատուրգ։ Դեմիքյանը՝ սովորա-
բերյան շրջանի դրամատիկական գործերը, «Քաջ Նազար» կո-
միքիան և նոր գեղարվեստական արժանիքները։

և բարեկանությունը պատկերումը Դեմիրճյանի պատմը՝
Խորհրդային մարդկանց պատկերումը («Կայարանի Ակովիլ», «Սաթոն», «Սաբեթը»): Այդ
վածքներում («Կայարանի Ակովիլ», «Սաթոն», «Սաբեթը»): Այդ
պատմվածքներում ընդգծված հակառակությունը—հերոսների ան-
ուսակե և նեռիակե միջև:

ցյալի և սերպայի սրչաւ Խորհրդականի գյուղը Դեմիքը յանի յերկերում, աշխատավոր ների կանքի վերափոխման պատկերումը:

Սոցիալիստական գյուղի համար մղվող պայքարի արտացոլումը Դիմիրճյանի «Խաշիդ» վիպակում։ Ծաշիդի և թշնամիների փոխհարաբերության ձիւտ պատկերումը։ Ծաշիդի կերպարի վերլուծությունը։

Դաստիարակության համար պատճենահանությունը և արդիությունը
կամ գործառնությունը կամ աշխատանքը կամ աշխատանքը կամ աշխատանքը

u 3 n h p b f

Ուաշինգտոն, Ավելորդը, Խանովթանը, Քաջ Նազարյանի Ակոփը:

8. Ստեփան Զորյան (ծնվ. 1890 թ.) (5 ժամ). — Հորիշտի
կանունու դուռը պահպանությունը՝ զբանականակիր գրող:

կենսագրությունը: Զորյամը — Հքանչական միջնադարի մինչեղափոխական Զորյանի գրական գործունելության միջնադարի հրանքական սեփականատեր զյուղացու հոգեբանության և շրջանը. մանր սեփականատեր զյուղացու գյուղացու հոգեբանության և գյուղի շերտավորման նկարագիրը Ստեփան Զորյանի պատմը՝ գյուղի շերտավորման նկարագիրը Ստեփան «Յանկապատ» ժողովածունեկամքածքում («Տիսուր մարդիկ», «Յանկապատ» ժողովածունեկամքածքում): Զորյանը — հեղափոխությունից հետո: Իմպերիալիստական պատերազմի արհավիրքների նկարագիրը («Պատերազմ», «Ծովապատերազմ»): Իմպերիալիստական պատերազմի մասնակից զինվորների յում»): Իմպերիալիստական պատերազմի մասնակից պատմությունը: («Հեղաշրջացման պատկերը «Դրհորի մոտ» պատմվածքում: («Հեղաշրջացման նախագահը» և «Գրադարանի աղջիկը»). — Հեղկոմի նախագահի հոգեբանության վերլուծումը:

Բոլշևիկ կնոջ կերպարը «Գրադարանի աղջրվը» կմպւս
վիկտորիան— բոլշևիկուհու առաջին կերպարը հայ խորհ. ար-
ձակ պականության մեջ:

Մուտքագրության ըմբռնումը «Գրադարանի աղջիկը» վիպակում
անհրաժեշտության ըմբռնումը «Ապիտակ» պատկերումը. «Ապիտակ

Սոցիալիստական շինարարության պատճեռությունը՝ հինգնաքաղաք»-ը։ Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն» ինքնականացնելու վեպը, նրա «գեղարվեստական բարձր արժեքը՝ կենսագրական վեպը, նրա «գեղարվեստական բարձր արժեքը՝ անցյալը ճանաչելու տեսակետից», Ստեփան Զորյանի մասնակցությունը խորհրդային մանկական գրականության զարգացմանը:

Ստեփան Զորյանի պատմվածքների ու վիպակսրբ գույն կառուցվածքը, պատմելու հետաքրքիր ձևը (հաճախ առաջին դեմքով), զրվածքի մասերի համաշխատությունը, հերոսների Հոգեբանության ու ալիստական պատկերումը, բնության գնդեցիկ

նկարագրություններ, Ստ. Զորյանը վարպետ արձակագիր: Ստ. Զորյանը — թարգմանիչ. Լ. Տռլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի թարգմանությունը:

Ն Յ Ռ Ի Թ Ե Բ

Պատերազմ. Գրադարանի աղջիկը. Հեղկոմի նախագահը:

9. Ազատ Վշտունի (ծնվ. 1894 թ.) (4 ժամ). — Աղ. Վշտունու կենսագրությունը: Գրական գործունեյության սկիզբը նախախորհրդային շրջանում, անհատապաշտական լիրիկա: Վշտունու ստեղծագործությունը խորհրդային շրջանում, Անդրկովվկասյան ժողովուրդների յեղբայրության և սոցիալիստական վերածնության լիրիկա. «Աղբեջան» և այլ բանաստեղծություններ: Յեղուպական իմպերիալիզմի ճնշման տակ հեծող ժողովուրդների կյանքն ու հեղափոխական զարթոնքը Վշտունու պոեզիայում. Հեղափոխական ոռմանտիկա. «Հուզանք ու զանգ», «Նեռիենտալիա» («Նոր արելվելք») ժողովածուները, «Մամ-Մոյ» պոեմը: Քաղաքացիական կոփվները, խորհրդային հայրենիքի կյանքն ու պաշտպանությունը Վշտունու պոեզիայում. «Բանաստեղծություններ» (1934 թ.): Լենինը Վշտունու ստեղծագործության մեջ. «Լենին» բանաստեղծությունը: Վշտունու ստեղծագործության թերությունները — վորոշ հանգամոլություն և սխեմատիզմի տարրեր: Վշտունու պոեզիայի լեզուն. գունագեղություն, պատկերավորություն, յերաժշտականություն:

Ն Յ Ռ Ի Թ Ե Բ

Մամ-Մոյ
Աղբեջան
Լենին

10. Նաիրի Զարյան (ծնվ. 1900 թ.) (5 ժամ). — Ն. Զարյանի կենսագրությունը. Զարյանը — կոկնակի շքանշանակիր բանաստեղծ:

Զարյանի խորհրդային շրջանի առաջին տարիների ստեղծագործությունը. «Զրանցքի կապույտ յերկրություն» ժողովածուն (1925 թ.): Այդ շրջանի պոեմները («Հրանցուց», «Նոյեմբերյան որերին», «Տաթեղի ժայռից», «Տրիբունը», «Ապստամբություն»), «Պատմում

և կարմիր դիրեկտորը»). Հեղափոխական ոռմանտիկան, վորպես գերիշխող գիծ առաջին շրջանի ստեղծագործություններում:

Խորհրդային կարգերի համար մղված պայքարի պատկերումը և Հեղափոխության մեջ բոլշևիկ մարտիկի կերպարներն այդ շրջանի յերկերում:

Ն. Զարյանի ստեղծագործությունը յերկրի վերակառուցման Ստալինյան Հնգամյակների շրջանում: Խորհրդային գյուղի սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարի պատկերումը Զարյանի պոեզիայում և արձակում. «Մուշանի քարափը» և «Սաքո Միկինյան» պոեմները. գյուղում սրված դասակարգային պայքարի, կոլտնտեսական շարժման դժվարություններն ու հաղթանակը, նախկին մենատնտես գյուղացու հոգեբանական-իդեալական վերափոխման ռեալիստական պատկերումն այդ պոեմներում ինչպես և «Հացավան» վեպում:

Զարյանի խորհրդական-քաղաքական պոեզիան. «Յերկու հանճարեղ գյուղ», «Ֆիրդուսի»:

Ժողովուրդների մեծ առաջնորդ ընկ. Ստալինը Ն. Զարյանի պոեզիայում. «Կոլումբներ», «Դյուցազնագիրք» պոեմները և «Ստալին» բանաստեղծությունը:

Ն. Զարյանի ստեղծագործության բազմաժանրությունը. լիրիկական վոտանավորներ, պոեմներ, վեպ և այլն:

Զարյանի լեզուն, ինքնատիպ վոճը, նրա ստեղծագործությունների ուժեղ պաֆուր, պատկերավորությունը, մարտականությունը, տաղաշափության բազմազանությունը:

Ն Յ Ռ Ի Թ Ե Բ

Ստալին, Լենին (մի գյուխ «Դյուցազնագիրք» պոեմից), Ստալին (այս պոեմի նախերգանքը), Ֆիրդուսի: Յերկու հանճարեղ գյուղ:

11. Գեղամ Սարյան (ծնվ. 1902 թ.) (3 ժամ). — Գ. Սարյանի կենսագրությունը: Սարյանը շքանշանակիր բանաստեղծ: Սարյանի լիրիկան. խորհրդային քաղաքացու կյանքի ու աշխատանքի գովերգը, նրա հուզագիսարձի գեղարվեստական նկարագիրը Սարյանի բանաստեղծություններում («Յերկաթե վոտնաձայններ»): Սոցիալիստական շինարարության գովերգը Սարյանի «Քաղաքը» և «Բաղադրային Հայաստանի մասին» բանաստեղծություններում:

Քաղաքացիական կոհվների պատկերումը Սարյանի «Յերեք յերգ» պոեմում, «Տարեղարձի յերգը» և այլ բանաստեղծություններում: Կոլեկտիվիստական հոգեբանության արտահայտությունները Սարյանի բանաստեղծություններում («Լուցկին», «Խորհուրդ»): Սարյանն իրեւ արթնացող Արևելքի յերգիւ («Միջուրեք»). Գեղարվական-կապիտալիստական արևելքի կող ստրկական անգատ կյանքի և նրա ազատագրման շուրջը հյուսված արևելյան լեգենդները («Իրանի», «Գյուղնարա»):

Իսպանիայի հեղափոխական պայքարի արտացոլումը Սարյանի «Իսպանական» պոեմներում:

Սարյանի լեզվի պարզությունն ու պատկերավորությունը, լիրիկական անմիջականությունը: Գ. Սարյանը Հ. Հայնելի և Տ. Շեշենկոյի թարգմանիչ:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Քաղաքը	Պահակը
Տարեղարձի յերգ	Բալլագի խորհրդ. Հայաստանի մասին
Դամբարանը	Յերեք յերգ
Նախատինքը	Իրանի

12. Սիրաս (ծնվ. 1902 թ.) (3 ժամ).— Սիրասի կենսագրությունը: Իմպերիալիստական պատերազմի զոհերի պատկերումը Սիրասի «Հարցրեք նրանց» վեպում: Հայաստանի քաղաքացիական կոհվների ու սոցիալիստական շինարարության պատկերումը «Զգրված որենք» վեպում:

«Զգրված որենք»-ի տիպերի վերլուծումը:

Քաղենության և ժողովրդի թշնամիների դիմակազերծումը «Զգրված որենք»-ում: Ժողովրդական հերիաթների հաջող մշակումը Սիրասի կողմից («Մամեն ու Աշեն»):

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Զգրված որենք
Մամեն ու Աշեն
Հարցրեք նրանց

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՃՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

ԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. ՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնդկանուր ակնարկ ուսուական խորհրդային գրականության մասին, ուսուական խորհրդային գրականությունն ընդհանուր Միութինական գրականության առաջավոր ղեկավար ջոկատը:

Ռուսական խորհրդային գրականության համաշխարհային նշանակությունը: Նրա ամենազավոր ներկայացուցիչները. Ա. Մ. Գորկի, Վ. Մայակովսկի, Ֆուրմանով, Ֆադեյեվ, Մ. Շոլոխով, Ա. Տոլստոյ, Ն. Ասենեվ, Եդ. Բագրիցիկի, Սերաֆիմովիչ, Վ. Իվանով, Վալ. Կատայեվ, Նովիկով-Պրիբոյ, Նիկ. Ռատրովսկի:

1. Ա. Մ. Գորկի (1868—1936) (7 ժամ):

Լենինը Մ. Գորկու մասին:

Վ. Մոլոտովի ճառը — «Ա. Մ. Գորկու հիշատակին»:

Մ. Գորկին — պրոլետարական արվեստի խոշորագույն ներկայացուցիչ: Մ. Գորկու նշանակությունը, վորպես սոցիալիստական ռեալիզմի գրականության հիմնադիր և կլասիկ:

Մ. Գորկին վորպես անցյալի ամբողջ կլասիկ գրականության լավագույն տրադիցիաների շարունակող: Իմպերիալիզմի դարաշրջանի հիմնական հասարակական հակասությունների արտացոլումը Գորկու յերկերում: Փրոլետարիատի հեղափոխական պայքարի և հաղթանակի անհրաժեշտության հաստատումը Գորկու կողմից:

Մեծ գրող — հեղափոխականի կյանքի և ստեղծագործական ուղին:

Գորկու մանկական տարիները: Աշխատանքային կյանքը: Կազմանի շրջանը: Գորկու մերձեցումը հեղափոխական ուսանողական խմբակների հետ: Ռուսաստանում թափառաշրջելու տարիները: Գրական գործունեյության առաջին տարիները: Գորկու հերուստական աշխատանքը: Հալածանքները ցարական կառավարության կողմից: Վարպանդիության տարիները: Խնտենսիվ գրական աշխատանքն այդ տարիներին: Գորկու մտերմությունը Վ. Ի. Լենինի հետ: Վերադարձը Ռուսաստան: «Լետոնիս» ժուռալի հրատարակությունը: Յերկրորդ անգամ արտասահման մեկնելը: Գրական գործունեյությունն այդ տարիներին: Վերջնականա-

պես ԽՍՀՄ գալը: Իր ժողովրդին, կոմունիստական կուսակցության գործին, Լենինի-Ստալինի գործին հավատարիմ ու նվիրված՝ Գորկու գրական, հրապարակախոսական և հասարակական գործունելությունը ԽՍՀՄ-ում:

Մ. Գորկու ստեղծագործությունը մինչև Մեծ Հոկտեմբերը:

Հասկացողություն հեղափոխական ոռմանտիզմի մասին: Վաղ հասակի Գորկու հեղափոխական ոռմանտիզմը: Մ. Գորկու այդ շրջանի ստեղծագործական ժանրերը, լեզենդներ, հեքիաթներ, յերգեր: «Պառավ իդերգիլը»: Կոչ դեպի սխրագործություն (ոճակ) հանուն մարդկության ազատագրման (Դանկո): Կոչ դեպի հեղափոխական պայքար «Յերգ Բազեի մասին», «Յերգ Մրրկահավի մասին» յերկերում: Սյուժեի պայմանականությունը, պատեթիկ լեզու, նրա հագեցվածությունը փոխաբերություններով, բուռն կերպով ազատության ձգողող մարդուն ոռմանտիկ դարձնելը—վորպես Մաքսիմ Գորկու ստեղծագործության բնորոշ գծեր այդ շրջանում:

Գորկու ստեղծագործության ռեալիստական գծերի աճը «Կոնվալով» պատմվածքում:

Հասկացողություն սոցիալիստական ռեալիզմի մասին:

Մ. Գորկու անցումը մեծ վիպագրական ձևին, պատմվածքից դեպի պիեսան և վեպը՝ 1905 թ. հեղափոխության նախապատրաստման և զարգացման շրջանում:

«Հատակում» պիեսան: Թափառական լուկայի կեղծ միհիթարության և համբերության քարոզի մերկացումն այդ պիեսայում:

Բանվոր-հեղափոխականի բնավորության կերտումը Մ. Գորկու ստեղծագործության մեջ. «Մայր» վեպը, վորապես՝ ցարկամի ու կապիտալիզմի դեմ մղված պրոլետարական ու համաժողովրդական պայքարի եպուակա: Հեղափոխական պայքարի կրակում նոր մարդու ծննդի պատկերումը: Պրոլետարական հեղափոխականների տիպերը վեպում: Վեպի հասարակական-պատմական նշանակությունը, նրա գեղարվեստական արժեքը: Վ. Ի. Լենինը «Մայր» վեպի մասին:

Մ. Գորկու ստեղծագործությունը ռեակցիայի շրջանում քաղքենական միջավայրի բթամտության, անշարժության, մերկացումը («Գործօք Օքյոօք»):

Վ. Ի. Լենինի նամակագրությունը Մ. Գորկու հետ ունեակցիայի տարիներին և հետագայում:

Մ. Գորկու հակապատերազմական գործունելությունը իմպերիալիստական պատերազմի շրջանում: «Լետոնիս» ժողովնալի հրատարակումը:

Մ. Գորկու ստեղծագործությունը Հոկտեմբերից հետո:

Իրականության բազմակողմանի ընդգրկումը՝ հեղափոխական ըմբռնողությամբ: Կապիտալիզմի խորն ու բազմակողմանի մերկացումը. «Արտամոնովների գործը», «Կիմ Սամգինի կյանքը», «Յեղոր Բովիչել և ուրիշները»:

«Արտամոնովների գործը» վեպը. կապիտալիստական տնտեսության անխուսափելի սնանկացման պատկերումն այս վեպում: Հիմնական դեմքերը. Իլիա Արտամոնովի բնութագրումը: Իլիա Արտամոնովը՝ բուրժուազիայի տիպիկական ներկայացուցիչ, վորով գալիս և փոխարինելու աղնվականության: Արտամոնովյան ընտանիքի միջին և կրտսեր սերնդի այլասերման ցուցադրումը՝ Իլիայի ժառանգների՝ Պյոտրի, նիկիտի, Ալեքսեյի, Յակովի, Միրոնի կերպարներով: Նրանց բնութագրումը և դատապարտումը: Դինամիկ զարգացման մեջ տրված պատկերների տիպականությունը. ցայտունությունը պատկերների նկարագրության մեջ: Լեզվի արտահայտության, հյութալիության զուգորդումը նրա պարզության հետ:

Մ. Գորկին սոցիալիստական ռեալիզմի հիմնադիր և խոշորագույն ներկայացուցիչ: Մ. Գորկու գեղարվեստական ստեղծագործական մեթոդի հիմնական գծերը. խորը գեղափարականությունը, հումանիզմը, նրա ստեղծագործության կուսակցականությունը և ժողովրդականությունը, յերկասիրությունների փիլիսոփայական-քաղաքական հագեցվածությունը, պատկերների խորությունը և տիպականությունը: Գորկին և ֆոլկլորը: Գորկու աշխատանքը խոսքի վրա: Գորկին՝ խմբագիր: Գորկին և խորհրդային գրականությունը: Մ. Գորկու ստեղծագործական փորձերի նշանակությունը խորհրդային գրողների համար: Գորկին՝ քննադատ: Գորկին՝ համար:

Մ. Գորկու պայքարը նոր սոցիալիստական մարդու համար: Պայքար հանուն սոցիալիստական կուտարայի, ընդդեմ իմպերիալիստական բարբարոսության և իմպերիալիստական պատե-

րագմի («Յեթե թշնամին անձնատուր չի լինում՝ նրան՝ վոշնչացնում են»; «Կուլտուրաների մասին», «Նոր մարդու մասին»):

Գորդին և խորհրդային թատրոնը:

Ա. Մ. Գորկու սպանումը իմպերիալիստական ագենտների ձեռքով:

Գորկու մեծ հեղինակության ընդունումը ժամանակակից մարդկության ամբողջ առաջադիմական մասի, առաջավոր կուտուրայի և արվեստի լավագույն ներկայացուցիչների կողմից: Խորհրդային մեծ զրոյ Մ. Գորկու ստեղծագործության համաշխարհային նշանակությունը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Պառավ իգերգիւը

2. Կոնովալով

3. Հատակում

4. Մայրը

5. Արտամոնովների գործը:

2. Վ. Մայակովսկի (5 ժամ): Մայակովսկին վորպես «մեր խորհրդային եպոխայի լավագույն և ամենատաղանդավոր պոետը» (ՍՏԱԼԻՆ):

Մայակովսկու կենսագրությունը:

Մայակովսկու վաղ շրջանի ստեղծագործությունը. նրա բողոքն ու ծաղրը տիրող բուրժուական կարգերի դեմ: Մայակովսկու բմբոստացումը իմպերիալիստական պատերազմի դեմ և կոչ դեպի հեղափոխությունը. «Վողնաշարի ֆլեյտան» և «Պատերազմ ու խաղաղություն» պոեմները:

Հեղափոխության կանխազգացումը համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին: Ճնշված ու տանջված մարդու թեման Մայակովսկու այդ շրջանի ստեղծագործության մեջ. Մայակովսկու պայքարը բուրժուական-ազգայնական գրականության դեմ:

Ընկեր ՍՏԱԼԻՆը Մայակովսկու մասին, «Մայակովսկին յեկել ե ու մնում ե խորհրդային եպոխայի լավագույն և ամենատաղանդավոր պոետը»:

Վ. Մայակովսկու ստեղծագործական ուղին Հոկտեմբերից հետո: Մայակովսկու անվերապահ անցումը սոցիալիստական հեղափոխության կողմը: Մայակովսկու հեղափոխական լիրիկան,

նրա ստեղծագործության խոշոր դերը քաղաքացիական կոհվների և խորհրդային իշխանության առաջին տարիներում («Բոստայի պլակատները», «Զախ մարշ»-ը, «150000000»-ը, «Ժողովատրաքները», «Միստերիա բուֆ»-ը): Լենինի կարծիքը Մայակովսկու այդ շրջանի ստեղծագործության մասին: Սոցիալիստական հայրենիքի և խորհրդային հայրենասիրության թեման Մայակովսկու ստեղծագործության մեջ («Բանաստեղծություն խորհրդային պատրուտի մասին»): Մայակովսկու սատիրան:

Խորհրդային իշխանության թշնամիների և քաղենության գիմակաղեծումը Մայակովսկու յերկերում («Յերկըոտը», «Պոմպադուրը»):

Մայակովսկին վորպես հեղափոխության տրիբուն և պրապագանդիստ: Հանձարեղ առաջնորդների հերոսական պայքարի լավագույն պատկերումը «Լենին» պոեմում: Մայակովսկին վորպես մեծ ռեալիստ, նրա պատկերած յերկութիւների կոնկրետությունը, տիպականությունը: Մայակովսկու լեզվի պարզությունը և ժողովրդայնությունը:

Մայակովսկու պոեզիան և սոցիալիստական ռեալիզմը: Վերացական հիպերբոլիզմի հաղթահարումը բանաստեղծի կողմից:

Մայակովսկու ստեղծագործության հեղափոխական բանաստեղծական նովատորությունը և ժողովրդայնությունը:

Մայակովսկու պոեզիայի ստեղծագործական պրիորները:

Բառապաշարի հարստացումը Մայակովսկու պոեզիայում: Ռիթմի ազատությունը: Բանաստեղծական կոտրտված տողը և նրա հիմնավորումը Մայակովսկու վոտանավորներում: Խոսակցական հռետորական առողջապահությունը Մայակովսկու վոտանավորներում:

Մայակովսկու ազգեցությունը Խորհրդային Միության ժողովուրդների պոեզիայի և Արեգմուտքի հեղափոխական պոեզիայի վրա: Մայակովսկու պոեզիան և կլասիկ ժառանգությունը. Պուշկին-Նեկրասով-Մայակովսկի:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Լենին, Բանաստեղծություն խորհրդային պատրուտի մասին, Կարմիր բանակային յերգ, Յերկըոտը, Լավ ե, Պատերազմ և խաղաղության, Ժողովատրաքները, Պոմպադուր:

3. Ա. Շոլոխով (5 ժամ): Շոլոխովի կենսագրությունը: Շոլոխովը վորպես հետհոկտեմբերյան ոռուական վիապագրության խոշորագույն դեմքերից մեկը: Իմապերիալիստական պատերազմի և քաղաքացիական կոկվների պատկերումը Շոլոխովի ստեղծագործունների մեջ: Բուրժուական-կալվածատիրական հասարակարդի և իմապերիալիստական պատերազմի քննադատությունը «Խոպաղական» վեպում: Աշխատավոր կազակության անցումը խորհրդացին իշխանության կողմը նույն վեպում: Գրիգորի Մելեխովի կերպարը՝ Կազակության դասակարգացին հակամարտությունների ճիշտ լուսաբանումն այդ վեպում: Գյուղի կոլեկտիվացման համար մղվող պայքարի պատկերումը Շոլոխովի «Հերկած խոպան» վեպում: Բոլշևիկների կուսակցության ղեկավար և կազմակերպիչ դերի ցուցադրումը նույն վեպում: Դավիդովի, Նագունովի, Ռազմյուտնովի տիպերի վերլուծումը: Ընկ. ԱՏԱԼԻՆԻ դերը ինչպես ե ցուց տրված «Հերկած խոպան»-ում: Աշխատավոր գուղացու վերափոխումը և կոլտնտեսության հաղթանակը Շոլոխովի վեպում: Ռազմյունտովի, Լյուբիշկինի, Ուշակովի տիպերը: Դասակարգացին թշնամու պատկերը Շոլոխովի վեպում: (Ոստրովսի, Բորոդին և այլն):

Կոլտնտեսական գյուղացիության սոցիալիստական վերադաստիրակության պրոցեսի պատկերումը նույն վեպում: Վեպի կոմպոզիցիայի առանձնահատկությունը, պելզաժը վեպում: Պատկերների տիպականությունը, բնավորությունների խտացումը, յումորը «Հերկած խոպան»-ում: Շոլոխովի ստեղծագործության գարգացումը՝ խորհրդացին գրականության ժողովրդացումը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Հերկած խոպան:

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

17. Պավլո Տիշինա (1 ժամ).— Տիշինայի կենսագրությունը: Տիշինայի նախահեղափոխական շրջանի ստեղծագործության սիմվոլիստական տարրերը և դրանց հաղթահարումը Տիշինայի հետհոկտեմբերյան ոռուական վիապագրության խոշորագույն դեմքերից մեջ: Բաղաքացիական կովի մոտիվները և խորհրդագործության մեջ: Քաղաքացիական կովի մոտիվները և խորհրդացին Ուկրաինայի յերջանիկ ապագայի գովերգը Տիշինայի «Արևացին նրբասրինդներ» ժողովածույի մեջ՝ 1918 թվին և «Գութան» ժողովածույի մեջ՝ 1920 թվին: Տիշինայի գաղափարական ստեղծագործական հետագա գարգացումը. նրա ընդհուպ մոտեցումը պրոլետարիատին և նրա կուսակցությանը:

Հինայի՝ դեմոկրատական տենդենցների կողմից: Ժողովրդական ստեղծագործության ոգտագործումը Տիշինայի այդ շրջանի ստեղծագործության մեջ: Քաղաքացիական կովի մոտիվները և խորհրդացին Ուկրաինայի յերջանիկ ապագայի գովերգը Տիշինայի «Արևացին նրբասրինդներ» ժողովածույի մեջ՝ 1918 թվին և «Գութան» ժողովածույի մեջ՝ 1920 թվին: Տիշինայի գաղափարական ստեղծագործական հետագա գարգացումը. նրա ընդհուպ մոտեցումը պրոլետարիատին և նրա կուսակցությանը:

Բոլշևիկների կուսակցության և նրա անձնազո՞հ մարտիկների պատկերումը Տիշինայի բանաստեղծություններում ու պոեմներում: Տիշինան վորպես մասսայական-ժողովութական յերգի վարպետ:

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

18. Մաշաշվիլի (1 ժամ).— Մաշաշվիլու կենսագրությունը: Մաշաշվիլին վորպես Վրաստանի պրոլետարական գրականության լավագույն ներկայացուցիչներից մեկը: Աշխատանքի ազատագրման գովերգը Մաշաշվիլու բանաստեղծություններում («Ուրմուլի»): Խորհրդացին Վրաստանի գովերգը Մաշաշվիլու բանաստեղծություններում («Խորհրդացին Հայրենիք»):

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Խորհրդացին Հայրենիք
2. Լայթուրի կոմյերիտուէին

ԱԴՐԵԶԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԱԴՐԵԶԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

19. Ս. Վուրդուն (1 ժամ).— Վուրդունի կենսագրությունը: Վուրդունը վորպես Ադրեզանի խորհրդացին պոեզիայի լավագույն ներկայացուցիչներից մեկը: Վուրդունը վորպես քաղաքական պոեզիայի ներկայացուցիչ: Սոցիալիստական շինարարության վեպում վուրդունը պատկերված է որպես ապագայի առաջնահարումը. նրա ընդհուպ մոտեցումը պրոլետարիատին և նրա կուսակցությանը:

Թյան և կուսակցության մեծ առաջնորդ՝ ընկ. Ստալինի պատկերումը Վորդունի բանաստեղծություններում («Ստալին», «Յերգ յերշանկության»): Կովկասի ժողովուրդների յեղբայրության գովերքը Վորդունի բանաստեղծություններում («Կովկասը»):

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Յերգ յերշանկության
2. Կովկաս

ԲԵԼՈՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԲԵԼՈՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

20. Յանկա Կուպալա (1 ժամ): Կուպալայի կենսագրությունը: Գյուղացիության ծանր լիճակի նկարագրությունը Կուպալայի նախահոկան բերյան շրջանի բանաստեղծություններում: Խորհրդային հայրենասիրությունը Կուպալայի բանաստեղծություններում:

Անցյալ Պոլեսյելի խավար կյանքի և ներկայիս Բելոռուսիայի սոցիալիստական շինարարության հակադրությունը Կուպալայի «Դրիսա գետի վրա» պոեմում:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Յերկու բարդին
2. Բելոռուսներ

21. ԽՍՀՄ Ժողովուրդների ստեղծագործությունը (3 ժամ): Ժողովրդական ստեղծագործության զարգացումը ԽՍՀՄ-ում: Ժողովրդական յերգիների (Ս. Ստալին, Զամբուլ, Սեփո և այլն) ստեղծագործությունները Լենինի և ՍՏԱԼԻՆի մասին: Խորհրդային հայկական ֆոլկլորը:

Նրա թեմատիկան. Գովք-ներբող Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության, Խորհրդային իշխանության, քաղաքացիական կոփլների, Խորհրդային հայրենիքի ու նրա անվանի հերոսների, Կարմիր բանակի, բոլշևիկյան կուսակցության, նրա առաջնորդների ու ղեկավարների (Լենին, Ստալին, Կիրով, Ռոզոնիկիձե, Միկոյան) մասին: Սոցիալիստական շինարարու-

թյան, կոլտնտեսային կյանքի, Ստալինյան Սահմանադրության, Խորհրդային հայրենիքի պաշտպանության, կոմսոմոլի կյանքի ու աշխատանքի, կողազարդական ժողովուրդների յեղբայրության և այլ թեմաները խորհրդային ֆոլկլորում:

Կովառուրական հեղափոխության հաջողությունների, աշխատավորների հասարակական-քաղաքական գիտակցության աճման, նրանց կողմից սոցիալիզմի ու կոմոնիզմի գաղափարների խորը յուրացման արտացոլումը ժողովրդական ստեղծագործության մեջ: Խորհրդային ֆոլկլորում ժողովրդի ու կոմոնիզմի միասնության, մեծ բարեկամության» արտացոլումը, վորպես «ժողովրդների մեծ բարեկամության» արտացոլումը, վորպես լենինի-ՍՏԱԼԻՆի կուսակցության ազգային քաղաքականության արդյունքը:

Ֆոլկլորի ժանրերը. յերգեր, ձոներ, զրուցներ— հեքիաթներ, եպոս: «Լենին փաշա» ժողովրդական եպոսը և նրա գրական մշակման փորձերը (2. Շիրազի «Լենին դյուցազնի կոիվը» և այլն):

22. Գրականուրյան տեսության համառոտ ամփոփիչ դասընթաց (10 ժամ):

1. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՓԵՍ ԻՌԵՌ ԼՈԳԻԱ

Իդեոլոգիան վորպես կյանքի արտացոլումը մարդկանց գիտակցության մեջ: Իդեոլոգիայի հասարակական, պատմական և դասակարգային բնույթը: Կյանքն արտացոլող գաղափարների նշանակությունը հասարակության արտադրական, հասարակական և քաղաքական պրակտիկ գործունեյության համար:

Կյանքն ալլանդակող, հասարակությանը վնաս հասցնող կեղծ գաղափարների հնարավորությունը: Գիտական, փիլիսոփայական և գեղարվեստական մեծ յերկասիրությունների ճշմարտականությունը, ճշմարտության հայտնաբերումը և վերջինիս անհրաժեշտությունը հասարակության զարգացման համար, ժողովրդի շահերն արտահայտող առաջավոր դասակարգերի համար:

Հակասության հնարավորություն գրողների իդեական մտահղացման, համոզմունքների և նրանց յերկերում կյանքի ճշմարտացի արտացոլման միջև: Կյանքը ճշմարտացիությամբ ու խորությամբ արտացոլող յերկերի ժողովրդայնությունը:

2. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿԱԲԻ- ԹՅՈՒՆԵՐԸ

Գեղարվեստական գրականությունը (պոեզիան), վորպես բա-
նահյուսական արվեստ: Արվեստի առանձնահատկությունները, վո-
րոնք տարբերում են նրան փիլիսոփայությունից և գիտությունից:
Կյանքի արտացոլման պատկերավորությունը, գեղարվեստա-
կան կերպարների ընդհանուր բնույթը և կերպարների հուզականու-
թյունը (թուականություն), վորն արտացոլում է գեղարվեստագետի
գաղափարական վերաբերմունքը հանդեպ կյանքը: Գեղարվեստա-
կան կերպարների (ոբրազների) կոնկրետությունը, անհատականու-
թյունը, վորը տալիս ե ակնառու շոշափելի պատկերացում կյանքի
մասին: Գեղարվեստական մտահղացման ինդիվիդուալ գծերը և
կերպարների մանրամասների նշանակությունը, վոր հնարավոր ե
դարձնում՝ ա) ընդգծել կյանքի տիպիկական առանձնահատկու-
թյունները, բ) արտահայտել գրողի գաղափարական վերաբե-
րմունքը նրանց նկատմամբ:

Գեղարվեստական կերպարների իմացական և դաստիարակ-
չական նշանակությունը: Խոսքը, վորպես միջոց բանաստեղծական
կերպարների ստեղծման՝ տարբերելով այն նկարչությունից, քան-
դակագործությունից ու յերաժշտությունից և այլն:

3. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻԴԵԱՆ

Ստեղծագործության մեջ արտացոլված կյանքի փաստերը և
յերևույթները, վորպես հիմք նրա (ստեղծագործության) իդեական
բովանդակության, նրա թեմատիկայի:

Կյանքի արտացոլման բարդությունը գեղարվեստական պատ-
կերներում — սրանց մեջ կլանքի վորոշ կողմերի ընդգծումը,
կողմեր, վորոնք առանձնապես շահագրգոռում են գրողին, նրա
համար հանդիսանալով գաղափարական պրոբլեմներ:

Գաղափարական պրոբլեմների լուծումը կյանքի՝ գրողին շա-
հագրգոռ կողմերի եմոցիոնալ գնահատման ճանապարհով:

Կյանքի եմոցիոնալ գնահատման հիմնական մոմենտները.
Նրա գաղափարական հաստատումը և գաղափարական բացասակար-
ությունը միասնությունը:

Կյանքի նկատմամբ արտահայտված գաղափարական վերա-

բերմունքի գրական տեսակները, — յումոր և սատիրա, կոմիզմ և
յերպիծանք, սենտիմենտալիզմ, լումանտիկա և այլն:

Գեղարվեստական յերկի իդեան վորպես թեմատիկայի, գա-
ղափարական պրոբլեմի և կյանքի հանդեպ ունեցած գաղափարա-
կան վերաբերմունքի ամբողջություն — միասնություն:

4. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Յերկի գործող անձանց կերպարները. նրանց սոցիալական
խարակտերների տիպիկականությունը. խարակտերը բնորոշող
գծերի առանձնացումը տիպ-կերպարի մեջ, գծեր, վորոնք կազ-
մում են հերոսի կենսական կողմերը:

Տվյալ յերկի հերոսների սոցիալական խարակտերների կապը՝
իրենց իրական հասարակական հարաբերությունների հետ՝ ար-
տացոլված նույն յերկում:

Յերկրորդգական դեմքերի կերպարները, վորոնք բնութագրում
են գխավոր հերոսներին, պատճառաբանում նրանց վարմունքը:
Բնության պատկերները (պեյզայ) և շրջապատող պարագաներ,
նրանց դերը՝ հերոսների խարակտերների բացահայտման և գնա-
հատման գործում:

5. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ — ԵՊՈՍ, ՔՆԱՐԵՐԳՈՒ- ԹՅՈՒՆ ՅԵՎ ԴՐԱՄԱ

Եպոսի առանձնահատկությունները. — իրական կյանքի ընդ-
հանրացումներ կերպարներում, գործողության գարգացումը,
վորը բացահայտում ե հերոսների բնութագիրը, գրողի գաղափա-
րական վերաբերմունքի արտահայտությունն առավելապես թեմա-
տիկայի մանրամասների և կերպարների միջոցով:

Բնարեգության (լիրիկայի) առանձնահատկությունները. —

Կյանքի ընդհանրացումները բանաստեղծի մտքերի և տրամա-
դրությունների տիպականացման (տիպիզացիա) ձանապարհով, ստեղ-
ծագործության նկարագրական բնույթը, գաղափարական գնահա-
տումները՝ արտահայտված առավելապես վոճական մանրամաս-
ների միջոցով:

Լիրիկո-եպիկական ստեղծագործություններ:

Դրամայի մոտիկությունը եպոսին՝ տիպականացման սկզբուն-

բով: Դրաման, վորպես պոեզիայի և բեմական գործողության համադրում (սինթեզ), նրա կոմպոզիցիայի դիալոգիկ բնույթը: Բանաստեղծական տեսակների ծագումը:

6. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ

Ժողովրդական հեքիաթը վորպես եպոսի հնագույն ձև, նրա տեսակները՝ առասպել, լեգենդա, կենդանական հեքիաթ, առակ, կախարդական հեքիաթ: Հերոսական եպոսը, վորպես պատմվածք ժողովրդի զարգացման մասին, ազգային—պատմական դեպքերի և ընդհարումների մասին: Վեպը (ռոման), վորպես մեծ պատմվածք առանձին անհատների զարգացման մասին: Նովելլան, վորպես այդպիսի զարգացման եպիզոդ: Բարքանկարագրական (правоописательная) պատմվածքը, վորպես հասարակության գրության, նրա կացութաձեվերի (չոլադ), նրա բարիքների և կենցաղի պատկերում:

Պոեմը և նրա ժանրերը: Ոչերկը և նրա տեսակները:

Դրամատիկական ժանրեր.— վողբերդություն (tragédia), վորպես հերոսի անհատական շահերի և հասարակական կամ բնական որենքների միջև յեղած հակասությունների պատկերում: Դրաման վորպես առանձին անհատների, դասակարգերի և ժողովրդների ընդհարումների բեկման պատկերում: Կոմեդիան, վորպես առավելապես մերկացնող-սատիրական բնույթի պատկերացում՝ հասարակության դրության, նրա բարիքերի ու կենցաղի: Խնտրիգայի դերը կոմեդիայում: Ֆարսը, վորպելը, վորպես կոմեդիայի տեսակներ:

Հիմնական լիրիկական ժանրեր.— ժողովրդական յերգ և նրա տեսակները, ներբող, յեղերերություն (ելեգիա), եպիգրամմա, պեյզաժային լիրիկա: Բալլագա:

7. ԳՐԱԿԱՆ ՌԻԴԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դրական մեծ և փոքր ուղղությունների ընդհանուր բնույթագրում:

Կլասիցիզմ (դասականություն). նրա առանձնահատկությունները.— անտիկ գրականության ընդորինակումը, հետեւումն պատրաստի ստեղծագործական կանոնների: Դատողականությունը

և սիեմատիզմը կերպարների ստեղծման ու գործողությունների գարգացման մեջ:

Ռոմանտիզմ, նրա առանձնահատկությունները.— հետաքրքրություն դեպի միջնադարը, դեպի ժողովրդական կյանքն պոեզիան, դեպի եկողության, ստեղծագործելու ազատությունը, բանաստեղծի վերամբարձ տրամադրությունների գերակշռումը կերպարների ստեղծման և գործողությունների զարգացման մեջ:

Ռեալիզմ. նրա առանձնահատկությունները.— գերակշռող հետաքրքրություն դեպի ժամանակակից հասարակական կյանքը, հավատարմություն իրականության նկատմամբ՝ բնավորությունների և գործողությունների զարգացման մեջ, կոնֆլիկտների լուծման խնդրում:

Բուրժուական եպոսայի ռեալիզմի առանձնահատկությունները: Նրա քննադատական բնույթը, հակասություն հեղինակի հայցքների ու մտաշղացումների և նրա կատարած՝ կյանքի ճշմարտացի ընդհանրացումների միջև:

Սոցիալիստական ռեալիզմ. — նրա առանձնահատկությունները: Կառուցվող սոցիալիզմի իրականության հաստատումը, հեղափոխական ոռմանտիկան իրեն այդ հաստատման մոմենտ, ստեղծագործության պատմական նշանակության գիտակցականությունը՝ դիմանելեկտիկական-մատերիալիստական աշխարհայացքի հիման վրա:

8. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՅԵՐԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԶԵՎԸ

Գեղարվեստական յերկի բովանդակությունը, վորպես իդեա, վորը պատկերավոր կերպով արտացոլում և զնահատում է կյանքը:

Գեղարվեստական յերկի ձևը, վորպես բանահյուսական և կոմպոզիցիոն միջոց, վորի ոգնությամբ արտահայտվում է բովանդակությունը: Զեվի և բովանդակության միասնությունը և բովանդակության գերաշող նշանակությունը, վորն իրենով միաժամանակ վորոշում է ձևը:

Զեվի և բովանդակության հակասության հնարավորությունները:

Զեվի հիմնական կոմերը.— թեմատիկա, կոմպոզիցիա և

վոճ: թեմատիկայի ելեմենտները.— թեմա, մոտիվ, յերկի սյուստեն, յերկի կոլլիգիան և ինտրիգը, նրանց հանգույցը, կումինացիան, լուծումը (развяжка):

Կոմպոզիցիայի ելեմենտները.— Հերոսների եքսպոզիցիա, նրանց բնութագրելու միջոցները, նրանց գործողության պատճառքանումը (мотивировка), սյուժեյի մասերի տեղադրություն, հեղինակային շեղումներ:

Վոճի ելեմենտները.— սյուժեյի պատկերավորությունը, (կերպարանավորումը, անձնավորումը, սիմվոլներ, ալեգորիա, հիպերբոլա), խոսքի պատկերավորությունը (մետափորա, մետոնիմիա, իրոնիա), բանաստեղծական սինտակիս (եպիտետ, ինվերսիա): Բանաստեղծական խոսքի սիթմականությունը (ритмичность):

Չափածո և արձակ, վոտանավորի շարահյուսման հիմնական միջոցները, հիմնական չափերը.— վոտանավորի հանգը, սիթմը և նրա տեսակները. վոտանավորի տունը և նրա տարրեր տեսակները:

9. ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պոեզիան վորպես ժողովրդի և վողջ մարդկության պատմության պատկերավոր արտացոլում. առանձին պատմական ժամանակաշրջանները բնութագրող մեծագույն գեղարվեստական յերկերը, վորպես գրական ժառանգություն: Գաղափարական պրոբլեմների կրկնության հնարավորությունը պատմական տարբեր եպուստական վորպես:

Անցյալի գեղարվեստական յերկերի հասարակական նշանակությունը ներկայի համար:

ԲԵՐԱՆԱՑԻ ՍՈՎՈՐԵԼ ՀԵՏԵՎՑԱԼ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ (10-րդ դասարան)

1. Մ. Գորկի.— Պավելի ճառը «Մայրը» վեպից, Սատինի մոնոլոգը մասին «Հատակում» պիեսից:

2. Հակոբ Հակոբյան.— «Հեղափոխություն», «Քաղաքը», «Պրոլետարիատին»:

3. Ն. Զարյան. «Ստալին» բանաստեղծությունը, «Դյուցագործիրք» պոեմի նախերգանքը, «Բուշանի քարափը» պոեմից հատվածներ, «Յերկու հանճարեղ գլուխ»:

4. Վ. Մայակովսկի. Հատված «Լենին» պոեմից, «Կարմիր բանակային յերգ», «Յերկուտը»:

5. Մաշաշվիլի.— «Խորհրդացին հայրենիք», «Լալթուրի կոմիերիտուցին»:

6. Ս. Վուրդուն. «Յերգ յերշանկության», «Կովկաս»:

7. Յա. Կուպալա.— «Բելոռուսները», «Յերկու բարդի»:

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԲՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Մ. Գորկի.— «Պիեսներ», «Ծառայության մեջ», «Մայրը»:

2. Հ. Հակոբյան.— «Յերկեր»:

3. Արագի.— Յերկեր:

4. Դ. Դեմիրեյան.— Յերկեր:

5. Ստ. Զորյան.— «Մի կյանքի պատմություն», «Գրադարանի աղջիկը», «Յանկապատը»:

6. Ն. Զարյան.— «Հացավան», «Բուշանի քարափը», «Ամրոց», «Դյուցագնագիրը»— (տպագ «Խորհ. գրականություն» ժուռնալում, 1940 թ.) և «Հավերժական գագաթներ» ժողովածում:

7. Գ. Սարյան.— «Միջորե»:

8. Սիրաս.— «Կյանքի կարուտը», «Զգրված որենք»:

9. «Լենինը հայկական ֆոլկորում»:

10. «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ»:

11. Հովի. Շիրազ.— «Մեր յերշանկությունը», «Արևի յերկիր», «Մոկաց Միրզա», «Յերգ Հայաստանի» ժողովածում:

12. Հր. Քոչար.— «Ոգոն Վասպուրի ճանապարհորդությունը»:

13. Քր. Թափալյան.— «Կյանքի արշալույս»:

14. Սարմեն.— «Յերգաստան» ժողովածում:

15. Սողոմոն Տարոնցի.— «Դարերի լեգենդ», «Բանաստեղծություններ»:

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Սաբիր.— «Բանաստեղծություններ»:

2. Արդուֆաղի.— «Մշուշապատ Թավիզը»:

3. Ս. Ստալինի.— «Բանաստեղծություններ»:

4. Ջ. Զամբուլ.— «Բանաստեղծություններ և պոեմներ»:

5. Մայակովսկի. — «Հենին», «Լավ ե», «Բանաստեղծություն».

६८१

6. Ֆուրմանվ.— «Խռովովթյուն»:
 7. Շոլոխով.— «Հերկած խոպան»:
 8. Ա. Տոլստոյ.— «Հացը», «Պետրոս առաջինը»:
 9. Ն. Ռամբակին.— «Ինչպես եր կոփում պողպատը», «Փռ-

Թորկածիննելո»:

10. Սերաֆիմովիչ. — «Տերկաթեն հեղեղը»;
 11. Ն. Պրիբոյ. — «Յուսիմա»;
 12. Մ. Շահինյան. — «Հիդրոցենտրալ»;
 13. Ի. Ճավիճավածե. — «Բանաստեղծություններ»;
 14. Ռուսապելի. — «Վագրենավորը»;
 15. Շեխսպիր. — «Համլետ», «Ոթելո», «Վենետիկի վաճառական».

Կանոն

16. Ֆլորեր.— «Տիկին Բովարիի»:
 17. Բալզակ.— «Հայր Գորիո»:
 18. Պ. Մերիմե.— «Կարմէն»:
 19. Ռ. Ռուան.— «Ժան Քրիստոֆ»:
 20. Ի. Բեխեր.— «Լուիզիտ»:
 21. Յ. Հաջեկ.— «Քաջ գինվոր Շվեյկի արկածները»:



J. 3. 706. *Ammonifera* 714. *Abundance* 2.000

Հայկական ՍՍՌ Փողկոմսովիտիք կից
երեկոն և ամսագրերի տպարան, Երևան

«Ազգային գրադարան»



NL0379130

61.705

ԳԻԱԸ 2 Ռ. 70 Կ.

34445

ПРОГРАММЫ СРЕДНЕЙ ШКОЛЫ
Литературное чтение и литература
для V-VII и VIII-X классов
Пресиздат—Ереван—1940 г.